





9(20)
L-38

1. 1. 0

16975 h. p.
A. 1. 1.

ԱԷՊ ԹԷ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ղարաբաղի անցեալը Ապրիս Ռէկնազարեանցի
գրչի տակ)



ՇՈՒՇԻ

Տպարան Հայոց Հոգեւոր Տեսչութեան

1887

3 n.



~~3898~~

~~17919~~



Дозволено цензурою 30 ноября 1886 г. Тифлисъ.
Тисог. Шушин. Армян. Духовн. Вѣдомства.

ՎԷՊ ԹԷ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



„ԴՍԱՏՆԻՔ ԴԱՐԱԲԱՂԻ“, Հեղինակութիւն Ապրիս
Բէկնազարեանցի: Ա. Պետերբուրգ, 1886 թ.:

Ճնասակար միանգամայն ծաղրելի է
նաեւ զգուելի պարծենկոտութեամբ պատ-
մութիւնը փծուն զովեստներով փայլուն
երեւեցուցանել ջանալ: Զիք ինչ որ այն-
պէս նուաստացնէ, դիւցազնական գործոց
անգամ բուն յարկը՝ ինչպէս սին եւ պար-
ծուի վերադիրներ:

Ա. Մ. Գարապետեան (Քննակ. պատմ. Հայ. եր. 2)

Զին Արցախը, կամ Փոքր Սիւնիքը մեր ազ-
գային պատմութեան մէջ մի փոքրիկ անկիւն ու-
նի գրաւած: Ամենահին ժամանակներից այդ նա-
հանգը չի ներկայացրել մի որեւէ տեղական պատ-
մական անցքի հանդիսարան, և եթէ մտցրել է իր
անունը պատմութեան մէջ, դրանով պարտական է
նրան, որ ինքն էլ մի հայաբնակ երկիր է եղել և

երբեմն յիշեցնել է տուել իր անունը իր հսկայ լեռ-
ներով, իր թանձր ծմակներով: Արցախը չի տուել
մի մեծագործ իշխան, կամ մի քաջարի զօրավունդ,
որ կարողանար մի մեծ համբաւ հանել: Նա չունի
իր յատուկ պատմութիւնը: Ծիշտ է, IX դարում
ապրող Մովսէս Ասղականտուացին գրել է Աղու-
անից պատմութիւնը, բայց Աղուանից պատմու-
թիւն չի նշանակում Արցախի պատմութիւն, ու-
րովհետեւ այդ դեռ ոչ բոլորովին ճանաչուած և
հետազօտած հին տէրութեան մի մասն է կազմել
Արցախը. և այդ տէրութեան միակ պատմագիրն
էլ շատ քան չունի պատմելու բուն Արցախի մա-
սին: Սկզբից մինչև մեղոնից ոչ այնքան հեռու մի
ժամանակ այդ երկիրը ծածկուած է անյայտու-
թեան մէջ:

Մեր պատմութեան լծողած այդ պակասու-
թիւնը լցուցանել յանկապող մարդը ակամայ դի-
մում է ենթադրութիւններին: Ուշագրութիւն դարձ-
նելով երկրի աշխարհագրական դիրքի, բնութեան
վրայ, ի նկատի առնելով այն հանդամանքը, որ Ար-
ցախը հայ ազգին չի տուել մի դիտնական կրօնա-
ւոր, մի պատմաբան, մի քաջամարտիկ հերոս, այլ
և չի ունեցիլ մի շատ թե՛ քիչ նշանաւոր քաղաք,
մտածողը հակվում է, դէպի այն միտքը, որ այդ
վայրենի, ժայռոտ և անստուապաա երկիրը չէր էլ
կարող այնքան մեծ դեր կատարել պատմութեան

մէջ, մի կողմից որովհետեւ իր անմատչելի դիւքը ժողովրդի քաղաքական և հասարակական կեանքի մէջ նկատելի յառաջագիմութիւն չէր տրամադրում, միւս կողմից շնորհիւ իր սակաւաթիւ լիոնցի ազգաբնակութեան, որի սակաւաթիւ լինելը, որի կոշտ ու առանձնասէր բնաւորութիւնը հաստատում է նոյն իսկ բնութիւնը, երկրի անյարմար կազմուածքը: Նա ներկայանում է իբրեւ մի կղզեացած երկիր, ուր թերեւս նշանաւոր անցքեր ևս տեղի ունեցած լինին, բայց այդ անցքերը մեծ արձագանք չին գտել հայ աշխարհում: Նրեի այս է պատճառը, որ Արցախի անցեալ պատմութեան համար շատ նիւթ չունինք:

Նրբեմն երբեմն մեր պատմագիրները տեղեկութիւններ են տալիս այդ խորհրդաւոր աշխարհի մասին: Այսպէս, Վիրապոսի պատմածին նայած, XIII դարում թաթարների արշաւանքները աւերում են Աղուանից ամբողջ երկիրը և մասամբ Արցախը: Սրի և գերութեան մատնուած ժողովրդի մի մասը, ինչպէս և միշտ, կարողանում է ազատուիլ թագնուելով անմատչելի անտառներում: — Բայց յետոյ դարձեալ ամեն ինչ կուլ է գնում անթափանցելի անյայտութեան մէջ: Եւ այսպէս շարունակվում է մինչև անցեալ դարու սկիզբը, երբ Արցախում յանկարծ տեսնում ենք բացի ի վաղուց յայտնի Ջալալեանների իշխանութիւնից՝ նաև չորս ուրիշ

իշխողներ, որոնք գործում են իբրև ժողովրդի պետեր, իբրև սեփականատէրեր:

Արդեօք ինչ տեսակ դրութեան մէջ էր Ղարաբաղի ժողովուրդը այդ ժամանակները: Մեր նորագոյն պատմութիւնները, հետեւելով հնագոյններին, նկարագրում են միմիայն պատերազմական գործողութիւններ, քաղաքական փոփոխութիւններ, մոռանալով ժողովրդի ներքին կեցութեան մասին մի գոնէ սահմանափակ հասկացողութիւն տալ ընթերցողին: Բայց այս զանցառութիւնը համեմատաբար մեծ կորուստ չէ, քանի որ ժամանակը այնքան հեռու չէ մեզանից, որ կարողանար ջնջել հարկաւոր յիշատակները, կամ կերպարանափոխել այն ժողովուրդը, որ այդ ժամանակներից մինչև այսօր ապրում է այդ երկրում: Մեզ հարկաւոր է մի աղօս հասկացողութիւն տալ ընթերցողին:

Ղարաբաղը անցեալ դարու սկիզբներից ներկայանում է մեր առաջ իբրև պարսից տէրութեան մի նահանգ: Բնակչութիւնը ղետեղուած է զիւղերում, որոնք կառավարվում են տանուտէրների միջոցով: Թէ ինչ օրում էր այդ ժողովուրդը, բաւական է միայն մտաբերել այն ժամանակուայ Պարսկաստանը, մոլեռանդ մահմետականութեան այդ հարկու բոյնը, որ ասելի քրիստոնեաներին կառավարելու համար դիտէր միայն հարստահարեր, կեղեքեր պատժել: Մահմետականների սարսափելի

լուծը, կառավարութեան այդ տեսակ սխտեման
 թէև չը կարողանար տարիներէ ընթացքում միան-
 զամայն սպանել ժողովրդի ազգային ողին, բայց
 պիտի պահէր նրան սեղմուած մամուլի մէջ: Թո-
 ղովուրդը պիտի հոգար միայն իր առօրեայ ապ-
 րուստի մասին. ձեռքը անդադար աշխատում էր՝
 ղլուխը ողջ պահելու համար: Շանր հարկահանու-
 թեան, կաշառակերութեան պահանջները դժուար
 կարող էր լծուցանել մի անմշակ ու վայրենի եր-
 կիր. ուստի ժողովուրդը ժամանակի հարկադրան-
 քի տուաջ ճնշուած՝ կրկնապատկած ուժերով պի-
 տի դործէր լուռ ու մունջ, իր ճակատադրի դառ-
 նութիւնը ամօքելու մօքով միայն զբաղուած: Այդ
 վկայում է տկանատես ժամանակակիցներից մէկը,
 ✓ Գանձասարի Նոայի կաթողիկոսը, որի աշխատու-
 թիւնը Պատմութիւն կամ յիշատակ անցից՝ վեր-
 տառութեամբ տպագրուած է Շուշիում 1839 թ.:
 Նրանի տալով այն ժամանակներին, երբ Հայաս-
 տանի վրայ տիրում էին անօրէն բռնակալները, ո-
 րոնք թէև կեղեքում տանում էին, բայց և դոնէ
 ապահով ու խաղաղ էին պահում բնակիչներին ար-
 տաքին թշնամիներից, պատմիչն ասում է. «Քան-
 ղի և ես այսպէս գիտեմ թէ ի հնումն և ի նո-
 րումն սուրբ հարքն որքան ողբք և սուգ զոր ա-
 տացեալ և զրեալ են զայն նախադիտութեամբ՝ վա-
 սըն այսմ ժամանակիս է, և վասն մեր և ոչ իւր-

եանց՝ (տես Յառաջաբան)։ Աւ խեղճապէս երջանկայիշատակ կաթողիկոսը յետոյ այնպիսի սարսափելի բաներ է պատմում պարսից հարստահարութիւնների և հարկահանութեան մասին, որ մարդ կարգալիս հարցնում է ինքն իրան՝ թէ ինչպէս պահվեց այս ժողովուրդը։ Հասկանալի է, որ այս սոսկալի աղէտների մէջ ժողովուրդը հեռով հեռէ պիտի ընկնէր նիւթապէս և բարոյապէս, պիտի մոռանար իր անցեալը և տպագան։ Այսպէս էլ եղաւ։ Այդ ժամանակներից մնացած կալուածազրկը, պաշտօնական թղթերը այժմ զարմանք են պատճառում մեզ։ Մենք տեսնում ենք մի սարսափելի կերպով աղճատած լեզու, լեքը թրքական անհամար բառերով, տեսնում ենք մի շարք անգրագէտ տանուտէրների, զիւղի աւագների, տեսնում ենք այսպիսի անունների, Կարապետ Թորոս օղլի, Մօլլա Մարկոս և այլն։ Բացի դրանից ժողովրդի այն ժամանակուայ հասկացողութիւնը, կրթութիւնը մինչև այժմ մնացել են կոշտ ու կոպիտ բռի դարաբաղդի զիւղացու մէջ, որ յայտնի է ամեն տեղ։ Կարող ենք ասել, որ այդ մտաւոր խաւարը փրկում էր այն ժամանակ համարեա բոլոր Պարսկական Հայաստանում։ Նոյն խի ազդի հին դրականական լեզուն, որ մի ժամանակ այնքան ծաղկած էր, մեր յիշած ժամանակամիջոցում և շատ առաջ խիստ աղճատւած, աղաւաղած էր։ Առաջիկ պատմագիրը, Ար-

բաճամ կրեաացի կաթողիկոսը և յետոյ Արղու-թեան Յովսէփի եպիսկոպոսը և ուրիշ շատերը պարզ ապացոյց են մեզ համար: Այդ տխուր դրութիւնը մի պարզ հետեանք էր ազգի տաղնազալից դրութեան:

Վերելում մենք տաացինք, որ Արցախի պատմութիւնը իր ամպամած գէմքը պաճում է մինչև XVIII դարու սկիզբը: Այդ ժամանակներից յետոյ այնքան առատանում են պատմութեան նիւթերը, որ նրանց մի տեղ ժողովելովը կարելի է մի որոշ եղբակացութեան յանդիլ՝ թէ տիրողների և թէ ժողովրդի կեանքի մասին: Այդ նիւթերը են ժողովրդի աւանդութիւնները, Ռուսաց տէրութեան հետ ունեցած յարաբերութիւնների պաշտօնական արձանագրութիւնները, տկանատեսների պատմածները և այլն: Պէտք է ասել որ Ղարաբաղի այդ ժամանակների պատմութեան վերաբերեալ մենք այժմ համեմատաբար հարուստ գրականութիւն ունինք: Կարծես նախկին անյայտութեան փոխարէն ճակատադիրը պարզեւի է Ղարաբաղին բաղմաթիւ պատմական փաստեր նրա մօտիկ անցեալին վերաբերեալ: Այժմ մենք կարողութիւն կունենանք նրա այդ պատմութիւնը կազմել: Բայց ի՞նչ տեսակ պատմութիւն:

Մենք միտք չունինք նորից բացատրել թէ պատմութիւնը ինչո՞ւ է, անկողմնասէր, արդարադատ, թէ նա պարզ և որոշակի վճիռներ է դնում

իր գործիչների մասին, ուշադրութեան չառնելով նրանց անձնաւորութիւնը, ծագումը, նրանց ղեկավարող համոզմունքը: Եւ պատմութիւնը յարգելի պատկառելի է միայն այն ժամանակ, երբ իբրեւ մի պարզ հայելի ցոլացնում է մարդկանց և ժամանակի պատկերը, երբ նրա ասածները հաւատարմ ևն կացուցանում նոյն իսկ ժամանակը, հանդամանքները, նոյն իսկ գործը: Պատմութեան այդ մեծ նըշանակութիւնը սեպուհ պարտք է դնում տնայտութնապատի վրայ երբէք չը յափշտակուիլ թթու աղբասիրութեամբ, այլ ճիշդ թափել պարզի պատմական ճշմարտութիւնը, թէև այդ ճշմարտութիւնը լինի իր ազգի, իր նախնիքների ամօթալի գործերի յիշատակարան:

Յատուկ Ղարաբաղի պատմութիւնն առաջին անգամ գրել է պ. Բաֆֆին (1882): Չորս տարուց յետոյ լոյս է տեսնում մի ուրիշ պատմութիւն «Պաղտնիք Ղարաբաղի» վերնագրով, որ մեր ներկայ տեսութեան առարկան է:

Ընթերցողին ձանձրութիւն չը պատճառելու համար մենք չենք կրկնել այն բոլոր հանդամանքները, որ վերաբերվում են այդ գործի հեղինակին: Մեր մամուլը երկար խօսել է նրա մասին և արդէն մի պարզ եզրակացութիւն է կազմել: Մենք վերցնում ենք այդ դիրքը իբրև մի պատմութիւն, տեսնենք ինչ զին ունի նա և որքան յարգելի է իբրև մի ականատեսի յիշատակարան:

Գրքի հեղինակը, ինչպէս ասում է Մակար վարդապետ Բարխուդարեանցը, Խնածախ գիւղի բնակիչ Աբրահամ Բէկնաղարեանցի որդի Ապրեան է։ Լայրը այն ժամանակների սուաջնակարգ գործիչն է, իսկ որդին այդ գործերի արձանագրողը։ Մակար վարդապետը իր յառաջարանում թէ հօր և թէ որդու վերաբերմամբ մեծագին զովեոտներ շռայլելով ասում է, թէ Ապրեան շինած պատմութեան բնագիրը Նղիշէի ոճ ունէր և թէ նրա հօր Աբրահամի գրաբարը վատ չէր, այսինքն միջակ էր, չէր կարելի լաւ ասել, բայց և ոչ վատ։ Մի այդպիսի ոճով զբոսած պատմութեան աշխարհիկ լեզուի վերածելու և բնադրի կորստի մասին մեր ափսոսանքը շատ և շատ մեծ կը լինէր, եթէ յետոյ պատմութեան մէջ իսկոյն չը տեսնէինք, որ Ապրեսը քերականութեան տարրական մասերն է միայն սովորելի, օրինակ «անուանց և գերանուանց բոլոր հոլմները, բայերի ամբողջ խոնարհումը, ընդունելութիւնը և այլն» (եր. 17)։ Այո, այդպիսի գիտութեամբ մի մարդ (այն էլ այն ժամանակները) Նղիշէ լինել չէր կարող, ինչպէս տեսնում ենք 140—141 երեսներից. այդտեղ Աբրահամը տեսէք ինչ է ասում որդուն. «Բու բաւական սրագիր ես. հոգ չէ որ զրածներումդ կը լինին սրխալներ. սրբազրեւն հեշտ է»։ Յիշենք, որ Աբրահամի գրաբարը լաւ չէր, վատ էլ չէր, և նա պիտի սրբազրէր Նղիշէի ոճ ունեցող Ապրեանի հեղինակու-

Թիւնը: Խնչպէս հասկանալ այս մէկը — Ուրիշ մի ճար չը կայ, պիտի տեսնե՞ք որ Մակար վարդապետը կամ Նզիշէի ոճը չէ հասկանում, կամ թէ, ինչպէս մի ժամանակ արել էր պ. Գուլամիրեանցը „ Գուլիթ բէկ “ պատմութեան յառաջաբանում, այդ „ Նզիշէի ոճ “ խօսքը մտնել է իր ապրանքը դովաբանելու նպատակով:

Յետոյ նոյն վարդապետն ասում է թէ միւս մելիքների նամակները, որոնք ղետեղուած են զրուքի մէջ, դրուած էին Ղարաբաղի գեղջ կական բարբառով և ոճով, ուստի ինքը թարգմանել է և այդ նամակները: Հաւատարմով միանդամայն, որ այն ժամանակուայ մելիքներն անդամ հասկացողութիւն չը պիտի ունենային կանոնաւոր լեզուի մասին և հարկադրուած պիտի լինէին օգտատուած գեղջ կական բարբառը գործածել թղթի վրայ, մենք այնուամենայնիւ չենք կարող չը յայտնել, որ մեծ յանցանք պիտի համարուի այդպիսի մի նախադասութիւնը: Պատմութեան նիւթերը իրանց խսկական գէմքով ներկայացնելը ամենքի պարտականութիւնն է: Գրականութեան համար գուցէ այնքան հեռաքրքիր չը լինէր այդ նամակների բովանդակութիւնը, որքան ոճը, լեզուն: Դսկական նամակներից կարող էր օգուտ քաղել համ պատմութիւնը, համ լեզուադատութիւնը, համ ժողովրդագրութիւնը: Տեսէ՛ք թէ արդիւնաշատ հայր Ալիշանը որպիսի խնամքով է

ամփոփում իր հիանալի աշխատութիւնների մէջ պատմութեան փոքրիկ նշխարները, պահելով լեզուն, ոճը նոյնութեամբ: Հոգ չէ, եթէ շատերը չէին հասկանալ Ղարաբաղի լեզուն, պատմութիւն ուսումնասիրողի համար անարատ մնացած նիւթը այնքան մեծ նշանակութիւն ունի, որ հաւաքողները համարձակվում են անգամ գոհել ընթերցողների մեծամասնութեան շահերը: Բայց գուցէ Մակար վարդապետը երեւակայել է թէ «Գաղտնիք»-ը Ղարաբաղի վերջացրած անվիճելի պատմութիւնն է, ուստի այս կերպով է վարուել այդ խիստ հետաքրքիր նամակների հետ: Անցնենք պատմութեանը:

«Գաղտնիք»-ը Ղարաբաղի մելիքութիւնների պատմութիւնն է: Մինչև այժմ վիճելի հարց է թէ ինչ էին այդ մելիքները, ինչ տեսակ իշխանութիւն ունէին և ինչ անունով էին իշխում:

Պատմութիւնից յայտնի է, որ պարսկական բոլոր հայաբնակ դաւառներում գոյութիւն ունեցել են մելիքներ: Հ. Չամչեանը (Պատ. Հատ. Գ եր. 837) «մելիք» բացատրում է «գործակալ տեղւոյն» խօսքերով: Թէ այդ մելիքները երկրի իսկական կառավարիչները չէին, գոնէ Նազիր շահի ժամանակ, երևում է նոյն պատմագրի խօսքերից (եր. 815). «Խօթն վերակացուք իշխէին յիւրաքանչիւր դաւառքս և կոչէին այնք. որոց կէսք ի պարսից էին, և կէսք ի հայոց. առաջինն նախարար պարսիկ, այն

է, խան՝ և այլն: Կնչպէս երևում է, այդ խաներին էին ճանաչում պարսից շահերը իբրև երկրի կառավարիչ, նրանցից էին ստանում հարկերը, նրանցով էին յայտնում իրանց կամքը, զօրք ժողովում: Բայց Ղարաբաղում, ինչպէս յայտնվում է, այդ կարգը չը պիտի եղած լինէր: Շահերը մի յայտնի վեճակի համար հաստատում էին մելիքներ, որոնք կառավարում էին իրանց ստորադրեալներին. բայց հարկահանութիւնը, ինչպէս պատմում է Նսայի կաթողիկոսը, պարսից ձեռքով էր կատարվում նոյն այդ մելիքների ժամանակ: Սյատեղից երևում է, որ մելիքները անկախ իշխողներ չէին, բառի բուն նշանակութեամբ: Սյդ ցոյց է տալիս և այն, որ շահերը ամեն ժամանակ խառնվում էին երկրի ներքին գործերի մէջ. իսկ մի շահի ստորադրեալ Փանահ խանը իրաւունք է ունենում ըստ իր հաճութեան Ղարաբաղում մի աւելորդ մելիքութիւն էլ հաստատել (Խնձորստան) *): Բուն մելիքները չեն

*) Աղուանից կաթողիկոսներին հաստատում էին պարսից շահերը, որոնց հրովարտակները կարելի է տեսնել Վարդիս եպիսկոպոս Զալպետանցի «Ճանապարհորդութիւն ի մեծ Հայաստան» գրքի վերջում (Մասն Բ. եր. 480—495): Այդտեղ կայ և Փանահ խանի մի «բարձր հրաման», որով Գանձասարի Թովհաճանէս կաթողիկոսին խանը հաստատում է այդ պաշտօնի մէջ և պատուիրում է Ղարաբաղի ժողովրդին նրան «ամենայն կերպիւ բնդունել կաթողիկոս և մեծ»: Մի այդպիսի հրաման տուել է և Համախու Մամմուք Չայիդ խանը: Մելիքները Ղարաբաղի տէրերն էին, ասում է «Գաղտնիք»-ը. բայց եթէ այդպէս

բողոքում այդ իրողութեան դէմ շահին և վերջինս
statu quoի խանդարման վրայ ուշադրութիւն չի
դարձնում: Եւ զարմանալի էլ չէ սա Մի անկանոն
տախկան կառավարութիւն չի կարող ձեռքի տակ
ունենալ կանոնաւոր աւատական իշխանութիւններ,
որոնք չէին հիմնուած դաշնագրերի վրայ. ընդհա-
կառակը, զիսաւոր կառավարութեան յայտնի ուղին
չէր կարող երբեք հանդուրժել, որ այդ իշխանու-
թիւնները ըստ ամենայնի հարստակուած չը լինէին
տիրող անձնակազմութեան անձնական կամքին և հա-
ճոյքին: Իսկ վերջին դարերի պատմութիւնը ցոյց
է տալիս, որ պարսից շահերը ոչ միայն չէին յար-
գում նախնիքներից մնացած աւանդական կարգե-
լը, այլ աշխատում էին ջնջել նոյն իսկ անցեալի
յիշատակները:

Մեղիքները այնքան մեծ և զօրեղ մարմիններ
չէին: Այլ որ ծանօթ է Ղարաբաղի սահմաններին,
նա կարող է հեշտ հասկանալ, որ այդ երկիրը չորս
կամ հինգ տեղ բաժանելով, իւրաքանչիւր մեղիքին
մի փոքրիկ դաւառակ կրնկնի: Այդպիսի փոքրիկ
տեղերի կառավարիչները բնականաբար այնքան մեծ
զօրութիւն չունէին, որ կարողանային մինչև ան-

է, ինչո՞ւ թուրք խաներն էին կաթողիկոսին հաստատում, այն
էլ այնպիսի խաներ, որոնք, հեղինակի ասածին նայած, բան-
տարկուած գողերի պէս էին ապրում երկրի մի փոքրիկ անկիւ-
նում:

գամ միմեանց հետ հաւասար ոյժերով կռուել ուս-
տի պարտաւորուած էին միանալ միւսների հետ և
ապա կռուել կամ մէկի, կամ երկուսի հետ։ Հէնց
այդ թուլութիւնն էր, որ վերջերում հարկադրեց
մելիքներին պարսից կամայականութիւնից ազա-
վելու համար զիմել Ռուսաց ինքնակայներին և
խնդրել ղինուորական օգնութիւն։ Նրբե ժողովրդի
և ժամանակի հարադատ որդիք, մելիքները, ինչպէս
պատմում են այժմեան աւանդութիւնները, այնքան
էլ բարեկիրթ և դարգացած չէին. այդ հանդաման-
քը մասամբ յիշում է և Յովսէփ արքեպիսկոպոս Ար-
ղութեանցը հռչակաւոր զօրավար Սուլթանի ներ-
կայացրած իր մի ծրագրում *)։ Այդ նշանաւոր դոր-
ծիչն յիշատակարանից («Առունկ» ամսագիր 1863
թ. եր. 512) երևում է, որ իւրաքանչիւր մելիք
կարող է ունենալ 500 — 1000 ղինուոր։ Եւ Հէնց
համոզուելու համար բաւական է մտաբերել այն ոյ-
ժերը, որ կարողացել էր մի տեղ հաւաքել Սիւնիաց
աշխարհի յայտնի իշխան Գաւիթ բէկը։ Նրա ժա-
մանակակիցներից մէկի զրած պատմութիւնից, որ
հրատարակուել է Եջմիածնում 1871 թուին, տես-
նում ենք որ թէ ինքը Գաւիթ բէկը, և թէ նրա
օգնական մելիքները ոչ մի ժամանակ պատերազմի
դաշտը չէն առաջնորդել մի համեմատաբար մեծ

*) Տես «Собрание актовъ, относящихся до исторіи армян-
скаго народа», 1838 г. Москва (Հաս. II էր. 69)։

բաղմութիւն: Դեռ պէտք է ասել, որ Սիւնիքը տա-
րածութեան կողմից Ղարաբաղի ընկերը չէ:

Իսկ թէ որքան զարգացած էր Ղարաբաղի
մելիքների և առհասարակ ժողովրդի մէջ ազգա-
սիրական ոգին, այդ կարելի է իմանալ մի տխուր
փաստից, որ յիշում է Չամչեանը (Հատ. Գ եր. 793):
Նա ասում է թէ երբ պարսից զօրքը պաշարել էր
Գաւիթ բէկի վերջին աղաստանարանը, Հալիձոր
բերդը (1726), նրա հեռ միացան ի թիւս այլ հա-
յերի և բաղմութիւ հայ քաջեր Սրցախից, որոնք
կռվում էին Գաւիթ բէկի դէմ: Եւ բացի դրանից
մի՞թէ նոյն այն մելիքների միմեանց դէմ լարած ո-
րոգայթները չեն հաստատում, որ մելիքների ձրդ-
սումներից զլիսաւորը անձնական փառասիրութիւ-
նը պիտի լինէր: Այս գիտողութիւնները չը պէտք
է աչքից դցել:

Յայտնի չէ Սպրեա Բէկնաղարեանցի ծննդեան
տարեթիւը: 1795-ին, թողնելով իր ժամագիրքը և
«գրաբար քերականութիւնը» (այն ժամանակ կա՞ր
և աշխարհաբար քերականութիւն), նա իր հօր և գիւ-
ղացիների հեռ Խնածախից փախչում է մտնում Շու-
շի բերդը, դէպի ուր իր զօրքով գալիս էր Աղա-Մա-
մադ խան ներքինի շահը: Խնածախիցի և Բալուջե-
ցի հայ քաջերը չծիւղով գիւղերն իջան ալիւր և
պաշարեղէն փոխադրել Շուշի: Սպրեա Կարծու

արագութեամբ հասնում է իր հօր ետեւից և յայտնում է որ ինքն էլ ուզում է նրա հետ պատերազմում մեռնել, քան մենակ մնալ։ Հայրը խկոյն մարդարէանում է, նախադուշակելով այս տղային կամ մահ և կամ փառաւոր տալուց։

Չորրորդ օրը ալիւրը Շուշի տանելիս, զիւղի մօտ վրայ են տալիս պարսից կանոնաւոր զօրքերը։ Նրանք ճրտեղից յայտնուեցան։ 18 եր. ասում է թէ Շուշին դեռ պաշարուած չէր, շահր, ուրեմն, դեռ չէր հասել Շուշուն, իսկ Խնածախը շահի ճանապարհի վրայ չէր Վաթսուն հայ այգտեղ 300 մարդ են կոտորում և յետոյ հայ քաջերը պատրաստվում են Յակ-քար անունով այրի մօտ կռուել։ Նրանք յաղթելու վրայ են, Ապրեսը այրի մէջ վառօղի հոտից ուղում է խեղդուել, դուքս է դալիս։ Այդ ժամանակ մի ուրիշ դունդ յարձակվում է հայերի վրայ։ Հայերի վառօղ ու դնտակը վերջանում է, դնում են անտառի խորքը, ուր կար վառօղամբար։ Այգտեղ նրանց պաշարում է թշնամու մի այլ դունդ։ Խնածախցի քաջերը խկոյն յարձակվում են դրա վրայ և կոտորում, անվնաս դնում անտառը։ Այստեղ մի զարմանալի, անհասկանալի արկած է պատահում։ Պրահամ Բէկնազարեանց քաջ զօրավարը, որ այդքան զօրք է կոտորել, իր որդուն թաղցնում է մի կաղնի ծառի տակ։ Մեր այս թաղուտը չնկատեց շփոթուած թշնամին։ Երբ վերջացաւ էրկրորդ պա-

տերազմն՝ հայրս զիս առնելով տարաւ (պարսից) գնդապետի մօտ: Կնչու, ինչ պատճառով յաղթողը անձնատուր եղաւ յաղթուողին, — հասկացէք ինչպէս ուղում էք. իսկ ես կասեմ, որ Խնածախցի և Բալուջեցի ալիւր տանողները այդ պատերազմում կոտորել են... 4770 մարդ. ամեն մի հայ 55 մարդ է կոտորել, ասում է հեղինակը. և հայերից ըստ երևցիմին ոչ ոք չի սպանուել: Ահա ձեզ մի գեղեցիկ առասպել...

Պարսից գնդապետը հայ է, շատ ուրախանում է հայ քաջերի զործով և յայտնում է իր գոհունակութիւնը, որ իր զօրքերը կոտորել են: Պատերազմից յետոյ շահի և Մելիք-Մեծլումի սուրհանդակները երկու նամակ են բերում՝ մէկը զընդապետ Հայկազեանցի, միւսը Աբրահամի հասցէով: Առաջինին գրում է Աղա-Մամադ-Խանը, թէ ինքը սխալուել է Խնածախ գիւղի վրայ ուղարկելով այդ ահադին բանակը, թէ Աբրահիմ խանի մի հաւատարիմ մարդն է նենդութեամբ իր մօտ եկել և պարսիկ զօրքը վերցրել որ Մելիք-Մեծլումի այդ զօրքը կոտորէ. ուստի հրամայում է իսկոյն յետ դառնալ:

Մելիք-Մեծլումը իր նամակում յայտնում է Աբրահամին թէ ինքը Շահի մօտ է, որը խոստանում է Ղարաբաղը մաքրել մահմետականներից, թէ Խնածախի և Բալուջայի վրայ զըկած զօրքի

Թիւն է 7000 հոգի, թէ ինքը շահին տուել է 2000 զինուոր, իսկ 1000 թողել է Զրաբերդում (եր. 30): Կարծում ենք որ այս թուերը կործանում են նամակը: Նախ՝ աշխարհի մէջ որ հասարակ զօրավարն անգամ կը համաձայնի 7000 զօրք ուղարկել երկու ողորմելի գիւղ կործանելու: Երկրորդ՝ Մելիք-Մեճլումը որտեղից հաւաքեց 3000 զինուոր, երբ Նանձակի խանութեան պէս ընդարձակ երկիրը միայն 3000 զօրական է տալիս: Իսկ Արղութեան Յովսէփ Կալիսկոպոսը ասում է (Վառնիկ 1863 թ. եր. 512) թէ Մելիք-Սպամը (Մելիք-Մեճլումի հայրը) Վարդութեամբ հազար արանց պատերազմողաց:

Բէկնազարեանցը համաձայնում է դնալ իր զօրքի հետ Մելիք-Մեճլումի մօտ, այսինքն Շահի բանակը իսկոյն մատիտով (?) դրում է զնպակտի նամակի թարգմանութիւնը (նա միշտ թանաք, զրիչ և թուղթ էր պահում ծոցում, պատմութիւն էր գրում): Յետոյ դնում են Խնածախ և այնտեղ էլ դանում պարսից օժանդակ զարաբաղցի թուրք զօրքի մի մասը, կոտորում են և ապա կրակ են տալիս մօտադոյ անտառը, ուր թաղնուէլ էին այդ զօրքից մնացածները. և այդպէս բնաջինջ արին Իբրահիմ խանի կողմնակից զօրքը, թուով 3000: Ուրեմն կոտորածի հաշիւը աւելացաւ. հաշուենք կրկին և ստանում ենք 5671 մարդ: Կեցցեն ալիւ-

բաւորները: Մեր տիտանները զանազան անուաններ են տալիս այդ յաղթութեան տեղերին. իսկ Մակար վարդապետը ծանօթութեան մէջ յիշում է, թէ այդ անուանները այժմ էլ կան: Ամբողջ Ղարաբաղը լեքն է այդ տեսակ հաղալաւոր անուաններով. հարկաւոր է միայն մի քանքարաշատ պատմաբան, որ այդ հասարակ անուաններին կպցնէ այսպիսի տիտանական հրաշագործութիւններ: Ականատես հեղինակը ասում է թէ այս բոլոր գործողութիւնները կատարուեցան կէս օրում (եր. 38). կէսօրից յետոյ տեսնում ենք քաջերին ուրիշ տեղ: Չի՞նչ քեզ առ այսօրիկ կարօտութիւն առասպելք սուտք, կամ զի՞նչ պէտք անմիա և անհանձար բանից յարմարանք» (Խորեն. Գիրք Ա.):

Այս պատերազմին հետևող և զլուծը ամենից հետաքրքրականն է, որ տրժէ մի քանի անգամ չափեր (ընդունուած խօսք է): Այդտեղ մենք տեսնում ենք մի հայկական վեհաժողով. այո՛, իր բոլոր կազմուածքով մի վեհաժողով, այն պակասութեամբ միայն, որ խնածախցի քաղաքագէտները ժողովուրդէն են ոչ թէ մի դահլիճում, այլ բաց երկրնքի տակ, այդ օրը կոտորած թուրքերի գերեզմանատանը (գեօռուտ):

Նախագահն է Քեանդիսուդա Խաչատուր Բարխուդարեանցը, ատենագիրը թէև յիշուած չէ, բայց անշուշտ ինքն Ապրեան է, որ պիտի նոյն ու-

թեամբ զրէ՛ ժողովի վիճարանութիւնները (եր. 54—55)։

Նախագահը ասում է. «մի քանի ստիպողական և ամենակարեւոր խնդիրներ կան ժողովով լուծուելիք. Ճրութանութիւնն և Ճրո-մելիքութիւնը ոչնչացնելու խնդիր, հարազատ մելիքութիւնը և հարազատ Ասթղիկոսութիւնը վերականգնելու խնդիր, մեր ընտանեաց կեանքի ապահովութեան խնդիր, մեր ծառայութիւնը վարձարելու խնդիր, մեր կենաց խնդիր, Շահի և Մելիք-Մեճլումի հրաւերը ընդունելու կամ մերժելու խնդիր»։ Եւ այս նախագահը, այսպիսի լեզու բանեցնող Աարաբաղցի գեղջուկը, գեո. պէտք է ասենք, որ անդրադէտ է, և նամակը ուրիշն է գրել տալիս (տես եր. 257)։

Ժողովի հոգին, ինչ ասել կուզի, է այդ օրուայ հերոսը, Բէկնազարեան Աբրահամ զօրավարը, որ բացի հմուտ զօրապետ լինելուց՝ Վերեկի պատմադէտ եղած է (յառաջ. եր. 7), որովհետեւ ուսում առած է մի վանքում։ Մի երկար տտեմարանութեան մէջ նա բացատրում է իր զինակիցներին Աարաբաղի զրութիւնը, տիրող մելիքների, պարսից շահերի պատմութիւնը։ Մենք ուշադրութեամբ զննեցինք այդ մարդու արած պատմական տեսութիւնը և տեսանք, որ այդտեղ կրկնուած են այն բոլոր անցքերը, որոնք ղետեղուած են պ. Րաֆֆիի

«Խամս. Մէլիք» մէջ, նոյն իսկ այնպիսիները, որոնց մասամբ հերքել է պ. Ներմազանեանը: Զանազանութիւնը միայն ատենաբանական ճոխ ոճն է: Ատենաբանն ասում է թէ Աղա-Մամադ-Շահը խոստացել է ջնջել Ղարաբաղում ճրութիւնը և ճրամելիքութիւնը: Մենք հետաքրքրվում ենք իմանալ թէ ինչու այդ ահարկու բռնակալը յանկարծ ուզում է ջնջել իր երկրի մահմետական կառավարութիւնը յօդուտ հայերի, որոնց խաթրին խօսք է տալիս երկրից արտաքսել իր հաւատակիցներին, որոնք հաստատ բնակութիւն ունէին հիմնած: «Գաղտնիք»-ի մօքից այն է, դուրս դալիս, որ շահը առհասարակ Մելիք-Մեճլումի ձեռքին խաղալիկ էր դարձել, երևի մելիքը մեծ շնորհ էր արել նրան, պարսկական 60—70 հազար զօրքի հետ խառնելով իր 2000 մարդիկը: Բայց և այսպէս, Բէկնազարեանցը, թէ և այդ օրը նամակով յայտնել էր մելիքին թէ «քաջերը կը համոզեմ հետս բանակատեղիդ բերելու», ժողովում խորհուրդ է տալիս չը հաւատալ Շահի խոստմունքին: «Ստարն միշտ օտար է, ասում է նա, օտարն ունի միշտ իւր կեղծ քաղաքականութիւնը և զիտէ գործիք անել մեզ նման անքաղաքագէտ, ղիւրահաւան, պարզ և խեղճ արարածները» (եր. 42): Որքան զարմանալի բառեր: Այն խաւար ժամանակներում, այդ տղէտ, «խեղճ և պարզ» շինականների մէջ ռբակեղից ըն-

կան այդ նուրբ խօսքերը՝ քաղաքականութիւն, անքաղաքագէտ»։ Նրանք է սա թէ ինչ Այդ խի քաղաքականութիւն բառը անցայտ էր մինչև անգամ Աշտարակեցի Ներսէս վարդապետին (յետոյ կաթողիկոս), որ ինն տարի դրանից յետոյ գրում է, «Ըւր եղբայր, առ ինչ արդեօք պարտաւորեցի նա առնել զայնպիսի անուանեալն փոլիթիքայ ընդ հակառակորդս մեր» («Փորձ», երկրորդ տարի եր. 243)։ Բայց սպասեցէք, պարոններ, ահա և նոյն այդ բռնի զիւղացիք էլ պիտի խօսեն քաղաքականութեան, պօլիտիկայի կամ դիպլոմատիայի վրայ։

Ահա Աղնաւուր-Ուհանը կանգնել է ասում է՝ «եթէ մենք մեր դերպաստանը Շուշի փոխադրեցինք՝ այդ քաղաքականապէս նշանակում է որ մենք զիրենք բարեկամ համարած ենք» (եր. 52)։ Աեցցէն Խնածախցի Ուհանները *): Նթէ նրանք այսպիսի պարլամենտական հանձար են ունեցի, նրանց սպերախտ որդիքը այսօր Խնածախում հազիւ են կարողանում մատների վրայ մինչև երեսունը համբեր Բայց եթէ այս կախարդիչ վեհաժողովի վրայ շատ ուշք դնենք, շատ հեռու կը գնանք։ Թողենք մեր խելօք քաղաքագէտներին, հեռուենք Աբրահամին, այդ «երևելի պատմագէտին»։

Իր ճառի մէջ նա ասում է. «1701 թուական

*) Ապուշ ու հաստագլուխ մարդկանց Ղարաբաղում Ուհան են անուանում։

նում մինչդեռ պատրաստի հայ զօրք ունէին իւրեանց ձեռքի տակ եօթանասուն և ութն հազար Ղարաբաղում և Ուտեաց գաւառներում, աղուանից կաթողիկոսներն (քանի՞սն են եղել) և իշխաններն՝ Ռուսաց մեծն Պետրոս կայսեր մօտ զըկեցին իւրեանց կողմից ճարտասան Մինաս վարդապետը և Հնդկաստանցի Իսրայէլ Օրնի (Օրի) իշխանը և մի քանի հայ նախարարազուններ (??): Ապսրն իմանալով որ այս հայ պատգամաւորութեան նպատակն էր իւր հովանաւորութիւնը խնդրել Հայաստանի և մասնաւորապէս Աղուանից երկրի վերայ՝ մեծ սիրով ընդունում էր (է) այս պատգամաւորները» (եր. 44): Արկին ուշադրութիւն դարձնելով այդ հատուածի մէջ եղած թուանշաններին, մենք զարմանում ենք. ունենալով մի այդպիսի մեծ զօրք, ի՞նչն էր արելում մելիքներին զրաւել Ղարաբաղը, վերջնականապէս թօթափել պարսից լուծը: «Բազունիքը» ասում է թէ Աղա-Մամադ-Շահը Ղարաբաղ արշաւել է 50 հազար զօրքով և զրանով աւերել է Ղարաբաղի ու Վրաստանի մեծ մասը: Մի՞թէ մելիքները չէին կարող իրանց 78 հազարով դռնէ իրանց իրաւունքը վերականգնեցնելը Այս կէտում բոլորովին անհասկանալի են մեր նոր պատմիչները: 1701 թուին Ղարաբաղում թուրք խան չը կար, ասում են նրանք, և ոչ մի հատ մահմետական: Ասում են թէ պարսից շահին ճանաչում էին իր-

բև դերիշխող և միայն հարկ էին տալիս էլ ի՞նչ պատճառով մի այդպիսի երկրի իշխողները իրանց 78 հազարով նախ չէին ամրացնում իրանց իշխանութիւնը և ապա միւս կողմերի ազատութեան ձեռք ղարնում: Ո՛չ, պատմութիւնը այստեղ զօռով հարկադրում է հասկանալ, որ զօրքերի այդ թիւը առասպելական է: Պ. Բաժժին գեռ էլ է առաջ գնում, և ամբողջ Պարսկական Հայաստանի զօրքի թիւը հասցնում է աւելի քան 177 հազարի: Նւ արդեօք սրարոնի ձեռքին եղև ևն հաստատ աղբիւրներ թէ ոչ: Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանցի յիշատակարանից մենք վերևում հանել ենք Ղաւրաբաղի զինուորների թիւը: Միևնոյն եպիսկոպոսը 1790 թուին Նկատերինա II-ին ներկայացրած աղերսագրի մէջ ասում է, թէ Սրին Պարսկաստանից վերադառնալով, յայտնեց Պետրոս մեծին, թէ բացի Ղարաբաղցի հայերից, միայն Շամախու շրջակայքում հաւաքուած են 17 հազարից աւել զինուած մարդիկ (Собр. акт. Закавказья. II кн. 53): Նրւի հէնց այս թուիցն են ծնուել հարիւր հազարները: Բայց պէտք է իմանալ, որ Իսրայէլ Սրին, յափշտակուած հայրենասիրական եռանդից, չէր կարող մի քիչ էլ իրանից իսկականի վրայ վերադիր չանել, որպէս զն Պետրոս մեծը վստահութեամբ սկսէր իր գործը: Հանգամանքները այս ենթադրութեան կողմն են: Մեղքները եթէ այդքան մեծ ոյժ ունենային, երբէք չէին աղերսել

Ռուսաց կայսրին, որ իրանց և ժողովրդին դադթեց-
նէ Կասպից ծովեզրի վրայ նոր դրաւած երկիրը,
կամ տանէ Ռուսաստան: Մեղիքների ձեռնարկած
այդ ահաղին դադթականութիւնը մի հանելուկ կը
լինի, եթէ դրա պատճառները չը համարենք նրանց
թուլութիւնը, անմիաբանութիւնը: Նրանք չէին կա-
րողանում ապրել մահմետական անտանելի լուծի
տակ և այդ պատճառով պատրաստ էին թողնել
իրանց հայրենիքը և դադթել *): Մենք բոլորովին
չենք ուրանում թէ մեղիքները զօրք ունէին, բայց
և ծանօթանալով այն ժամանակուայ պատմական
դէպքերին, չենք կարող հաւատալ որ հայերը այդ-
քան պատրաստի ոյժ ունենային և չը համարձակու-
էին զործել: Պ. Նրիցեանը իր մի յօդուածում («Փորձ»
1877—78 թ. հր. 369) զօրաբաղցի զօրքերի թիւը
12000 է հասցնում, զարձեալ չը յիշելով թէ որաե-
ղից է առել այդ թիւը, որը բնականին քիչ մօտիկ
է երևում: Սյոպէս թէ այնպէս, Ղարաբաղում, ինչպէս
տեսանք, 68 հազար զօրք լինել չէր կարող: «Գաղա-
նիքի» հեղինակը միշտ անհաւատալի թուանշան-
ների ետեւից է վազում:

Բէկնազարեանը իր ճառում յայտնում է, որ
հայերը Պետրոս մեծից 15 հազար զօրք էին խըն-
դրում: Կ. Նրիցեանը 25000 է գնում, իսկ Յով-

*) Տես Պետրոս մեծի հրովարտակը Собран. акт. 1838 г.
Հատ. I հր. 168—169:

սէփ աւքեպիսկոպոսը վերոյիշեալ աղերսագրում
 զեկուցանում է կայսրուհուն, որ Պետրոսը հրամայել
 է 40 հազար զօրք տալ Սրիին, բայց նա չի ըն-
 դունել: Այստեղից պարզ երևում է, որ «Պաղտ-
 նիք»-ի հեղինակը զօռով քչացնում է օտար պե-
 տութեան խոստացած օգնութեան քանակութիւնը,
 որպէս զի իրան յաջողի այն ժամանակուայ Արցա-
 խը ցոյց տալ իբրև մի մեծ ոյժ ունեցող իշխա-
 նութիւն, իբրև մի անպարտելի ժողովրդի երկիր:
 Երևի հէնց այդ պատճառով «Պաղտնիք»-ը ոչ մի
 տեղ չի նկարագրում մահմետականների տուած
 ստատիկ հարուածները, այնպէս որ կարգացողը
 մնում է զարմացած, թէ էլ ի՞նչ էին ուզում մե-
 լքները, երբ այդ տեսակ խաղաղ կեանք էին վա-
 րում և այդքան զօրեղ էին: «Պաղտնիք»-ի ցոյց
 տուած պատճառը Փանոս խանն է: Բայց 1701-ին
 էլ չը կար Փանոս խան, էլ ի՞նչ էին ուզում: Թէ
 հեղինակը որքան մեծամիտ է հայերի վերաբեր-
 մամբ, երևում է և նրանից, որ ասում է թէ 1722
 թուին հայ զօրքը մինչ Պանձակի մօտ սպասում
 էր Պետրոս մեծին, վրաց սակաւաթիւ զօրքն էլ
 միացաւ նրա հետ (եր. 46): Իսկ Յովսէփ աւքե-
 պիսկոպոսը յիշեալ աղերսագրում ասում է թէ այս
 իսկ թուին Վախտանգ թագաւորը 40000 զօրքով
 դնաց Պանձակի մօտ, ուր հաւաքուեցան և միա-
 ցան այդ զօրքի հետ հայերը: Ուրեմն վրաց զօրքն
 էր շատ, իսկ հայոցը սակաւաթիւ:

Բէկնաղարեանցը յետոյ շարունակում է իր պատմութիւնը շահերի և ոռոսաց հետ հայերի ունեցած յարաբերութիւնների մասին, համարեա բառառ. բառ. կրկնելով պ. Րաֆֆիի խօսքերը: Իսկ հրահանների վեհաժողովը երկար վիճաբանութիւններից յետոյ ընդունում է մի վճիռ, որ ընդդէմ է Արաճամի մոքին, այն է զնալ միանալ շահի հետ, և նրա օգնութեամբ վերջ դնել խանութեանը: Չարմահայի բան: Այդ տիաանները յայտնում են, թէ իրանք էլ շատ լաւ կարող են կոտորել խանին, ճրո. մելիքներին, առանց ուրիշի օգնութեան, մի և նոյն ժամանակ հարկաւոր են համարում միանալ Պարսից շահի հետ, որ իր կեանքում անհամար հայերի արիւն է թափել, թողնելով իրանց ընտանիքները պաշարուած Տուշի մէջ, որի տէրը, Բերաշիմ խանը, է նոյն խանը, որին պէտք է սպանէին Խնածախցի հսկաները և որը, ինչպէս երևում է 26—31 երեսներից, կարողացել է խաբել շահին այդ իսկ խնածախցիներին կոտորելու համար 7000-անոց մի բանակ ուղարկել: Հարցնում ենք, եթէ այս այսպէս լինէր, ի՞նչը կարող էր Բերաշիմ խանին արդեւիկ բնաջինջ անել այդ բոլոր ընտանիքները: Նւ դեռ Ուհանները կարծում են թէ մի վայրենի խան քաղաքականապէս կը կարծի, թէ խնածախցիք, թէև կռուելու են շահի զօրքիհետ միասին իր դէմ, բայց երբ իրանց ընտանիքները թո-

դիւ ին Նուշում, ուրեմն թշնամի չեն նրան: Ի՞նչ հասկացանք, ընթերցող, այս սարսափելի խառնակութիւնից, այս անշնորք վէպից, որի հեղինակը ինքըն էլ չը զիտէ թէ ինչ է տառն: Բայց շարունակենք, այսպիսի հրաշքներ շատ ենք տեսնելու:

Ժողովը վերջանում է, քաջերից մի քանիսը ալիւր են տանում Նուշի այն պայմանով, որ կրկին յետ դառնան և կռուեն Նուշի տէր խանի դէմ: Սյդ խանը կարծես թէ փայտից տաշած մի արձան է: Նթէ խանը պիտի թոյլ տայ, որ իր պաշարուած բերդի դռները օրհասական լռակում բացուին մի քանի հացերի համար, որ դրանք ալիւրը տանեն իրանց ընտանիքներին տան և ապա յետ դառնան, կրկին բաց անել տան դռները, որ դնան թշնամու կողմը, եթէ այս այսպէս լինել կարող է, ուրեմն խանը մի ողորմելի, թուլամորթ ու անարիւն էակ է, և որքան խեղճ ու որքան թուլամորթ էին հայ մելիքները և այդ իսկ տիտանները, որոնք դողում էին մի այդ տեսակ խանից:

Չենք կարող ուշադրութիւն չը դարձնել և այդ ժողովին մասնակցող քաջերից մի քանիսի անուան վրայ, կարծում ենք որ դրանով լաւ կը ճանաչենք այդ փիլիսոփայ-քաղաքագէտ-հրաշակիրտ-ղիւցաղներին:

Այս մի Պել-ձամալ հերոս, մի անգամ տիպ, որ, մեր կարծիքով, ա. Բաֆֆի Վաւրթ-բէկի վէպի

Բայինդուր իշխանի ստուերն է: Բայինդուրը մի քաջարի տղամարդ է, պատերազմի մոռխի վրայ սիրահար, կեանքի դառնութիւնները ծաղրող, անհոգ և կամակոր զինուոր, որ ամենադժուար դէպքում հանաքներով է վճիռ դնում: Այսպէս է երևում Պիլ-ձամալը, բայց նրան հեղինակը բաւական յիմար հանաքչու դեր է տուել: Օրինակ, տեսէք ինչ է տսում նա վեհաժողովի ժամանակ (եր. 53). «մելիքի (Մեծըւմի) խելքը «դարուց ի դարս» Խիկլիլի խելք է: Եթէ ես մեռնելու լինիմ այս պատերազմում՝ իմ ընտանիքը «դարուց ի դարս» ով կը սնուցանէ: ... «Դարուց ի դարս» ապրի ձրի ծառայութիւնն և անփող մարդասպանութիւնն: Սղլում դազանջտոյ տըր...»: Ով որ լսել է այս վերջին թրքական ասացուածքը ամբողջապէս, նա պիտի միանգամայն զղուի, մանաւանդ տեսնելով դրա կէսը թղթի վրայ տպած, իսկ կէսի շարունակութիւնը, այդ անտանելի նողկալի շարունակութիւնը թաղցրած կէտերի տակ... Նւ այդ փողոցային անպիտան խօսքը պատմութեան մէջ զետեղել է մի նոր Նդիշէ, և հրատարակուել է մի վարդապետի խմբագրութեամբ...

Քեարփէթիւն Տէտէ, սա մի ուրիշ հերոս է: Քեարփէթիւնն շանակում է աղցան, իսկ Տէտէ — հայր: Խնչ դուրս եկաւ: Բայց մեզ համար հետաքրքրականը այն է, որ Ղարաբաղում չի գտնվել մի տե-

ղացի հայ կամ թուրք, որ հօրը և տէն տէն և ոչ
թէ և դադար: Տէտէ Տաճկաստանի բառ է, որ Մակար
վարդապետը դործ է ածում ինչպէս սովորել է Տաճ-
կաստանում, մոռանալով, որ այլ է տաճկի բարբառը,
այլ է Ղարաբաղցի թուրքի բարբառը: Ղարաբաղցի
հայը կարող է և դո-ի տեղ և տո դործածել, բայց
երբէք և աո-ն և էո-ի չի փոխել. ով ուղղում է թող հա-
մոզուի տեղն ու տեղը ուսումնասիրելով լեզուն:
Ղարաբաղցին պիւլիս աշխատում է որքան կարելի է
սլահել իր դործածական լեզուն. նա գիտում է չըսե-
լու ըմ, Վլէխեցալա: Ուստի և մենք չենք հաւա-
տում որ Ապրէսը և Տէտէ՝ դրած լինի Խօ և Քաղա-
նիք՝-ի հաւատարմատաւորները չեն կարող ասել թէ
Ապրէսը այդ բառը գրել է Տաճկաստան եղած ժա-
մանակը, որովհետեւ 140—141 երեսներից երևում
է որ Առուստանի փհհհհհհհհհհ փհհհհհհհհհհ զը-
րել է Շահի բանակում, Շուշիի մօտ, մինչև Ղարա-
բաղից հեռանալը:

Զ. գլուխը ամբողջապէս նուիրած է Բալուչե-
ցի և Քաթախցի ահարկու քաջերին: Մենք ամեն
մէկի մասին չենք կարող խօսել. ընթերցողն ինքը
պարզ կը տեսնէ, որ դրանք իրական մարդիկ չեն:

Յրինակ, եթէ մեր տառերի հէքաթներում լը-
սում ենք, թէ մի հերոս մենակ 50 մարդ կոտորեց
միանգամից, մենք միայն ծիծաղում ենք, ասում ենք
հէքաթ է: Բայց ի՞նչ կասեք, երբ մի երևելի հա-

մտրուած պատմագէտ, իրրեւ ականատես, պատմում է մի այսպիսի բան. Քեարվանդուն-Թիւնին (կարա-վան կոտորող Թիւնի) մի անգամ Աուր գետի մօտ ձուկը որսալու դնացած լինելով, Եբրահիմ խանը նրա հակից հարիւր յիսուն թուրք է զըկում. Թիւնին միակ կոտորում է (եր. 65) այդ ամբոխը և իր ձուկը տուն տանում. Եբրահիմ խանը դրա համար «քար-վանդուն» է անուանում, իհարկէ զուարճանալու համար:

Ահա տեսէք: «Խամայի Մէլիք» եօրղայ Գրի-գորը (եր. 129) «Դաղանիք»-ում Աաքե Զաքի դա-ռաւ, որ մելիքների թղթերը Դանձակ է տանում իր գաւաղանի մէջ: Յոյհաննէս կաթողիկոսի Դան-ձասարում գումարած ժողովը նկարագրելուց և «Խամա. Մէլիք» ասածները կաթողիկոսի մի ճառի մէջ ամփոփելուց յետոյ, Աաքե Զաքուն տանում է Դանձակ, իսկ Զալալեան գաւաճան Միւլքի բէկին (ն. Խամա. Մէլիք» Ալահզուլի բէկ, եր. 130) դէպի Եբրահիմ խանը այդ դաղանի ժողովի վճիռը յայտ-նելու: Դրանից յետոյ Աաքե-Զաքին իրան յանձնած թղթերը տանում էր արեւների կարկատաններում (եր. 61): Ոչ ոք չի հաւատար, որ արեւի կար-կատանում թուղթ կը տանուի այդքան հեռաւոր տեղեր, արեւը մի բարակ կաշուից է կարած. և նրա-նում դրած թղթի կտորը մի վերստի վրայ կը դդգըռի, կոշնջանայ:

Տեսէք Շէյթան Թիւնուն, որ երբեմն իբրև մօլ-
լա, կամ խենթ, վարդապետ և այլն երևում է այս-
տեղ ու այնտեղ, գաղտնիքների է լրտեսում և մե-
լիքներին յայտնում: Երբահիմ խանն է Շէյթան ա-
նունը դրել, որովհետև շատ է խաբուել նրանից: Եւ
այդ Երբահիմ խանը այնքան յիմար է, որ այդ մար-
դուն չը ճանաչեց մի քանի տարուց յետոյ և ըն-
դունելով նրան Մելիք-Շահնազարի տեղ, խորհուրդ
կազմեց նրա հետ ու յայտնեց իր կարևորագոյն
գաղտնիքը (եր. 101): Ասենք գէմքից խաբուեց, մի-
թէ Շէյթանը ձայնն էլ էր փոխում իր ուղած մար-
դուն այնքան նմանացնում, որ չէին զանազանում:
Ձենք հաւատում:

Ահա Գայլ-Ուհանը, որ «ունի երկու անդուդա-
կան յատկութիւն—գիշերատեսութիւն և սուր լը-
սողութիւն: Գիշերներում ամեն ինչ տեսնում է,
ինչպէս մենք ցերեկներում: Նա մանաւանդ գայլի
նման քաջ քաջ պատաստում է ձեռքն ընկած թըշ-
նամին»:

Ահա Տէօլ*) Գառպարը, որ «ունի Սամսոնա-
կան ոյժ, առիւծական սիրտ, նոյնպէս բազուկ-
ներ»:

*) Ղարաբաղի տեղական բարբառի մասնաւոր հնչիւն-
ները զրի վրայ արտայայտելու համար Կապար վարդապետը
առանձին կանոններ է հնարել: Օրինակ օ տառը զարաբաղցիք
մի քանի բառերում արտասանում են իբրև փրանսիական օւ.
այդ արտասանութիւնը նա արտայայտում է էօ տառերով:

Չափար Սարասար զօրավար, 1770 թուին հնձիլ է Իբրահիմ խանի բանակի ձախ թիւը (եր. 65) և «Թրահար արաւ աջ թիւը» խանը փախաւ մտաւ Շուշի և բացականչեց. «Չափար Սարասար», որ պարսիկերէն որպէս թէ նշանակում է «ձախ թիւը ծայրէ ծայր կոտորեց»:

Ասլան հազարապետը «ունի առիւծի յատուկ զեհանձնութիւն, աներկիւղ սիրտ, լայնալանջ կուրծք, աննահանջելի յարձակումն, անդիմադրելի ուժգնութիւն և չափազանց ոյժ»։ . . . «Պատերազմական տաղնապալի դէպքերում, առանց երկար մտածելու, իսկոյն որոշում է իւր թշնամու յաղթելու միջոցը և առիւծայարձակ (?) լինելով շահում յաղթութիւնը»:

Սմաւոնը «հրացանաձգութեան մէջ այնքան արագաշարժ է՝ մինչև անգամ իւր գնդակներն կարկտի նման տեղում են պատերազմում թշնամու վերայ»։ Իհարկէ, կայծքարի հրացանի ժամանակ, կաւելացնենք մենք:

Նմանապէս և ա տաւր արտասանում են փափուկ և (ինչպէս լա բառում)՝ դրա համար էլ գործ է ածում էա տառերը: Մակար վարդապետի այդ կանոնները ընդհանրապէս մեզ մօտ չեն ընդունուած, այդ պատճառով ընթերցանութեան ժամանակ դժուարութիւն են պատճառում տեղական լեզուին անծանօթին: Այս կանոնին հետեւել է նա իր միւս բոլոր աշխատութիւններում: Ինչպէս երևում է, «Վաղտնիք»ն էլ է ենթարկել այդ կանոններին:

Աժտ(դ)ահայ յ բարձրահասակ, յաղթանդամ, ու-
ժեղ և արիասիրտ տղամարդ ։

Նէառուատէօվ *) Աթա նշանակում է յ եօթնա-
դիսեան հրէշ թագաւոր դեերի—հայր քաջերի (?) ։
Սա ունի պարթեւական հասակ, արտաքոյ կարգի
ոյժ, անխախտ կամք, աներկիւղ սիրտ և հիանալի
զինաշարժութիւն ։ Սա յ Նաղանիք —ի գլխաւոր
հերոսներէց մէկն է ։ Իր քաջութիւնը այնքան հը-
շակվում է, որ երբ 1827-ին իշխան Մաղաթովի հետ
մտաւ Պարսկաստան, յ բերանից բերան ոտոտտեցին
այս ահարկու խօսքերն, յ Շիրի նառ Նէառուատէօվի
գիւշնի Ալի Մաղաթով (եր. 379) ։ Ար նշանակէ ու-
րեմն որ ըստ քաջութեան առաջ Նէառուատէօվին էր
ճանաչում ժողովուրդը, յետոյ Մաղաթովին ։ Բայց
գիտէք, այդ նոր Նոդիաթին այսօր ոչոք չի ճանա-
չում և նրա մասին ոչնչից ոչինչ չի լսուել, թէ և
այդ անցքը տեղի է ունեցել մի 60 տարի առաջ ։

Նէառուատէօվից յետոյ մի մի գալիս են ուրիշ
ահռելի հսկաներ, որոնց կեանք է տալիս Նիաճախը,
որոնք Ղարաբաղի խնամակալներ եղած են, ինչ-
պէս ասում է յ Նաղանիք —ը, հայրախնամ, ղթա-

*) Մակար վարդապետի կանոններով գրած բառէ, Արա-
դացոյր կը համոզուի թէ որքան դրանով աղճատվում է լեզուի
խեղական հնչիւնը—Ասում են վարդապետը բառական աշխա-
տել է Ղարաբաղի աշխարհիկ լեզուի վրայ ։ Ահա տուած օ-
գուար, բացի նրանից որ Տաճկաստանի տառադրութիւնը մըա-
ցել է մեր մէջ ի գայթակղութիւն ամբօխի ։

որիս խնամակալներ:—Այս բազմաթիւ մականունների շարքում երևում են էլ անճոռնի մականուններ, յատկացրած խաղաղակեաց վանականներին, օրին. «Ասլան Մահրասա—Մեսրոպ վարդապետ» (եր. 57): Թէ մինչև որ աստիճան անհաւատալի ուժեղ են այս բոլոր հսկաները, մենք ոչինչ չենք ասում, թողնում ենք ընթերցողին դատել:

Եւ զլսից հեղինակը գծում է «մի ընդհանուր ակնարկ՝ մեր պատմութեան ոգին և անցքերը պարզաբանելու համար»: Ի՞նչ է ասում «երևելի պատմագէտը»:

«Պարսից, Հռովմայեցւոց, Յունաց, Օսմանեցւոց, Ափխազեցւոց . . . անընդհատ արշաւանքները . . . համարեա թէ անկարող եղած են մնասել Մեծ և Փոքր Արևելաց և ոչ մի կեանքին» (?) (եր. 71): Սա մի նշանաւոր սուտ է, որ համարեա դուռալով գոչելով յայտնում է թէ հեղինակը ժամանակակից չէ: Քիչ են աւերակ դարձրել Ղարաբաղը, հարցնում ենք մենք: Լանկիթամուր չի՞ անցել այդ երկրով, Շահ-Աբասը չի՞ արշաւել դէպի Թիֆլիս, թաթարները չէին, որ աշխարհաւեր սրածուծիւնից յետոյ Խաչենի և Հաթերքի իշխան Ջալալին սպանեցին, օսմանցիք չէին տվքեր էին, որ Սարը Մուստաֆա փաշայի առաջնորդութեամբ ցրուել էին Ղարաբաղում և մի զիշեր կոտորուեցան Մելիք-Աւան խանի կարգադրութեամբ (Собрание акт. եր. 52 հատ. II): Օսման-

ցիք և պարսիկները միայն Դաւիթ բէկի ժամանակ քանի քանի անգամ աւերեցին Սիւնեաց աշխարհը, կոյկասեան լեռնականները մի անգամ են միթէ յարձակուել Ղարաբաղի վրայ: Իսկ պարսիկները: Դրանց արածներին խօ հաշիւ չը կայ: Կարդացէք Կիրակոս պատմադիրը, Չամչեանը, Նսայի կաթողիկոսի պատմութիւնը, Պետրոս Դի-Սարգիս Դիլանեցի օրագիրը («Առունկ» ամսագիր 1863 թ.), միշտ և ամեն տեղ խօսում են արշաւանքների, կոտորածի, հրի և հրդէհի մասին: Ել ինչո՞ւ 'Ձէլէրի-Քոխան երեք անգամ Պետերբուրգ էր դնում ռուսաց կայսրների դահի պատուանդանի մօտ փրկութիւն որոնելու: Ել ինչո՞ւ երբ ներկայ դարու սկզբում ռուսները զրաւեցին Ղարաբաղը, բնակիչները զրկաբաց բնդունեցին նրանց, և այժմեան սերնդի մէջ էլ այսօր կրկնվում են խաների և բէկերի զործած տարտափելի դահճութիւնների պատմութիւնները: Մի այսպիսի երկարատեւ սեւագրեստ պատմութիւն չի կարող տեսնել միայն կոյրը: Իսկ անցեալ դարու այդ բարբարոսութիւնների ժամանակ միայն ցած դաւաճան, թրքացած հայը կարող էր ասել թէ հայ բնակչութիւնը անդորր կեանք է վարում: Բայց Արահամ Բէկնաղարեանը մի իդէալ է, մի մեծ ազդասէր, կը դրէր նա այսպէս — Նրբէք:

Այդ խոշորադոյն ստից յետոյ սկսվում է Փանահ և Եբրահիմ խաների պատմութիւնը, որ բո-

լովին նման է յ Խամս. Մէլիք.՝ մէջ պատմածին: Ընթերցողին կը խնդրէինք այս գլուխը կարգալիս աչքի առաջ ունենալ յ Խամս. Մէլիք.՝ 58, 59, 62, 73, 74, 76, 77, 88 և 98 երեսները, որով և կազատուենք այդ նմանութիւնները այստեղ մի առ մի յիշելու պարտականութիւնից:

Եր. 77 յիշած է, թէ Եբրահիմ խանը իր կեանքը ապահովելու նպատակով Պարսկաստանից Ղարաբաղ փոխադրել տուաւ թուրքեր: Պ. Բաճիճին նոյնպէս Վ կարծում է, թէ Ղարաբաղում առաջին թուրքը Փանահ խանն էր: Մեր կարծիքով սխալ պիտի լինի այդ: Եթէ թուրքերը անցեալ դարու երկրորդ կիսից են հաստատուել Ղարաբաղում, հապա ի՞նչ է պատճառը, որ այսօր Ղարաբաղի հայ ժողովուրդի կեանքը լեքն է թրքական սովորութիւններով, լեզուն թրքական անհամար բառերով պլանդակուած: Ինչո՞ւ զարաբաղցի հայը միշտ թուրքերէն է երգում: Ինչո՞ւ նա մինչև վերջին ժամանակներս թուրքի ձեռով էր հագնւում և իր գլուխը թրքական ձեռով էր ածխում: Վերջապէս ո՞րտեղից յանկարծ երևացին սարերի, ձորերի, դետերի, բոյսերի, անասունների այն բազմաթիւ անունները, որ այժմ դործ են ածում ամենքը և դործ են ածում իբրև իրանց սեփական բառեր: Եբրահիմ խանից մինչև ռուսաց տիրապետելը յիսուն տարուց աւելի չի անցել և այդքան կարճ միջոցում հայը կարող էր միթէ այդպէս

դերի դառնալ թուրքի ալ դեցութեանը, մանաւանդ որ, եթէ հաւատալու լինինք Վաղանիք-ին, համարեա միշտ հայերն էին տիրապետում թուրքերի վրայ: —Ա՛յ, դարեր են հարկաւոր դրա համար, իսկ մի յիսուն տարում մի ժողովուրդ հազիւ կարողանայ միւսին լաւ ճանաչել Տիզակի և Վարանդայի դաւառներում հին ժամանակներից ապրում էին շատ թափառական թուրք ցեղեր, որոնց զխաւորները տիրում էին այդ կողմերին: Աւանդութիւնը հաւատացնում է, թէ հռչակաւոր Ամարաս վանքը շրջակայ հողերով մի թուրք բէկի էր պատկանում. և Մելիք-Բաղին փողով յետ է գնել այդ տեղը: Ընդհանուր պատմութիւնից յայտնի է, որ ասիական բռնակալների արշաւանքներից օտար երկրներում մնացել են խմբեր, որոնք բնակուել են այդ երկրներում: Նթէ մոնղոլ ժողովուրդը կարողացել է Ռուսաստանում բնակութիւն հաստատել, ինչո՞ւ ապա Լանկիթամուրի և այլ բռնակալների ահագին խառնիճաղանճ զօրախումբերը չէին կարող հետզհետէ թողնել Վարաբաղում իրանց մասերը և այդպիսով մահմետական մշտական բնակչութիւն թողել մեր երկրում:

Շարունակելով Խերահիւմ խանի արարքները նման «Խամս. Մելիք» (եր. 100), հեղինակը պատմում է Տիզակի Մելիք-Նապու սպանութիւնը և 1781 թուին նրա յաջորդ Մելիք-Բախտամի շահից հաստատուիլը:

Վարանդայի տէր դաւաճան Մելիք-Ճաճնազարին պատժելու համար, քնացած միաբան մելիքները միասին յարձակվում են նրա ամրոցի՝ Զանախու վրայ, կոթածնում են բերդը, կոտորում են խանի թուրք զօրքերը: Վեռնային ճանապարհով Շուշի փախան նոյն խակ Մելիք-Ճաճնազարն և ձու-Մելիք Միրզախանն» (եր. 80): Քիչ կանդ տունինք: Մի տեղ (եր. 58) հեղինակը ասել է, թէ Տիպակի Մելիք-Նապին 1775 թուին յաղթելով իր վրայ յարձակուած Մելիք-Ճաճնազարին և Մելիք-Միրզախանին, իր հուժկու թրով զլխատել էր վերջինիս (Միրզախանին): Այժմ, վեց տարուց յետոյ (1781), տեսնում ենք այդ խակ զլխատուած մելիքին, որ լեռնային ճանապարհով Շուշի է փախչում: Տեսնում էք ինչ գեղեցիկ ժամանակակից պատմադրութիւն է և ինչպէս ականատես և երևելի պատմադէտը կարողանում է հանձարեղ զըրջով սպանուած մարդուն յարութիւն տալ . . . Այդ զլխատուած Մելիքին տեսնում ենք նաև 1787 թուականին (եր. 94) . . .

Երբահիմ խանը, տեսնելով իր ակարութիւնը, խորամանկութեամբ իրան հակառակ մելիքներին ճաշի է կանչում Շուշի և այդտեղ էլ կալանաւորում նրանց: Մի և նոյնը ասում է և պ. Բաթթին, աւելացնելով թէ Մելիք-Մեժլումին և Մելիք-Աբովին բանախց փախցնում են Թիւլի Արղուման և Զարդար-Մեղում բաջերը, որոնցից առաջինի ա-

նունք, մենք էլ դիտենք, մինչև այսօր պահուել է ժողովրդական աւանդութիւնների մէջ: Այդ քաջութիւնը «Վաղանիք»-ի խնածախցի հեղինակը վերադրում է իր սիրած տիտաններին—Փիլին, Ասլանին և ընկ, որոնք շատ հրաշքներ դործել են և պիտի դործեն:

Մեղիքների հետ բանտարկած Յովհաննէս կաթողիկոսը, ըստ «Վաղանիք»-ի, թոյնից մեռնում է հէնց մեղիքների մօտ. և կալանաւորած օրն էլ Մեղիք-Բախտամին աքսորում են Պարսկաստան: Մի և նոյն անցքը յիշատակում է և Յովսէփ եպիս. Արղութեանցը, բայց նա Մեղիք-Բախտամի աքսորելը չի յիշում. իսկ Յովհաննէս կաթողիկոսին, նրա տեսելով, թունաւորել են այն ժամանակը, երբ բանտից փախած մեղիքները գնում են Հերակլի և Բուրնաշօյի մօտ, օգնութիւն են խնդրում, ուստի զօրքերի հետ պատրաստվում են ուղևորվել դէպի Գանձակ և երբ Բուրնաշօյը յանկարծ հրաման է ստանում յետ գառնալ Թիֆլիս: Գարձեալ Արղութեանցը ասում է թէ Եբրահիմ խանը Մեղիք-Բախտամի իշխանութիւնը տալիս է պարսիկներին, Աբովի տեղ ուրիշն է մեղիք գնում (տես Собр. актовъ Հատ. II, եր. 60—61), իսկ Մեղիք-Մեծբումի երկիրը քան դում աւերում է: Բայց «Վաղանիք»-ը բոլորովին այս չի ասում: Նրա տեսելով մեղիքները իրանց 6 հազար զօրքով գնում են Գանձակ Բուրնաշօյին դիմաւորելու (եր. 93): Որքան տարբերութիւն:

Բանտից ազատուած օրը մելիք-Մեծըմը խնդրում է խնածախցի Հսկաներին գնալ Մելիք-Բախտամին գերութիւնից ազատել: Հսկաները գնում են, բայց չեն տեսնում նրան: Նրա հետ, ասում է հեղինակը, Իբրահիմ-խանը Աղա-Մամադ-շահին ուղարկել էր և այն թուղթը, որ մելիքները ուղարկել էին Աաքե-Ձաքու մհալի մէջ Գանձակ և որ բռնել էր տուել Խարայէլ կաթողիկոսը: Խարայէլը այդ ծառայութեան համար Ամարասայ կաթողիկոս է նշանաւում: Նրկու ամսից յետոյ Շէյթան-Թիւնին Իբրահիմ խանից իմանում է, որ Մելիք-Բախտամը բանտարկուած է Արդաւիլի ազատագնեայ բերդում: Այդ Շէյթանին զրկում են Մելիք-Բախտամի մօտ մի նամակի հետ, որով յայտնում են թէ ուսաց կառավարութեան տուած յայտագիրը ընկել է մելիքների ձեռքը: Շէյթանը մտնում է բերդը դարպիշի կերպարանքով, թէ և, իհարկէ, մի դարպիշ ոչինչ հարկաւորութիւն չունէր մտնել մի քրիստոնեայ կալանաւորի մօտ:

Իբրահիմ խանը մնում է բռնորովին յուսահատ և կարողանում է երեք հազար զօրք հաւաքել զըրկել Բուռնաշովի դէմ, իսկ միւս երեք հազարը զըրկում է Գանձասարի շարժական կայքը գրաւելու և Շուշի փոխադրելու: Հարկ է ասել, որ խանը չէր կարող 3000 մարդ զըրկել Բուռնաշովի դէմ, քանի որ այդ գնեհրալը այդ ժամանակ գնում էր Ռուսա-

տան: Պ. Երիցեանը («Փորձ» երկր. տարի եր. 380—381), պ. Բաբիշին և Յովսէփ արքեպիսկոպոսը առում են թէ Մելիք-Մեժլումը և Մելիք-Արսլը Շուշի բանախց ադատուելով գնացին Հերակլի մօտ օգնութիւն խնդրելու: Բուրնաշովը պատրաստովում է դրնալ նրանց հետ, բայց այդ միջոցին հրաման է ստանում յետ դառնալ Ռուսաստան: Իսկ «Բաղանիք»-ը առում է (եր. 87—89) թէ մելիքների փախչելուց յետոյ անցել էր երկու ամիս, Շէյթան-Քիւնին դարվելի Հաղուստով գնում է Արգաւիլ, որ տեսել է ամենաքիչը մի երկու շաբաթ դորձ դրաւ, Մելիք-Բախտամից պատասխան է բերում, այդ էլ մի երկու շաբաթ. այսքան ժամանակից յետոյ միայն Նորահիմ խանը զօրք է պատրաստում Բուրնաշովի դէմ, որը, ինչպէս ասացինք, Գանձակի սահմաններից է յետ դարձել: Բացի դրանից մեր յիշած ազրիւրները հաւատարմացնում են որ երկու մելիքները Բուրնաշովի հետ են գնացել Քիւֆլիս: Իսկ «Բաղանիք»-ը մի քանի ամսից յետոյ է յանձնում Նիւխտանը, Ջրաբերդը և Պաշենը խնածախցի հսկաններին և ապա միայն մելիքներին Քիւֆլիս ուղարկում:

Մինչև այստեղ պատմում էր Ապրեսը, որ և սկսել էր պատմութիւնը: Մենք զարմանում էինք, թէ ինչպէս նա 1787-ին գէպի Նրասիս դորձած արշաւանքի մասին խօսելով իբրեւ տկանատես Վենք գնացինք է առում, մինչդեռ արդէն յայտնի է որ

նա իր զինուորական կեանքը սկսել է 1795-ին, այսինքն դրանից ութ տարի յետոյ: Բայց ահա յանկարծ մեր առաջ բանում է ԱրրաՀամը և սկսում է ինքը պատմել: Սա ցոյց է տալիս թէ Վաղանիք-ի Հեղինակը որքան բոբիկ պատմող է: Մի պարզ դասաւորութիւն էր Հարկաւոր, սկզբից մի փոքրիկ բացատրութիւն, թէ այսուհետև պատմում է Հայրս, և ընթերցողը չէր շփոթուիլ: Բայց արի և տես, որ կան մարդիկ, որոնք Հիացած են այս տեսակ դասաւորութեան վրայ . . .

ԱրրաՀամն ասում է թէ ԱրրաՀիմ խանն ունէր 6000 զօրք, իսկ ես 5000 կանոնաւոր և 3000 անկանոն զօրք: Թէ միանգամայն սուտ է այս թիւը, յայտնվում է նրանով, որ կանոնաւոր զօրք այդ ժամանակ զոյութիւն չունէր: 1780 թուականին զօրավար Սուլթոօվին տուած ծրագրի մէջ Յովսէփ արքեպիսկոպոսն ասում է թէ Հարկաւոր է մի քանի թնդանօթածիղ և հետեակ զօրականներ թողել Հայ դաւառներում, որ որանք սովորացնէին Հայերին կանոնաւոր զինուորութիւնը (Содр. акт. Зако. II, кр. 70): Սա մի կողմ մնայ. խնածախցի ատանները իրանց 8 հազար զօրքով ինչո՞ւ չեն կարողանում յարձակուել 6000 զօրքի ապաւինած ԱրրաՀիմ խանի վրայ. ասելու կարիք չը կայ, որ այդ անպարտելի հսկաները կարող էին մի որ և է ժամում փչել աշտրել թուրք խանին: Ել ինչո՞ւ էին իրանց մելիքներին

ղրիում վրայ դուռը մուրալու և զթուծիւն հայ-
ցելու: Բայց մեր հեղինակը ուշադրութիւն չի դարձ-
նում այս հակասութիւնների վրայ, շտապում է
դովել փառաբանել իր հսկաներին: Ութ հազարա-
նոց բանակը երեք մասի է բաժանում: Յարձակվում
են ամարանոցներում դանուղ մահմետականների
վրայ, յետոյ դաշտերում ֆուսթանների վրայ, ոչնչաց-
նում են ամբողջ թուրք ազգաբնակչութեան հինգ
մասից երեքը:

Երբահիմ խանը 2000 զօրք է ուղարկում Խնա-
ծախը (միշտ Խնածախ, անմահ Խնածախ) աւերե-
լու: Բայց ի՞նչ պտուղներ է ձարել խանը: Մերայինք
կոտորում են 1304 թուրք զինուոր, մի ուրիշ տեղ
բնաջինջ են տնում խանի զօրքի միւս մասը և Մե-
լիք-Ալաշվերդու 200 հայ մարդիկը:

Յայտնվում է կրկին Շէյթան-Թիւնին և պատ-
մում է թէ խանը Վարանդայի զօրքին հրամայել
է Շուշի դալ և թէ դրեց Թիֆլիս Հերակլին ու եր-
կու հայ մելիքներին կալանաւորէ իրան զրկէ, խոս-
տանալով ամենամեծ վարձագրութիւն: Թէ որտե-
ղից իմացաւ այդ Թիւնին մի այսպիսի կարեւոր
դադանիքը, մեզ իհարկէ, չի ասիլ հեղինակը, որով-
հետեւ միանգամ ընդ միշտ ասել է, թէ Շէյ-
թանի ձեռքում անհնարին բան չը կար: Շէյթանը
եթէ մտքումը դնէր, մի օրումը կարող էր մելիքնե-
րին հասցնել և Ֆրանկլինի ու Վաշինգտոնի բանակի
դադանիքը... Մենք հաւատում ենք, որ ապրենք:

Ահա Թիւնու մի ուրիշ հրաշքն է: Նա իբրեւ Մելիք-Շահնազար մանում է Երրահիմ խանի մօտ, զինւորական խորհուրդ է կազմում նրա հետ՝ ներկայութեամբ Եսայէլ կաթողիկոսի: Այդ ժողովի ընդունած հինգ կէտերը դրած են 102 երեսում: Հետաքրքրւողը կարող է կարդալ: Շէյթանն խիոյն անհետանում է և գալիս է Աբրահամ Բէկնազարեանցին յայտնում: Որովհետեւ Աաքե-Ջաքին դրանից առաջ ուղարկուած էր Թիֆլիս մելիքներին իմաց տալու խանի վճռի մասին, ուստի Քաչալ-Սաքի անունով մի ուրիշ հրակայի միջոցով Աբրահամը հարկաւոր կարդադրութիւններ է անում: Տասն և հինգ ժամից յետոյ վերադառնում է Քաչալ-Սաքին, նոյնպէս և Աաքե-Ջաքին Թիֆլիսից: Որովհետեւ այդ Աաքեւ Թիֆլիս է ուղարկւում հէնց այն ժամանակ, երբ Շէյթանը սկսում է պատմել իր Մելիք-Շահնազար դառնալը (եր. 101), ուստի այն է պարզ դուրս գալիս, որ նա Թիֆլիս գնաց և վերադարձաւ, դորժ գնելով Քաչալ Սաքուց մի քանի ժամ աւել, այն է՝ ամենաշատը քսան ժամ: Արկին էլի հաւատում էր, որ ապրենք, և որ հասկանանք Ջաքու կաքաւ լինելը:

Երրահիմ խանը 200 մարդ է զրկում որ Քանձատարի Սարգիս եպիսկոպոսը Շուշի բերեն: Հսկաները կոտորում բնաջինջ են անում այդ զօրքը և Սարգսին՝ ասնում են Քանձակ (եր. 105): Մի և նոյն ժամանակ Խաճախի և Ասկարանի մօտ միւսները

կոտորում են 1000 մարդ, ընդամենը խանի զօրքից 5300 մարդ: Թէ Կաքե-Ջաքին մի քսան ժամումն էր թռել Թիֆլիս և յիս դարձի, երևում է և նրանից, որ հեղինակի ասելով այդ 5300 մարդը կոտորել են երեք օրում: Իսկ Կաքե-Ջաքին ներկայ է եղել թէ առաջին պատերազմում, երբ կոտորուել են 2000 մարդ և թէ վերջին պատերազմում, որ ինչպէս յայտնի է, տեղի է ունեցել նրա Թիֆլիսից դալուց յետոյ (եր. 104—105):

Խանը քնացել էր փակուած Շուշիում 600 բերդապահների հետ: Բայց նրան բոլորովին ուժաթափ անելու մտքով Աբրահամը ուրիշ կարգադրութիւններ էլ է անում, այն է կալանաւորել անհարազատ մելիքներին, նոյնպէս և պատժել Մելիք Շահնազարին: Բայց երեք օրից յետոյ Շէյխման-Թիւնուց իմանում է, որ Շահնազարը մեռել է (1791): Աբրահիմ խանը քնաց Շուշիում իրբն ամի բանտարկեալ և սարսափահար գերի (եր. 110): Նս կասեմ, որ խանը (եթէ միայն ճիշտ էր այս բոլորը) առիւծների թագաւոր էր, հսկաներից ամենամեծը, որովհետեւ բոլոր ինաժախցի տխտանները իրանց 8000 զօրքով չեն համարձակվում մօտենալ նրան:

Մի գիշեր կրճովը (ո՞ր կրճով) Շուշի են մտնում Բէկնազարեանցը և իր ընկերները, կոտորում են Աբրահիմ խանի տան վրայ հսկող յիսուն գիշերապահներին և նրա դռնից մի տախտակ են կախ

տալիս, որի վրայ սպառնալիքներ էին գրել, և իրանք էլի յետ են դառնում: Իսկ այդ քաջերը մի մի 'Իօն-Քիշտաներ են. կոտորել են խանի թիկնապահներին և էլի նրան ազատ են թողնում, գիտեն կրճով Նուշի մոնիլ և էլի այդ բերդը անգրաւ են թողնում, մի թշուառական Մելիք-Ալլահադիւրդու ետեւից ընկնում, յետոյ էլի բերդը պաշարում: Ի՞նչ ասես:

Եւ դեռ. դիտէ՛ք, այդ դրութիւնը երեք ամբողջ տարի է քաշում. յանկարծ 1794 թուականին Մելիք-Մեխլումն ու Մելիք-Աբովը հրաման են ղրկում որ հայոց զօրքերը Գանձակ ժողովուին: Ինչո՞ւ, ինչի՞ ստիպմամբ: Բէկնաղարեանցը նրանց իմաց է տալիս, որ այժմ չի կարելի թողնել Նուշու շրջակայքը, եթէ թողնեն՝ խանը կրկին կը զօրեղանայ: Ոչ, ասում են մելիքները, պէտք է դան»: Եւ այսպէս ասում են այն մելիքները, որոնք նախատուած, անպատուած են այդ իսկ խանից, որին կուլ տալը այդ ժամանակ ոչինչ նեղութիւն չի պահանջում: Վարժես իրանք, մելիքները, չէին կարող դալ այդ յաղթական զօրքի մօտ:

Յանկարծ տեսնում ենք մելիքներին և հայ զօրքը Կուսապատ գիւղում: Մելիքները շնորհակալութիւն են անում բոլորին, յայտնում են թէ ռուսաց թագաւորին իմաց են տուել իրանց դրութիւնը և իմանալով Հերակլի դաւաճանութիւնը, թողել էին Թիֆլիսը

(«Խամա. Մէլիք» եր. 144): Հէնց որո՞հ համար էին զօրքերը կանչել... Շուշխում զօրք չը կայ, խանը բանտարկուածի է նման, նրա կողմնակից մելիքները այլ ևս չը կան. և այդպիսի ժամանակ խնածախցի նուրբ քաղաքադէտ հօսաները իրանց իշխանների մօտ գնացին ինչո՞ւ համար: Մի՞թէ դեռ. պարզ չէ, որ այդ բոլոր մարդիկ մի ծախ խելք չունէին: «Նաղանիք»-ը այստեղ ցխի մէջն է գցել մելիքների անունը, իսկական պատիւը... Աղձաառուած պատմութիւնը առասպելի փոխելով, միշտ այսպէս կը լինի: «Մհ, կարի է առասպելը, այլ և առասպելաց առասպելը (Խորեն. Բ, Ը.):

Թէև արդէն գիտենք, որ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսին Գանձակ են փախցրել, բայց հեղինակը կարծես մոռանալով այդ, ժԲ զլխի սկզբում ասում է. «Արդէն Գանձակ հրաւիրուած էր Ջալալեան Սարգիս եպիսկոպոսը»: Պատմում է նրան կաթողիկոս ձեռնադրելը և յետոյ տեղեկութիւններ մելիք-Ջումշուդի մասին բոլորովին նման «Խամա. Մէլիք» (եր. 151, 161 և 163): Մելիքները յայտնում են թէ իրանք վճռել են մի չարժական (?) դադթականութիւն հաստատել Թիֆլիսի և Գանձակի կողմերում, որպէս զի մօտ լինէին ուռնաց: Մենք արդէն ասել ենք, որ մելիքները կամաւորապէս դադթականութիւն չէին հաստատել, այլ պարսից և օսմանցոց տանջանքներից ազատուելու հա-

մար մի քանի անգամ խնդրել են որ ուստաց կա-
ռավարութիւնը իրանց և ժողովուրդը տանէ Ռու-
սաստան: Երևի այստեղ էլ այդ դիտաւորութեան
կրկնութիւնն է, որ Հեղինակը մեծամտաբար վե-
րադրում է յարմար յարաբերութիւններ ունենալու
պատճառին, որ շատ անհամոզեցուցիչ է:

Չասելով թէ որքան ժողովուրդ ուր դնաց
(Հեղինակը շատ է սիրում հաշիւ տալ), դարձեալ
իր խնածախցի հսկաների օձիքիցն է բռնում: Պատ-
մում է թէ ինչպէս դոյացան քաջերի դիւղերը,
որտեղից զաղթեցին նրանք: Բանից դուրս է դալիս
որ Երրահիմ խանը դողում էր այդ քաջերից, ո-
րոնք նախ Զրաբերդումն էին բնակվում, ուստի
մելիք-Շահնազարի միջոցով կամենում է նրանց
կաշառել և իր կողմը անց կացնել: Տալիս է 300
թուման փող, մի մեծ տարածութեամբ երկիր
բնակուելու համար: Այս մէկ հանգամանքը ցոյց է
տալիս, որ Երրահիմ խանը կարողանում էր իրա-
ւունքով Ղարաբաղի հողերը սրան ու նրան տալ
իսկ խնածախցի դիւցազունները, ըստ երևոյթին,
հաճութեամբ ընդունում են այդ պարգևը, թէև
վերջերում կռկռում են, թէ խաները իրաւունք
չունին հողերի վրայ: Բացի այս ամենից Երրահիմ
խանը թղթով պարտաւորվում է դիւցազուններից
«ղլիահարկ և կամ տասանորդ չը ստանալ» (երես
117), մի ապացոյց, որ խանը իր օգտին ժողովրդից

Հաղկ էր ստանում, հեռուաքար և այդ երկրի տէրն էր, և ոչ թէ մի փայտի արձան, որ դրած էր Շուշում՝ չը գիտենք ինչ քանի համար: Մեղիք-Սեդամը յօժարվում է որ իր քաջերը խանի առաջարկութիւնը կատարեն. դիւցազունները ստանում են շնորհած երկիրը և այդտեղ բնակվում:

Յետոյ ասում է թէ դիւցազունների նախնիքը դադլթեղ էին Քշտաղից: Բալուջեցիք և խնածախցիք մի երկրացի էին, ասում է հեղինակը. բայց այսօր այդ երկու դիւղերի լեզուի մէջ զանազանութիւն կայ. բալուջեցիք խօսում են Ղարաբաղի գեղջկական լեզուով, իսկ խնածախցոց լեզուն շատ նման է մեծ Սիւնիքի գեղջկական բարբառին: Նոյն իսկ Հին Քշտաղս դաւառը, որ յիշում է Առաքել պատմագիրը (դը Գ.), ըստ վկայութեան Չամչեանի *) դանվում է «ցԱղուանս հայոց՝ ի սահմանս Սխական գաւառի և Խաչենոյ»: Նթէ, այսպէս է, էլ լինչ դադլթականութիւն կարող է լինել քանի որ «Գաղտնիք»-ի նկարագրած և այժմեան խնածախը այդ ցոյց տուած սահմաններումն է դանվում:

Իբրահիմ-խանը շատ շուտ է զղջում, որ այդ հսկաներին տեղ սուլաւ: Արտհետե ասում է հեղինակը, այդ քաջերը մի քանի ժամանակում 3000 թուրք կոտորեցին: Խանը էլ զօրք ուղարկեց, որ հսկաների արտերը աւերեն, բայց ինչ ասել կուզի,

*) Հատ. Գ, «Ցանկ անուանց» էր. 195.

այդ պօքն էլ ջնջուեցաւ: Այդքան հրաշքներ գործող տիտանական ժողովուրդը հարիւր քսան ընտանիքից էր կազմուած (եր. 121), հետեւաբար և ամեն մի ընտանիքին մի հսկայ գցելով, դուրս է գալիս, որ այդ վիշապները, փիղերը 120-ից աւելի չէին: Ճաղանիք Ղարաբաղի -ն, այո՛, շատ անպատուած է իր հերոսներին, տալով նրանց միայն քաջ անունը: Ո՛չ, այդպիսիներին քաջ չեն ասում, այլ փահէվան, հսկայ, տիտան, վիշապազուն: Մակար վարդապետի հեղինակած Միրզա և Աննա սիրային վէպի մէջ (Զմիւռնիա, 1876 թ.) դուրս է բերած մի ընտանեկան հանդէս Խնածախ դիւղում 1840-ական թուականներին (եր. 68—69): Հանդիսականները խօսք են սկսել խաների մասին: Որը դուրս է խաներին, որը պախարակում: Բայց այս բաղմաթիւ հսկաներից և մէկի անունը, այսքան կոտորածներից և մէկը չեն յիշում այդ խօսակցութեան ժամանակ, ուր ներկայ է եղել և հեղինակը: Չենք հաւատում որ այդ ժամանակուայ մարդկանցից մի քանիսը տեսած չը լինէին հսկաներին կամ լսած նրանց անունը, և չենք կարծում թէ այնքան ապիրախտ որդիք կը լինէին այդ գիւղացիք, որ գէթ մի բառով չը յիշէին այս մեծամեծ և սքանչելի քաջութիւններից մէկը: Պարզ է, որ այդ հանդիսականները միայն եղածի մասին են եղել խօսելիս: Անցնե՛նք:

Սարգիս կաթողիկոսի օծումից յետոյ Երբաճիմ խանը աւելի ևս տկարանում է: Վաճենուստեք ուժաթափ էր ճրո-խանն (եր. 123):

Մի քիչ առաջ (եր. 112) մեղքները ուրախութեամբ յայտնել են ժողովրդին, թէ Աղա-Մամադ-Շահը նամակով յայտնել է իր դարուստը: Հարկ չը կայ ասելու, մեղքները Շահին շատ էին բարեկամ, որ նորին վեհափառութիւնից նամակ ստանալու բախտին արժանացել են: Նրանք ուրախ էին և այն պատճառով, որ Շահը դպիս էր Երբաճիմ խանին ոչնչացնելու: Իսկ այժմ տեսէք ինչ է առում հեղինակը (եր. 123). Քայց որովհետեւ այդ միջոցներում հարադատ մեղքներն, որ շարունակ գիժում էին Ռուսաց կառավարութեան յայտնելով Շահի արշաւանքը՝ տեղեկութիւն ստացած էին Ռուսաստանից թէ շուտով Տիֆլիս հասնելու էր ուսուկան զօրքն Շահի արշաւանքը արդեւելու՝ այս պատճառաւ ճրո-խանն վերջին ծայր յուսահատած էր: Հիմա կարողանում էք հասկացէք այս խառնափնդոր շլաւ-փլաւը:

Ուրիշ առակ: Երբաճիմ խանը յանկարծ սկսում է թուրքերին մի դաւառից միւս դաւառը տեղափոխել իր շահերին համեմատ: Այդ թուրքերը խանին զգալանի հարկ էին վճարում (նւմնից էին վախում): Այն թափառականներն փոխադրուեցան ոչ թէ կամաւ, այլ ճրո-խանի կիսով չափ թախան-

ձանքից ստիպեալ և կիսով չափ բռնութիւնից, որք (որք ??) ակամայ զօրք ևս տուին (եր. 125): Այս տեղափոխութիւնները անհաւատալի են նոյն իսկ այն պատճառով, որ Վի բանտարկեալ և սարսափահար գերի և շուժաթափ խանը չէր կարող ոչ միայն բռնութիւն դործել այլ և հրամայել: Հետեւաբար և անհաւատալի է հսկաների այդ մահմեաականներին յիր ու ցան անելը:

Այդ միջոցներում (1795-ին) հարազատ մելիքները, բացի մելիք-Մեժլումից, միաբանվում են Իբրահիմ խանի հետ և փակվում Շուշի բերդում Աղա-Մամադ-Շահի արշաւանքը լսելով: Մենք արդէն գիտենք (Գլ. Ա), որ խնածախցի հսկաներն էլ, չը հաշած որ այնքան թշնամութիւններ են արել թուրք խանին, վատաբար դնում են այդ խանի մօտ, Շուշի: Որտեղից որտեղ ընկան, Տէր Աստուած:

Արբաշամ Բէկնաղարեանցը այստեղ վերջացնում է իր պատմութիւնը անցեալի մասին: Գնդապետ Մելիք-Հայկազեանը սկսում է իր տոհմի պատմութիւնը, որ զլիաւորապէս վերցրած է Առաքել պատմադրի Պ. զլխից և դրած համաձայն Չամչեանի ժամանակագրութեան:

Մելիք-Հայկազեանի հետ խնածախցիք գալիս են շահի բանակը: Ալիբաւորները մանում են բերդը, որ էզուց էլի գան խառնուեն շահի զօրքի հետ: Աղա-Մամադ-Շահը սիրով ընդունում է բոլո-

րին, իսկ Ապրեսին որդեգրում է իրան, այն պայ-
մանով միայն, որ երիտասարդը անխախտ պահէ
իր հաւատը, լիզուն: Մոռացանք ասել, որ շահը
քսան վրան ունէր, իսկ Մելիք-Մեծլումը քառասուն:
Լսելով իր ղօրքերի կոտորուելը, շահը վշտանում
է և երգվում բոլոր շահերի գերեզմաններով՝ կո-
տորել Իբրահիմ խանը իր գերտաստանի հետ:
Յետոյ նա իր սեփական ստորագրութեամբ մի
արտօնաթուղթ է տալիս Մելիք-Մեծլումին, որի
մէջ ասուած է, թէ մելիքը ինչ ինքիր առաջար-
կելու լինի, շահը կը կատարի անպատճառ, թէ
շահը, քանի որ այս կողմերումն է, ամեն ինչ պի-
տի դործէ մելիքի և Գանձակի Զաւադ-խանի խոր-
հրդով, թէ Սիւնեաց բոլոր աշխարհի հայ ժողովրդին
թէ այս և թէ հետեւի ալ արշաւանքներում ոչինչ
վնաս չը պիտի հասնի շահի կողմից, թէ շահը պար-
տաւորվում է ոչնչացնել Ղարաբաղի խանութիւնը,
հաստատել մելիքութիւնը. և թէ շուտով Պարսկաս-
տան կը քշուին այն մահմետականները, որ Ղարա-
բաղ են բերել Փանահ և Իբրահիմ խաները: Աղա-
Մամադ-խանը յաղթուած էր, գթուած էր, թէ ինչ
էր տեսել մելիքից, որ այսպիսի դաշնադիր ստորա-
գրեց:

Առ հասարակ «Գաղտնիք»-ը չափազանց բա-
րեհոգի ու մարդասէր է ցոյց տալիս Աղա-Մամադ-
խանին: Մարդ զարմանում է, կարդալով Մելիք-Մեծ-

լումի և այդ բռնակալի յարաբերութիւնների մասին: Տեսէք մինչև ուր է հասնում շահի բարեւր-
աութիւնը, որ նա մինչև անգամ կամենում է մի
առիւծադրօշմ շքանշան (???) կախեր Աբրահամ
Բէկնաղարեանցի կրօնքին չի վարձատրութիւն Յակ-
քարի քաջութեան» (եր. 149), այսինքն մի թա-
ղաւոր ուղում է պարզե տալ մի մարդուն, որ իր
սեփական զօրքը կոտորել էր: Նթէ ահարկու ներ-
քինի շահին այսպիսի զեղեցիկ յատկութիւններ
տար մի մահմետական պատմիչ, այդ ներքի կը
լինէր: Բայց երբ նոյնը անում է մի հայ, մի քրիս-
տոնեայ զրոյ, այնպիսին շատ յանցաւոր է:

Ամբողջ Թիֆլիսը քարուքանդ անող Ադա-Մա-
մադ-Շահի զործերը նկարագրում են ժամանակակից
ականատեսները և ի՞նչպէս են նկարագրում: Վեր-
ցրէք 1877 թուի «Արարատ» ամսագիրը, ուր պ.
Գ. Շիրմաղանեանը գետեղել է շահի զօրապետնե-
րից մէկի, հայազգի Նաղուբ խանի մանրամասն և
ճիշդ պատմութիւնը: Կայ և իշխան Նզոր Խուբովի
հետաքրքիր յիշատակարանը, որի ուղևորէն թարգ-
մանութիւնը ապուկ է Պետերբուրգում 1811
թուին «Описание достопамятныхъ происшествій
въ Арменіи» վերաառութեամբ: Այդ երկու ճշգրիտ
աղբիւրները ներկայացնում են Շահին մի մար-
դակեր գաղանի պատկերով, որ յատուկ է մի ա-
սիացի բռնաւորին, որը յանկարծ դուրս գալով

անյայտութիւնից, իր կամքի ոյժով, հրով և սրով
 հպատակեցրեց իր ահարկու զօրութեանը մաս
 մաս քայքայուած, անիշխանութեան շնորհիւ թը-
 շուառութեան հասած Պարսկաստանը, որի մի գա-
 ւառն էր և Ղարաբաղի խանութիւնը: Նաղուբ խանն
 էլ եղել է նուշին պաշարող զօրքի մէջ, բայց յի-
 շում է միայն Մելիք-Մեժլումին, որ Ձաւադ-խանի
 հետ եկել էր զահի գուռն: Ահա ինչ է ա-
 սում տկանատես և դործին մասնակից Նաղուբ-
 խանը այդ տրշուանքի մասին: «Մասնք Ղարա-
 բաղի և Նուխու հողն՝ ինչպէս մորեխ... Քանի
 հաղարաւոր գերի քրիստոնեայք... քրիստոնեայք
 եմ ասում, մի՞թէ բացի Հայոց աղզէն, ուրիշ մին
 քրիստոնեայ աղգ կար էն աեղրանք: Քաւ լիցի:
 Ողորմելի Հայերն անաէր անտէրունչ... Հա՛, Հայքն
 էին մեր զերիքն»: Նկարագրելով զերկնների թշուառ-
 դրութիւնը, նա ասում է. «Չկարծես թէ էն ողոր-
 մելեաց ողբն ու աղաղակը չէր հասնում շահի ա-
 կանջն: Նրբէք փոյթ չէր նրան էնքան ողորմելեաց
 արտասուներն, արգարութիւնը և իրաւունքը չէր
 գրած նրա զրքումն»: (Պարսաա Վ, թիւ Բ, եր. 294—
 295): Համանման խօսքեր դործ է ածում և իշխան
 Խուբովը: Պահամմադ շահը, մարգկային աղգի այս
 հրէշը, բաւականութիւն էր զգում այդ աղգը ջն-
 ջելով և գիւղերը աւերելով. մի քանի անգամ պա-
 շարելով Ղարաբաղի բերդը և ամեն անգամ անյա-

Ջող, միշտ իզուր կորցնելով իր զօրքերը, նա վառուել էր դժոխային կրակով՝ (Եր. 11): Իսկ Կոմս Պլատոն Զուբովը, որ այն ժամանակուայ Ռուսաստանի առաջին պետական մարզն էր, 1796 թ. փետրվարի 19-ին Յովսէփ արքեպիսկոպոսին դրած իր նամակում (Собр. акт. Зап. III Եր. 356) այդ ներքին շահին անուանում է «անագորոյն» բռնաւոր, որ բարբարոսաբար ոչնչացնում է իր իշխանութեանը ընդդիմացողներին և զերում է քրիստոնեաներին:

Մեզ ասում են թէ Ապրես Բէկնաղարեանցը ակնհայտապես պատմիչ է և թէ նրան ղեկավարող հայրը «երեւելի պատմագէտ» էր: Սակայն ինչու այդ նորագոյն Նդիշէն Զաքարիայի պէս պապանձուել է այս սոսկալի գաղանութիւնների մասին: Մի բառ, մի տառ չը կայ, որ ցոյց տայ թէ այն ժամանակները այս տեսակ ղերիվարութիւն, սրածութիւն կար: Այլ ընդհակառակն մի շարք վիպական գործողութիւններով նա ցոյց է տալիս, թէ այդ «հրէշ»ը խոնարհուել էր մի հայ մելիքի առաջ, որին յանձնել էր իր բոլոր իրաւունքները, իր կամքը, իր բոլոր զօրքը (Եր. 30), մի խօսքով ամբողջ այդ արշաւանքի զլուխ էր կանդնացրել նրան:

Կարծես դեռ բաւական չէր այսքանը, ուրիշ հրաշքներ էլ են մեզ ցոյց տալիս: Ահա հեղինակի սիրած տիտաններից Պել-ձամալը երեք հարիւր հայ և թուրք զինուորներով գնում է պաշար ճա-

բեւոյժ: Սասկի առանց փողի մահուամբ այլոց կեանք տալն է, տաւոմ է նա: Հիանալի սրախօսութիւն: Պեղի զօրախումբը հասնում է ամարանոցները, այդ տեղ շահի հրամանով է կոտորում է վեց հազար թուրք և շահի բանակն է բերում 58000 զլուխ զանազան անասունների: Հաւատացէք, ընթերցող, այդպէս տաւոմ է հեղինակը (եր. 144): Բացատրութիւնները աւելորդ են: Անցնենք:

Ահիլք-Աեժրումի և Ջաւադ-խանի հետ Շահը զինուորական խորհուրդ է կազմում: Ազա-Մամադ-Շահը, կը նշանակէ, խորհուրդներով էր բան տեսնում և ուրիշ խորհրդական չունէր, որ հէնց այդ երկուսին է իր մօտը նստացնում: Բայց ներողութիւն, մոռացայ որ շահը զրով պարտաւորուած էր զբանց խորհրդովը միայն շարժուել: Վճռում են հաղանդութիւն պահանջել բերդի ժողովրդից, եթէ չը հաղանդուի, ուրախութիւն բերդը: Խանի պատուախանը բացասական էր: Բերդը պաշարւում է, հաղորդակցութիւնները խզւում են: Բայց բալուջեցի և խնածախցի հսկաները ամեն դիշեր անարգել մանում են բերդը, զգողանի հոգում իրանց ընտանեաց պէտքերը, լրտեսում են և այլն: Արծես այն ժամանակուայ Շուշին մի Փարիզ էր, ուր կարելի լինէր մի քանի տասնեակ մարդկանց ներս մտնել և դաղունի զործել:

Պաշարումը անօգուտ անցաւ: Շահը արտում

էր և յուսահատ ։ Կրկին ժողով է կազմում ։ այս անգամ բացի Մելիք-Մեժլումից և Զաւադ խանից ներկայ է և Սիրահամը ։ Նրանքի պատմագէտը յայտնում է, որ ինքը գիշերներով շատ է մտնում բերդը, ուստի կարող է մի գիշեր նրա դռները ներսից բանալ ճահի առաջ, եթէ միայն սա կը բարեհաճի իր առաջարկութիւնները կատարել, այն է՝ Ղարաբաղից հեռացնել բոլոր թուրքերին, որոնք չեն կարողանում « Սրցախ » *) անուանել, այլ Ղարաբաղ են ասում, յետոյ այդ բոլոր կրկիւրը մելիքների սեփականութիւն դարձնել և այլն ։ Ճահը ուրախութեամբ ընդունում է այդ պայմանները, կրկին վաւերացրած թուղթ է ապրիս ։ « Սպա որոշուեցաւ Շուշին անդրաւ թողնել մինչև Կաքի-Զաքու վերադարձն, որ զըկու-

*) Մական վարդապետը ինչպէս գիտէ հեշտութեամբ տասնեակ հազարներ կոտորել ալ թղթի վրայ, նոյնպէս էլ հեշտ բացատրում է պատմական անունները, Ղրա ասելով « Սրցախ » կազմուել է « սար » և « ցախ » բառերից ։ Յետոյ հետևելով Մադաթովի կենսագրութեանը, ասում է թէ Ղարաբաղ անունը թուրքերը տուել են, առաջին անգամ անսնկով Կուր գետի աջ կողմի լայնատարած անտառը ։ Թէ որքան քմածին է այս բացատրութիւնը, բաւական է յիշել որ հինգերորդ դարու պատմիչները Արցախը « Արծախ » էլ են անուանում (Մատենագրութիւնք Եղիշէի, Վենետիկ, 1859 թ. եր. 97—99) ։ Հ. Ինճիճեանը (Ստորագր. հին Հայաս.) ասում է թէ շատերը « Արծախ » էլ են գրել ։ Զարմանալի է թէ ինչպէս մարդիկ ծանր ու բարակ դատողութիւններ են անում, նեղութիւն չը կրելով մի երկու փաստ ձեռք բերել իրանց ասածների համար . . .

ած էր Մեղիք-Արտուրեան Փրէյդուն բէկի մօտ Տփլիսս, մի ստոյգ անդէկութիւն բերելու Ռուսաց խոստացած օժանդակ զօրաց արշաւանքի մասին: Ապքե-Չաքու դալստեանն սպասուում էր ժամից ժամ (կր. 149): Այս տարօրինակ խօսքերը եւ այնպէս եւմ հասկանում, թէ Շահը սպասում էր ռուսաց օդնութեան, որ միանդամայն ցնդաբանութիւն է, քանի որ Շահը Ռուսաստանի անհաշտ թշնամին էր: Աթէ այսպէս չէ, էլ ինչո՞ւ էին սպասում ռուս զօրքի դալստեանը, չէ՞ որ Շուշին հեշտութեամբ դրաւելը մի զիշերուայ դործ էր:

Այդ միջոցում Շուշիում փակուած հայ մեղիքները նամակներ են դրում Մեղիք-Մեծըւմին և Արահամին: Նրանք աղաչում են, որ այդ երկու հայերը մի կերպ Շահին տանեն Թիֆլիս, որպէս զի Ղարաբաղը չը վնասուի, որպէս զի ժողովուրդը կարողանայ արտերը հնձիլ և այլ այսպիսի պատճառներ են բերում: Ուշադրութիւն ենք դարձնում այն հանդամանքի վրայ, որ այդ մեղիքները, որոնք այնքան տգէտ էին, որ դրում էին Ղարաբաղի զեղծկական բարբառով (կր. 9), այդ նամակներում կրկին դատողութիւններ են անում քաղաքական շահերի, ձգտումների մասին:

Մեղիքների՝ այդ աղաչանքին զեջանելով՝ Արահամն ու Մեղիք-Մեծըւմը խորհուրդ են անում: Բայց ի՞նչ խորհուրդ էր հարկաւոր: Զէ՞ որ շահը

Թղթով պարտաւորուել էր ամբողջ Սիւնիքի հայերին չը վնասել: Մնում էր այդ Թղթի ղորութեամբ իրաւունք տալ բոլոր հայերին ազատ պարագել իրանց անային գործերով: Աբրահամը հաւատացնում է որ պէտք է Շուշին այդ դիշեր յանձնել Շահին, կոտորել Թուրքերին և անհարազատ մելքներին, իսկ Մելք-Մեծլումը չի համաձայնում: Աբրահամը վերջապէս ընդունում է Մելք-Մեծլումի խորհուրդը և Շահը իսկոյն և եթ համաձայնվում է նախ զնալ Թիֆլիս և յետոյ վերադառնալ ի Շուշի: Ահա մի խայտառակ անհեթեթութիւն, որ տուել են մեր ձեռքը իբրև պատմական փաստ: Բարեբաղտաբար միայն առողջ գատողութիւնը, առանց կողմնակի փաստերի, իսկոյն կարող է ասել, որ սարսափելի ներքինի Շահը երբէք չէր համաձայնուել խաղալք դառնալ այդ երկու մարդկանց ձեռքին: Նա ուրեմն մի ամենայնմար արարած էր, որ համաձայնեցաւ երկու յիմարների ասածին և ձեռքից Թողելով մի դիշերուայ մէջ բերդի դրամը, զնալ Թիֆլիս, դրանով ղորութիւն տալ պաշարուածներին կազդուրուել, պաշար հաւաքել և աւելի յամառութեամբ նստել իրանց ակդերը: Եթէ սա բաւական չէ այդ առասպելը ջրելու համար, լսինք ժամանակակիցների ասածները: Շահի ղորագիտ Եղուբ խանը, Խուբովը միաձայն վկայում են, որ շահի Շուշուց հեռանալու պատճառը բերդի ան-

առիկ դիրքն էր: Եւ շատ զարմանալի է, որ Շահի բանակում ապրող մարդը (Նազուբ խանը) մի խօսքով անդամ չի յիշում, թէ այդ բանակում կային և Արրահամ ու իր քաջերը, թէ Շուշին Շահը թողեց հայերի խորհրդով:

Յիշեալ ականատեսը նկարագրում է պարսից զօրքի կռիւը Թիֆլիսի մօտ, Շահի վտանդաւոր դրուժիւնը, վրացիների քաջութիւնը և յանկարծակի յետ դառնալը: Բայց Ապրեսը, որ այդտեղ էր, կռիւ չի նկարագրում, այլ ըստ ամենայնի համաձայն «Խոմս. Մելիք»-ի ասում է, թէ պարսից զօրքը զրաւեց Թիֆլիսը, մի մասը մանկելով բաղանիքների կողմից, միւսը Սողրակ փողոցից (?):

Այստեղ ահա տեսնում ենք թէ ինչպէս պատմական անհերքելի իրողութիւնը վերջապէս զլուխ է բարձրացնում և իր ներկայութեամբ միանդամայն ջախջախում է այն բոլոր առասպելական հրաշագործութիւնները, որ այնպիսի առաստաձեռնութեամբ հեղինակը փաթաթում է իր սիրած հսկաների շինքին:

Մինչև այժմ մենք տեսանք թէ Շահը ինչ հլուծառայ էր Մելիք-Մեժլումին ու Արրահամին, թէ ինչպէս նա թուղթ տուեց, որ հայերին չը դիպչէ, չը պատժէ. տեսանք նոյնպէս, որ այս ամենը սպիտակ սուտ էր: Մենք իմանում ենք «Բաղանիքից» որ Շահը Թիֆլիսի վրայ զնաց լոկ Մելիք-Մեժլումի

խաթրին (եր. 170), միայն այն պատճառով, որ նրա վրէժը Հերակլից հանէ: Իսկ այժմ այդ իսկ Շահը Թիֆլիսում բարբարոս զազան է դառել, աւերում է, քանդում է, կոտորում. . . Ամենից շատ վնասվում են հայերը: Իսկ Աբրահամի և Մեծլումի պէս ճաշխարհիկ հայրենասէրները ի՞նչ պէտք է անէին. . . Սե անում են: Հեղինակը ուղղում է մի ճարպիկութիւնով էլի նրանց պարզերես անէ: Նա ասում է թէ իր հայրն ու մեղքը Շահին աղերսեցին, որ քրիստոնեաներին խնայէ, և Շահը կարգադրեց սարվաղներ դնել հայոց թաղերի և աների վրայ, որպէս զի աղառ Ֆային ամեն վնասներից (եր. 166): Բայց ի՞նչ գառաւ: Ականատեսները պատմում են, որ պարսից զօրքերը անխտիր կոտորում, դերում էին հայերին և վրացիներին. քանդում էին նրանց եկեղեցիները, կողոպտում էին սպասները, զարդերը, մի խօսքով հայի և վրացու մէջ զանազանութիւն չը կար: Արդ՝ եթէ իրաւ որ հայերի վրայ պահապանների կային նշանակուած, ինչո՞ւ այսպիսի մեծ կոտորած, կողոպուտ եղաւ: Մանաւանդ հայոց եկեղեցիները մերկացան զարդերից. Եջմիածնապատկան զարդերը քսանաչափ անդուկների մէջ իրան Շահին ընծայ տուին (7 Արաբաա «1877 թ. եր. 301): Երկուսից մէկը, կամ Մեղք-Մեծլումը Շահի մօտ չափազանց՝ աննշան մարդ էր, որովհետեւ նրա աղաչանքը առանց հետեանքի մնաց, կամ թէ նա այնպիսի անսիրտ ա-

բարած էր, որ տեսնուամ էր իր ազգակիցներին կոտորածը, իր ազգային եկեղեցիներին աւերումը և այդ բոլորը ոչինչ էր համարում, ուստի և Շահին չէր ցոյց տալիս նրա ստորադրած դաշնաթուղթը (եթէ միայն կար): Նրկուսից որը և ընդունենք, «Նազանիք»-ի անհեթեթ մտքերը պիտի խորտակուին: Ժողով ըզական երդիչ Շամլի-Մեքթին լաւ նկարագրել է Մելիք-Մեթ-լումին, իդուր է «Նազանիք»-ը տքնում նրան և նրա դործակից Աբրահամին արգարացնելու:

»Մեկը Մեթլումը շուն դառնայ, Ջաւան խանն
պատի կուշի

»Քաղաքն վերանա արին տեղի շինեցին բայդուշի»:
(Քնար Հայկական եր. 564):

«Բայ աչօք տեսնում էի հաւատակիցներին
սպանումը և դերութիւնը, տսում է սկանաւտեա Նա-
զուր-խանը («Արարատ» 1877 թ. եր. 302)... Ատր-
պատականը լեցուեցաւ գերիներով: Ննչպէս ոչխար
վաճառում էին: Շատը, կերակուր չը գտնելով և
կամ չկարողանալով ձի, ջորի, ուղտ գտնել վրեն
նստացնել բերել իւր գերիին, ճանապարհին սրտ-
խողխող էր անում: Այս թշուառութիւններից և ոչ
մէկը չի նկարագրում «Նազանիքը», այլ շտապում է
իր հոկաների մօտ: Պատմում է Սայաթ-Նովա երգչի
մասին այն, ինչ որ մենք գիտենք հանգուցեալ Ռե-
որդ Ախվերդեանի գրքից: Չանաղանութիւնը միայն
նա է, որ Ախվերդեանը (տես «Սայաթ-Նովա», յա-

ուաջաբան, եր. 12) ասում է թէ երդչի մարմինը
գտան Վիքանի օրից պարսից Թիփլիզէն գուրս
գալուց յետոյ» և թաղեցին, իսկ «Բաղանիքը»
առաջ է քաշում իր վսեմափայլ հսկաներին, Նէսու-
ռատէօվին և Պել-ձամալին, որոնք որպէս թէ հաս-
նում են նահատակի հոգին աւանդած ժամանակը,
բարկացած երեք հոգի կոտորում են 259 սարվաղ
և ապա թաղում են բանաստեղծին: Նկատելի է առ-
հասարակ, որ պատմական փաստը առասպելի է
փոխվում, երբ փաթաթվում է խնածախցի ախտան-
ների վրին:

Պարսից այս արշաւանքի պատմութիւնը գրչ-
խաւոր կէտերով շատ նման է «Խամս. Մէլիք». հե-
տաքրքիր ընթերցողը կարող է համեմատել: Միմի-
այն պ. Բաֆֆին պարսիկների տարած գերիների
թիւը 12 հազար է զննւմ, իսկ «Բաղանիքը» 70
հազար, ինչպէս գրում է իշխան Մադաթովի կեն-
սողիրը (տես «Մադաթովի կեանք» հայ. թարգմ.
եր. 89):

Ահա այսպիսով գժբախտ Թիֆլիսը քարուքանդ
անելուց յետոյ, Շահը, ինչպէս յայտնի է, յանկարծ
փոխում է Պարսրազ արշաւելու դիտաւորութիւնը
և Նրեանով յետ է դառնում Պարսկաստան: Այստեղ
Ապրեսը աւերացնում է թէ Շահը ստիպուած էր
չլը հետ տանել և հայրս և զիս: Ինչից էր Շա-
հը ստիպուած.— երևի Պարսկաստան ոչ ներքինա-

սկեա կար, ուստի հարկաւոր էր Աբրահամը և ոչ էլ
գրադիր, այս պատճառով տանում են Ապրեաին:
Աբրահամը յօժարութեամբ է ընդունում այդ գե-
րութիւնը, ասելով թէ գրանով աւելի մեծ ծառա-
յութիւն կանէ Մելիք-Մեժլումին, որովհետեւ գտնուե-
լով Շահի մօտ, կը գիւրացնէ Մելիքի յարաբերութիւն-
ները նրա հետ: Ահա թէ վերջը ինչքան աննշան
նպատակ ընդունեց անպարտելի հերոս Աբրահամը,
որ յանկարծ մոռանալով իր ազգասիրութիւնը, իր
կարողութիւնը ամեն մի բոլորէ ջնջել խանութիւ-
նը, դնում է պարսից Շահի հետ, նրա առջեւ երեք
տեղից ծալուած հըր, ծառայ դառնալու: Սուա
չէին ուրեմն այն մեծամեծ խօսքերը և գործերը,
որ դրած էին այս մարդու շարակին, մի մարդու,
որ յանձն է առնում գերութեան դառնութիւնը
միայն նրա համար, որ հեշտացնէ մի մելիքի յա-
րաբերութիւնները Շահի հետ: Ընչ յարաբերութիւն-
ներ կային: Մելիք-Մեժլումը մի մեծ պետութեան
գլուխ չէր, որ մշտական յարաբերութիւնների մէջ
լինէր պարսից դրան հետ և գեսպան ունենալու
հարկաւորութիւն գառ: Արդէն ինչ որ կարողացել
էր, արել էր. Թիֆլիսը աւերակ էր դարձրել իր մա-
սին էլ վաւերացրած դաշնադիր ունէր ծոցումը
դրած: Մտում էր որ սպասէ Շահի դալստեան
և Շուշին քանդելուն: Եւ ՝ Դադանիք-ը ցոյց էլ
չի տալիս, որ Աբրահամը իսկ որ յարաբերութիւն-

ների համար անացած լինի Շահի մօտ. Մեղիք-
Մեծլումը ինչ յարաբերութիւն է ունեցել դրանից
յետոյ Շահի հետ. թող ցոյց տան: Հայրենիքից դուրս
գալիս Աբրահամը տիուր է, բայց ինչ արած: Վա-
լով Պարսկաստան անցանք Խուզափիրին կամրջով:
Շահը Ղարաբաղով չի դնացել Պարսկաստան («Խամս.
Մեղիք» էր. 187), այլ նրեանի վրայով («Արա-
րատ» 1877 թ. էր. 302), ուրեմն Աբրահամը, որ
Շահի հետ էր, չէր կարող Խուզափիրինը տեսնել:

Այստեղ հիշենակը նկարագրում է Ղարաբաղի
աշխարհադրական դիրքը: Բէ ուրքան քաջահմուտ է
նա իբրեւ աշխարհագիր, մի քանի փաստեր կը
բերենք:

«Ղարաբաղի, այսինքն Մեծ և Փոքր Սիւնեաց
ընդհանուր սահման...» (էր. 173): Միանգամայն
սխալ է. Ղարաբաղը Փոքր Սիւնիքի մի մասն է
կազմում: Մեծ Սիւնիքը այն ժամանակները բաժա-
նուած էր զանազան գաւառների, օրին. Ղափան, Բար-
դուշատ, Գինուաղ և այլն. այդ անուններով էր
կոչվում երկիրը և այդ գաւառներից իւրաքանչիւ-
րում նստած էին առաձին առանձին իշխողներ
(տես Գաւաթ-բէկի պատմութիւնը):

Տիղակ գաւառի արեւելեան սահմանը Աուրը չէ
(էր. 174), այլ Նրասխը: Այդտեղ չը կար Գիլափայտ
անունով բերդ «Համանուն սարի գաղաթում շի-
նած»: Գիլափայտի գաղաթը այնքան նեղ է, որ եր-

կու երեք մարդ հազիւ կարողանան միասին շրջել։ Վարանդայի արեւելեան սահմանը Կուրը չէ (եր. 175), այլ կրկին նրասիր։ Նոյնպէս Խաչենի արեւելեան սահմանը ոչ Կուրին է համեմատ, ոչ նրասիրն։ Այս դաւառում գտնուող Խոխանաբերդ ամրոցի անունն բացատրութիւնը ծիծաղելի է։ Հեղինակն ասում է թէ Քալալ-Դօլա իշխանին աւետիս են տալիս, ասելով. «կենեկդ խոխան բերալ առ (կինդ երախայ ծեած է)։ Իշխանն ի պատիւ երախային Խոխանաբերդ է անուանում այս բերդը»։ Բայց Չամչեանը անուանում է Խոխան կամ Խոյախան, իսկ Կիրակոս պատմադիրը պարզ ասում է. «Խոյահանայ բերդ կոչէին ըստ պարսկական բարբառոյն» (եր. 186, Մոսկվա), կամ «ի բերդն, որ կոչի Խոխանաբերդ ընդ բարբառոյն պարսից»։

Յետոյ գալիս է Աղուանից Թաղաւորների և Ղաթարաղի մելիքների տոհմական ցուցակը։ Անունների այդ դասաւորութիւնը Մակար Հայր սուրբը յառաջաբանում հիանալի է անուանում։ Մենք կասենք, որ ձիշդ որ այս ցուցակը լաւ է կազմուած, և դուցէ «Պաղանիք»-ի մի աչքի ընկնող լաւութիւնը սա է։ Բայց և այդպէս պիտի ասենք, որ այդ ցուցակը կազմելը այնքան էլ դժուար գործ չէ։

Աղուանից իշխանների անունների դասաւորութիւնը (եր. 180—185) մի պարզ արտադրութիւն է Մովսէս Կաղականաւանացու պատմութիւնից (եր.

32—33, 135, 273): Զաւալեան իշխանների ցուցակը ինչպէս երևում է, զլիաւորապէս վերցրած է արձանագրութիւններից *) և մահարձաններից, հետևապէս և պէտք է զգուշութեամբ վերաբերուել դէպի այդ ցուցակը, թէ և այդ անունները յայտնի են Զամէանից (հատ. Գ. եր. 185, 211, 260) և Սարգիս եպիս. Զաւալեանցի ճանապարհորդութիւնից (եր. 352—353): Ռիւստանի տէրերի ցուցակի սկիզբը չը գիտենք որտեղից է վերցրած, իսկ Մելիք-Շահնազարեանների ցուցակին, երևի, շատ նպաստել են արձանագրութիւնները (տես ծանօթութիւնները): Միայն ժողովրդի մէջ այժմ տիրող աւանդական համոզմունքն այն է, որ Մելիք-Շահնազարեանների նախնիքը Անիից դաղթած են, իսկ Պաղանիք^աի հեղինակը դրանց նախահայր անուանում է Աղուանից Գրիգոր թաղաւորը: **) Տիղակի մելիքների ծաւ-

*) Արձանագրութիւնները վերցրուած են Զաւալեանցի ճանապարհորդութիւնից:

**) Զարմանում ենք, որ Պաղանիք^աի հեղինակը Աղուանից թագաւորների կարգում է դրել և Քաղայ թագաւորներից երկուսին: Մովսէս Աղաւանտուացու յիշած թագաւորներից վերջինն է Սենեքերիմ: Քայց Պաղանիք^աը դրել է և դրա որդի Գրիգորի անունը և ի հաստատութիւն այդ բանի Մակար վարդապետը ծանօթութեան մէջ դրել է Մաթթեոս Ուռհայեցու պատմութիւնից մի կտոր այս կերպով [եր. 184]. «էին և այլ թագաւորք հայոց ի Գարբանդ աշխարհին... որք էին թագաւորք անարատք»^ա Խնդ^ո է Սահար վարդապետը «աշխարհին» բառից յետոյ կէտեր դրել: Ահա ինչու Ուռհայեցին այսպէս է գրում. «և այլ թագաւորք»

գումը Վասակ թագաւորացիից է գումըս բերում, որ նորոգում է բերքերը և վաղահաս մահով զրկվում է կեանքից: ՝ Սորա յետադաններից (?) Սարգիս և Վարդան վարդապետներն հիմնում են Գոխ անուն վանքը: Գոխի արձանագրութիւնը պարզապէս ասում է թէ հիմնողները եղել են Ամարասայ միաբան Սարգիս և Վրթանէս և պիտի ու պիտի երբ և թէ դրանք շինութեանը ձեռնարկել են ոչ թէ մի հասարակ մշտքով, իբրև սեփական եպիսկոպոսարան (եր. 199), այլ այն պատճառով, որ այդ ժամանակը Նեոտղաց

ւորք Հայոց ի Գարդանտ աշխարհին որ տաի կապանք, սահմանակից օգաց և Աղուանից: Ուրեմն Գարդանդ բառը, ինչպէս և իրաւապէս կարծում է Հ. Զամչեանը (պատմ. Հ. Բ, եր. 1043—1044) այստեղ սխալմամբ է դրած (դուցէ ընդօրինակողի միամտութիամբ, փոխանակ Աբանդ բառի). որովհետեւ յոյն տուած սահմաններին նայած, այդ թագաւորներն էին Բագաց կամ Սիսական թագաւորները, որոնց Աղուանից թագաւորների հետ խառնելու մի հիմք չէ կայ: Ստեփաննոս Օրբելեանը մի ոտանաւորի մէջ գովել է այդ թագաւորներին և ոչ մի տեղ նրանց չի անուանել Աղուանից թագաւոր: Ուր հայեցու հետ մի և նոյն տարում (ՀԱԳ Թուին) այդ իսկ Սենեքերիմը գրում է, ՝ կամաւ կարող հզօրին Յիսուսի եւ Սենեքերիմ թագաւոր Հայոց կացեալ ի տանս Սիսական և Բագաց աշխարհիս՝ (Տես Զալայեանցի Ճանապարհ, եր. 280), շեռեաւ բար, երբ Սենեքերիմը Աղուանից թագաւորի տիրոջս չէր կրում, որանցից է ՝ Գաղանիք՝ շինողը ասում, թէ Վարաբաղի մեկերները Աղուանից թագաւորներից են ծնուել: Այնչ մի հաստատութիւն չը կայ հաւաստալու թէ այդ իսկ Սենեքերիմի թոռները եղել են Վախթանի, Սմբատ և Վասակ թագաւորացուները և թէ սրանք են եղել Ղարաբաղում մելիքութիւններ հաստատողները:

ազգը կործանել էր Ամարասը, երկրի բնակիչներին սրի էր դրել, ուստի իրանք փախչելով այստեղ Հիմնել են վանքը՝ Ամարասայ աթոռի փշրանքները պահպանելու համար: Տիզակի իշխողների (տոհմանուն չունեն) անուանական ցուցակը, մեր կարծիքով, եթէ ճիշտ էլ լինի արձանագրութիւնների հետ, բայց լիակատար չը պիտի լինի հետեւեալ պատճառով. 1085 թուին Մատթէոս Ուռհայեցին դրում է թէ Աղուանից այդ ժամանակուայ թագաւորը Գրիգորն է: Նրա որդի Վասակը հաստատեց Տիզակի իշխանութիւնը, ասում է «Գաղտնիք»ը: Այդ ժամանակից մինչև Մելիք-Աւան Բ-ի իշխանութիւն ժառանգելը (մօտաւորապէս մինչև 1710 թ.) անցել է 620 տարի և այդքան ժամանակ միմեանց յաջորդել են 16 մարդ, նշանակում է թէ իւրաքանչիւրը իշխել է միջին թուով 38 տարուց աւել, որ իհարկէ անկարելի է: Այն ինչ 1710 թուից մինչև 1781 թիւը իշխում են 3 մելիք, հետեւապէս ամեն մէկը միջին թուով 23 տարի:

Առաջին հատորի վերջին գլուխը նուիրած է Աղուանից կաթողիկոսութեան խնդրին, և այդ գլուխը մի պատմական կարեւոր փաստ չի պարունակում, այլ միայն մի կանոնադիր, որ որոշում է հասարակ ժողովրդի և կաթողիկոսի իրաւունքները և յարաբերութիւնները, կանոններ, որոնք յայտնի են իւրաքանչիւր քրիստոնէի:

Յետոյ յանկարծ պատմում է Մելիք-Նահապետի բազմակնութեան մասին, Մելիքի աղջիկ Հիւրպաշ Իբրահիմ խանին կնութեան տալը, մելիքների դրդովելը, նրանց միաբան յարձակուելը Չանախչու վրայ (1781 թուին), Մելիք-Նահապետի բոլոր թուրք և հայ ապօրինի կնիկները և զաւակները կոտորելը: Այս պատերազմը նկարագրած է 80 երեսում, և այս պատերազմում, ինչպէս տեսանք, մասնակցում էր հինգ տարի դրանից առաջ դիտատուած Մելիք-Միրզախանը: Այնտեղ (եր. 80) ասում էր թէ մելիքները կոտորեցին խանի թուրք զօրքերը և յբաւականին զօրքեր Մելիք-Նահապետին, իսկ այստեղ թէ այդ պատերազմում և ոչ մի մարդ մեռաւ (եր. 218), թէ և երեք շարք այդ խօսքերից առաջ ասում է թէ Մելիքի հայ և թուրք կանայքը և զաւակները կոտորեցին: մի թէ դրանք մարդիկ չէին: Խառնակութիւն խառնակութեանց, և ուրիշ ոչինչ:

Երկրորդ հատորը սկսվում է նրանով, որ Աբրահամը պարսից 10000 սարվազով գնում է Հերաթի և Անդաշարի ապստամբութիւնը զսպելու, իսկ ինքը, Սպրհար, պարսիկ վարժապետի մօտ սովորում էր պարսկերէն: Նրա հայրացու բարերար ներքինի Նահը հրամայում է դիւանապետներին, որ այդ դեռ նորուս պատանի աշակերտին տան դիւանատան մէջ գտնուող գաղտնի նամակները և հրովարտակները

ընդօրինակելու և վարժուելու համար: Միամիտ Շահր, ինչ ասել կուզի, չէր հասկանում որ իր մօլլայի աշակերտը գիշերները Նղիշէ էր կարդում, որ սովորի նրա պէս պատմութիւն գրելը, զործ ածելով իր բոլոր գաղանի գրագրութիւնը իբրև նիւթ:

Շահր հրամայում է ամեն տեղ պատրաստ լինել ուռ. սաց արշաւանքին դիմագրելու, խոստանալով շուտով գալ Ղարաբաղ:

Յետոյ Ձաւատ խանը յայտնում է թէ Իբրահիմ խանը իր դաշնակիցների հետ պաշարել է Գանձակը երեք (ըստ «Խամա. Մէլէք» չորս) ամիս, պատմում է Ապրես աղայի պատգամաւորութիւնը պաշարողների կողմից, Մելէք-Մեժլումի սպանուելը, Ապրես աղայի բռնուելը («Խամա. Մէլէք», եր. 197—199): Այդ պատերազմի նկարագրութեան միակ զանազանութիւնը նրանում է, որ ՝ Դաղանիք ՝ի հեղինակը Ապրես աղային սպանել է տալիս Խնածախցի Քեանդխուդա Խաչատուրի ձեռքով, իսկ պ. Բաֆֆիի ասելով նրան սպանել է Ձաւատ խանը: Նոյնպէս և Դալի-Մահրասայ և Թիւլի Արղուման քաջերի սպանուելը առաջինը դնում է Մելէք-Մեժլումի սպանուելոց յետոյ, իսկ երկրորդը — առաջ:

Յանկարծ Խնածախցի հսկաներին տեսնում ենք Ձուրդովի բանակում (եր. 226). նրանք իրանց յատուկ քաջութեամբ Ղարաբաղից հալածում են Շահի զրկած քսան հազար զօրքը: Իսկ երեք երես դրա-

նից առաջ Նահին յայտնում էին այդ քաջերի «հրա-
շագործութիւնները» (եր. 223) յօդուա Պարսկաս-
տանի: Այժմ ի՞նչ եղաւ որ նրանք յանկարծ թշնա-
մացան պարսից Նահին, քանի որ դիտէին որ վեր-
ջինս շուտով դալու է և իրանց ասածն անի: Նա-
հի քսան հազար զօրքը հալածելով, այդ հսկաները
ուրեմն բարեկամացան իրանց վաղեմի թշնամի Եր-
րահիմ խանին, որ դեռ անպատիժ էր մնացել և
սպանել էր տուել իրանց սիրելի Մելիք-Մեծբումին:
Ի՞նչպէս եղաւ, որ այդ բոլորի մասին դեռ գրեցին
Աբրահամին, աւելացնելով Երրահիմ խանի ուռսաց
հպատակ դառնալը:

Այդտեղ զրաժ է և Պել-Ջամալի նամակը «Օդ-
լում զաղանջտայ դըր» զգուելի խօսքերով և «սատ-
կի Զուբովի խօսքով վարձատրութիւնն» հիանալի
սրախօսութեամբ:

Մի և նոյն տարին Նամախու խանը յայտնում է
թէ հայերն էին մեծ յողթութիւն անողը, Զուբովը
քիչ զօրք ունի: Ի հարկէ, Նահն արգէն դիտէր և այն,
որ իր 20 հազար զօրքը ցրել էին խնածախցի քա-
ջերը, և դեռ այս ամենից յետոյ իր աչքի լոյսի
պէս էր պահում իր մօտ այդ քաջերից մէկին և
նրա որդուն:

1797-ին Նահը մտնում է Ղարաբաղ, իսկ Ապ-
րեսը Ֆրանսերէն է սովորում մի բանտարկեալ հայ
կաթոլիկ վարդապետից: Թէ որքան հաւատալի կա-

րող է լինել մի բանտարկեալի և դուցէ մահուան պատժի սպասողի մօտ երթեկեկութիւն անելը և դաս առնելը, այդ թողնում ենք ընթերցողին: ՊՇԱՀԻ պալատում ամենից սիրական ես էի^ս (եր. 229), ասում է Ապրեսը: Չարմանում ենք, որ Շահի որդեգիրը, պալատի այդ սիրականը իր յարերար^սի մահից յետոյ մնաց մի հասարակ գրագրի պաշտօնում:

Աբրահամը վերադառնում է Արաբադից և պատմում է Աղա-Մամադ-Շահի արշաւանքը: Խնածախցի հսկաները Շահին ընդ առաջ են գնում և պատուով ընդունվում, երևի այն պատճառով, որ այդ խիստ հսկաները իր, Շահի, քսան հազար զօրքը հալածել էին և ռուսաց հետ կռվում էին պարսիկների դէմ: Շահը մեծ քաղաքավարութեամբ մտնում է Շուշի, որի տէրը, Աբրահիմ խանը, Պաղատան էր փախել: Բոլոր հայ մելիքները իհարկէ նրա մօտն են: Նրանց և Շահի մէջ կրկին թղթեր են շինվում, իհարկէ կնքած Շահի և մելիքների կնիքներով: Կրկին էլի բացվում է մեր առաջ մի թատերաբեմ: Պարսկաստանի ահարկու տիրապետողը հայ մելիքների հետ ճաշի է նստում, յանձնում է նրանց Շուշին և Արաբադը, այն պայմանով միայն, որ մելիքները հարկ տան: Շուշին նշանակում է գլխաւոր քաղաք, ուր պիտի նստէին մելիքները, հաւասար իրաւունքով և իշխանութեամբ: Հինգ միատեսակ տների պէսք է շինուին

մելիքների բնակութեան համար: Փողովըդական բոլոր տուրքերը հասարակաց գանձարանը պիտի մըտնէին. գանձարանը մի է հինգ դաւառների համար և մելիքների սեպհականութիւն չէ: Գանձարանի ելումուտքը ամեն տարի պէտք է քննել իհարկէ հաշուապահութեան ճիշտ կանոններով: Մի խօսքով մահմետական բարբոսութեան ճաշը ծրարուած է մի այնպիսի կառավարչական ձև, որի նմանը չը կայ և այժմ նոյն իսկ լուսաւորեալ Ներսիսեան: Մելիքները ուրախացած վերցնում են դաշնաթուղթը և խոստանում են ճշտութեամբ կատարել: Այսչափ զբաւառ և հայրախնամ էր Աղա-Մամադ-Յահը դարբաղցի հայերի վերաբերմամբ: Կարևոր ենք համարում այստեղ համառօտօրէն դնել և Նաղուբ խանի պատմութիւնը այդ անցքերի մասին:

Յահը զօրքերի մեծ մասը թողեց քաղաքից դուրս, ինքը մնաց Շուշի Փող չը լինելու պատճառով, զինուորները հարկադրուած էին աւարառութեամբ ապրել: Նրանք ցրվում էին շրջակայ գիւղերը, խլում էին ինչ որ տեսնում էին, ականջ չը դնելով ոչ իրանց զինուորների հրամանին, ոչ գիւղացիների գանդատներին: «Որ կողմը նայում էիր՝ սլարտաւոր էր զօրականը յափշտակութեամբ յագենալ» (Արար. 1877 թ. եր. 306): Շատ անգամ մտնում էին քաղաքացւոյ աները, ձեռք ընկածը խլում էին, հրեմն և ընդգիմացոյններին սպանում էին:

Թէ և ողորմելիքն դանդատում էին, բայց ո՞վ էր նրանց լսողը ։

Այդ խառն ու շփոթ դրութիւնը, որ մի աւիական անկանոն զօրքի յատկանիշն էր, հասկանում էր և Շահը, ուստի յաճախ պաշտօններ էր փոփոխում, յետ ու առաջ էր դրում ամեն մի տեսակ մարդուն, որպէսզի չը գտնուէին երկու երեքը, որ միասնային իր գէմ։ Բայց անկարգութիւնը հետզհետէ սաստկանում էր։ Մի օր, իրիկնապահին, Շուշի վերադառնալիս՝ բերդի դռների մօտ յանկարծ կանանց և երեխաների ճիչը բարձրացաւ։ Նրբ և ինքն Շահն հէնց դրան մէջը մտաւ, հարիւրաւոր կանայք և երախայք ընկան նոյն ճշովն նորա ձիոյ ոտի տակը, Թագաւորն ողջ լինի՝ ողորմութիւն արա մեզ բոլորս։ Նոյա աղաղակիցը և յանկարծ երկրամած լինելուցն, Շահի ձին խրտնեց... Առանց իմանալոյ ողորմելեաց լացի պատճառն, շատ զայրացաւ... Շատ վատ խօսքերով հայհոյելուց յետը, վեր առաւ, գիտեմ, գիտեմ, էսպիսի միջոցներով և հնարքներով ուզում էք ինձ երկիւղի մէջ պահել, երբնում եմ սուրբ Առնանը և մարգարէի գլուխը, որ մի քանի մարդկանց գլուխները վաղն մինչև արեգակի բարձրանալը տիգիւղոյ են վրանիս առաջ։ Նոյն գիշերը Շահին սպանում է մի ոմն Սադղ-բէկ («Արար.» եր. 332), և ոչ Թէ Սափարալի-բէկը, ինչպէս ասում է «Խամս Մելիք.» համեմատ «Գաղտնիք»-ը։

Ուրեմն Աղա-Մամադ-Շահի սպանութիւնը լոկ իր ստորագրեալների գործն է և ոչ թէ Եբրահիմ խանի կամ Մօլլա-Փանահի գաղտնի դաւադրութիւնը: Այս երկու պատմութիւններից թէ որն է աւելի հաւատալին, յոյց է տալիս Շահի սպանման հետևանքը: Աբրահամը իր որդուն ասում է թէ Շահի զլխատամբ, զլխատուեցաւ և Ղարաբաղի մելիքութիւնը (եր. 236): Ինչո՞ւ, հարցնում ենք մենք հիղինակից: Մենք արդէն տեսանք, որ Շահի պայմանադիրը հաստատել է մելիքութիւնը. մելիքները ապահով ստացել են իրանց հողերը ու դիւղերը, նրանց մնում է միայն տիրել և պարսից արքունիքին հարկ տալ: Նրանց համար մի և նոյն պիտի լինէր թէ ով կը լինի պարսից Շահը, որովհետև շահերը բոլորովին մասնակցութիւն չը պիտի ունենային մելիքների տիրապետութեան մէջ, այլ միայն անունով երկրի տէր էին յիշվում: Բայց ահա յանկարծ այդ կանոնաւորված և կազմուած իշխանութիւնը, որ իր վերջնական ձևը ստացել էր և թղթի վրայ, յանկարծ ինքն ու ինքը քայքայվում է առանց որ և է պատճառի, ինչպէս խաղաթղթերից շինած մի տնակ: Տեսնում ենք, որ Շահի զօրքերը փախստական գառնալուց յեառյ, Նուշի մէջ կըրկին երևում է Եբրահիմ խանը և հանդարտ շարունակում է իր իշխանութիւնը իբրև երկրի օրինաւոր տէր: Ինչ կերպով բացատրեց այս փոփոխութիւնը մեր հրաշալի «Նաղանիք»-ը:

—Ոչ մի կերպով չի կարող բացատրել: Նթէ, ասի

Թէ Իբրահիմ անուշով հալածական խանը յետոյ վերադարձաւ և հինգ մելիքներից կրկին յետ իւեց Շուշին, այդ ժամանակ պիտի ցիսի հետ հաւասարէ իր Թիւնիներին, Ուհաններին, Զաքիններին և այլ հսկաներին, որոնցից իւրաքանչիւրը դաշտում հարիւրաւոր մարդիկ է միանգամից կոտորում, ուր մնաց մի այնպիսի անառիկ բերդում, որպէս Շուշին է: Իսկ եթէ ասի, թէ մելիքները իրանք Թողեցին Շուշին և փախան, այն ժամանակ ամեն մէկը դրանց անարի և թուլամորթ պիտի անուանէ, որովհետեւ չը կարողացան եփած ճաշը ուտել, այլ կրկին հալածական դառան. սա էլ իհարկէ ընդդէմ է Ղարաբաղին նոր Նդիշէի հերոսական հոգուն: Այս պատճառներով նա ոչինչ չի ասում Իբրահիմ խանի յետ դառնալու մասին: Ահա ինչ է նշանակում ըստ քմաց պատմութիւն հնարել: Եթէ չը լինէր Շահի Ֆէօդալական պայմանագիրը, կարելի էր հասարակ կերպով ասել, թէ Շահի սպանուելուց յետոյ Ղարաբաղին կրկին տիրացաւ Իբրահիմ խանը. և դա շատ հասկանալի կը լինէր: Ինչ է նշանակում իր լեզուից կրակ ընկնել... Պ. Բաֆֆին ասում է, որ Շահի հետ Շուշի գնաց միայն Մելիք-Ձումշուղը, որ դերի էր ընկել պարսից ձեռքը և մեծագումար տուգանք տալով միայն կարողացաւ ազատուել Շահի դահլիճներից: Նւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել: Մինչև Շահի գալը

Մեղեքները ոռւսների հետ միացած կռւում էին խաների դէմ, որոնք Շահի նշանակած և Շահին հարկատու կուսակալներ էին: Ինչպէս կը կարողանար Շահը իր թշնամիների հետ այդքան սիրով լինել և մինչև անգամ մահմետական արիւնով զրաւած երկիրը նրանց պարգևել:

Իբրահիմ խանի մասին տեղեկութիւն է հաղորդում Մելիք-Աղամը. «Իրելի Բէկնաղարեանց. Իբրահիմ խանը վերադարձաւ, բայց ձեր քաջերն քնած չեն, այլ փշրում են նրա բոլոր ձեռնարկութիւնները» (եր. 241): Հասկացէք:

Նոյն Մելիքի լեզուից դրած նամակը ասում է թէ Ղարաբաղում սով ձգեցին գլխաւորապէս Աղա-Մամադ-Շահի կրկնակի արշաւանքը, արտերի հրդեհուիլը, Հերակլի, Իբրահիմ խանի և Զուբովի արշաւանքները: Այքի առաջ ենք դնում մի հակասութիւն. Շահը խոստացել էր հայերին չը վնասել, Մելիք-Մեծըմը գլխաւոր հրամանատարն էր, Շահը շատ և շատ զթառատ էր. ինչու նրա արշաւանքը սով պատճառեց. ո՞վ հրդեհեց արտերը:

Զարմանալին այն է, որ 1798 թուին, այսինքն սովի և ժանտախտի տարին Մելիք-Աղամը գրել է դադթականների և մեռածների մանրամասն ցուցակը, մէջ տեղ բերելով և մեծ Սիւնիքի հեռաւոր գաւառները, որոնց հետ ոչ այն ժամանակները և ոչ էլ այժմ մօտիկ յարաբերութիւն չունեն զարա-

բաղժիս: Եղևիլ է արդեօք սով և մեծ Սիւնիքում, մենք չը գիտենք. բայց իթէ Հեղինակի ցոյց տուած պատճառները քննենք, պիտի ասենք, որ մեծ Սիւնիքում սով չը պիտի լինէր, որովհետեւ այդտեղ ոչ Աղա-Մամադ-Շահ է գնացեր, ոչ Հերակլ և ոչ Զուբով: Բայց ահա այդ երկրից էլ կան գաղթականներ. ի՞նչ պատճառով գաղթեցին:—1798 թուին Մեղիք-Ադամը ռրտեղից էր իմանում թէ օրինակ 2090 տուն գաղթել են Արարատեան երկիրը, 2250 տուն ձառի կողմերը, 2000-ը Մոլտաւ-Վալաքիա: Այդ հեռաւոր տեղեր գնացողները հազիւ մի կամ երկու տարուց յետոյ համախմբուէին, որոշէին իրանց ճիշտ թիւը: Ինչ և իցէ, գաղթականների թիւը միլլիօնի է հասնում, որ բացարձակ առասպելական թիւ է: Յնհնարին է միանգամայն, որ Ղարաբաղի և Սիւնիքի պէս երկիրները մի տարուայ մէջ մի միլիօն մարդ կորցնէին և ամայի անապատ չը դառնային, որովհետեւ երբէք մի միլիօն հայ այդ երկու տեղերում չը կար և այժմ էլ չը կայ:

Ինչ վերաբերվում է Մեղիք-Փրէյդունի նամակին (եր. 240), դա շինծու է, որովհետեւ Պօղոս կայսեր հրովարտակը Վրաստանում հայ գաղթականութիւն հաստատելու մասին գրուած է 1799 թուի յուլիսի 2-ին (տես Собр. акт. 1838 г. եր. 200—201): Մեղիք-Փրէյդունը 1798 թուին չէր

կարող խմանալ կայսեր հրովարտակի մասին և գրել նրա վերաբերեալ նամակ:

Ի՞նչ ենք կարող ասել Մակար վարդապետի ծանօթութիւնների մասին, որոնք դրած են դաղթական ընտանիքների թուերի տակ:—Շատ բան: Բայց բաւական ենք համարում ասել, որ հայր սուրբի մտերիմ պ. Հայկունուն այդ ծանօթութիւնները նախ հետաքրքրական են երևացել («Մեղու», 1885 թ. № 64), իսկ յետոյ՝ ոչ այնքան համոզեցուցիչ («Մեղու» № 89): Եւ իրաւ, ի՞նչպէս համոզեցուցիչ երևայ մի այսպիսի ծանօթութիւն. Շամախու վիճակը դաղթած 12000 տուն հայերից մի քանիսը բողոքական դարձան: Մեծ դիւտ...

Փաթալի Շահի աղնիւ և խաղաղասէր բնաւորութիւնը նկարագրելուց յետոյ, հեղինակն ասում է, թէ Աբրահամը խնդրեց նրանից որ թոյլ տայ վերադառնալ իր հայրենիք: Բայց Աբբաս-Միրզան չէր համաձայն, առարկելով թէ Աբրահամը հարկաւոր է Ղարաբաղում գործ տեսնելու համար, իսկ Ապրեսը (Ալահվերդի) Վաղտնի նամակներ գրելու և խորհրդապահութեան համար: Ղարաբաղից յայտնում են թէ Երրահիմ խանը Տիլզակի Մելիք-Աբասին սպանել է, իսկ Խնածախցի քաջիւրը խանի տունը գիշերով հրդեհել են, նրա հինգ հարիւր զօրքը կոտորել են և գանձարանի դրամները ամբողջապէս յափշտակել: Խանը ստուարացրուց իր

ղօրքը քաջերին կոտորելու համար, բայց այդ զօրքն էլ կոտորեցին հսկաները: Իրաւ, զարմանալի է, թէ քանի անգամ այդ թշուառ խանին «Գաղտնիք»ը մատնեց իր հսկաների ձեռքը, քանի անգամ հրդեհեցին նրա տունը, զօրքերը կոտորեցին, բայց խանը միշտ ողջ մնաց: Ասում են թէ կենդանիների մէջ միայն սաղամանդրն է (САЛАМАНДРА) որ կրակում չի այրվում: Մենք կարծում ենք որ «Գաղտնիք»-ից յետոյ պէտք է կրակում չայրվողին Իբրահիմ խան ասել:

Սրանից յետոյ յանկարծ լոյս է ընկնում մի ուրիշ անձնաւորութիւն, որ պակաս հրաշալի չէ քան զանազան Ուհաններն ու Թիւնիները: Գամահմետականացած վրացի Սուլին է, որ ծպտեալ պիտի գնայ Պետերբուրգ ակնավաճառի անունով գաղտնիքների իմանալու և պարսից կառավարութեան յայտնելու համար: Այդ հրաշալի գաղտնի դեսպանը թէև իր «գաղտնի» նամակներում մի արտաքոյ կարգի գաղտնիք չի յայտնում, որ պատմութեանը անյայտ լինի, բայց հեղինակի ասելով անդադար յարաբերութիւնների ունէր կայսերական գերդաստանի, երևելի մարդկանց հետ և կարողանում էր շատ կարեւոր բաներ իմանալ:

Աբբաս-Միրզան այդ ժամանակները Իբրահիմ խանից մի նամակ է ստանում, որի մէջ շատ գանդատվում է Աբրահամ Բէկնաղարեանցի արարքների

վրայ, ասելով թէ քանի որ այդ մարդը կենդանի է, Ղարաբաղը չը պիտի մնայ հանդարտ և պարսից դաշին հաւատարիմ: Թագաժառանգը այդ «գաղտնի» նսմակը կարդում է Աբրահամի մօտ և խիստ բարկանում է խանի վրայ, ասելով թէ Զառչի-Փանահի յիմար որդին մեզ է յիմար է կարծում և մուր է քսում մի «անմեղ և հայրենասէր անձնաւորութեան»: Մեզ համար բոլորովին անհասկանալի է թէ ինչու Խնածախցի տիտանապետը յանկարծ պարսից շահերի և պատուասէր ու մոլեւանդ թագաժառանգի աչքի լոյսը դարձաւ: Նա մի մեծ ծառայութիւն չի մատուցրել Պարսկաստանին, նա մինչև անդամ մելիքներին կամ խօսքով կամ նամակով չէր յորդորում պարսից լուծը ընդունել, այլ ընդհակառակը խորհուրդ էր տալիս օտարի աղդեցութեան տակ չընկնել: Հետեւապէս նա Պարսկաստանին օգտուէտ չէր, եթէ չասնեք թէ թշնամի էր: Այդ կարծես իմանում էր և Աբրահամ-Միրզան, անուանելով նրան «հայրենասէր», որ անշուշտ պարսկամոլ չի նշանակում: Պարսկաստանի քաղաքական շահերը կարող էին արդեօք հաշտ մնալ մի մարդու հետ, սր իր հայրենասէր լինելովը հանդերձ դեռ ձեռքին ունէր պարսկական գաղտնի գիւանը և միշտ կարող էր նրանից օգուտ քաղել իր բոլորովին ոչ պարսկական ձգտումների համար:— Այո՛, կարող էին հաշտ լինել, եթէ պարսից գահակալները երկու աչքով կոյր լինէին...

1803 թուին Քեանդիսուդա Խաչատուր Հսկան գրում է Աբրահամին. «Ձեր սիրական աշտարակեցի թորոս սարկաւազն, որ վարդապետ ձեռնադրուած է Ներսէս անուամբ, Էջմիածնի կողմից նուիրակութեան պատրուակաւ այցելու ղրկուած էր: Սա շրջեց Շամսիի, Նուխի, Քանձակ քաղաքներն և ապա այցելեց մեզ Ջրաբերդում (եր. 257): Այս դէպքը բոլորովին չէր կարող պատահել այդ ժամանակը:

1803 թուականին վերաբերեալ բաւական նիւթեր կան: Մեզ յայտնի է, որ այդ ժամանակը Էջմիածինը ոչ թէ չէր կարող «նուիրակութեան պատրուակով» այցելուների ուղարկել Հայաբնակ դաւառները՝ ռուսաց հովանաւորութիւնը ընդունել տալու համար, այլ և ղուրկ լինելով կանոնաւոր տեսչութիւնից և միանդամայն ջլատուած ներքին երկպառակութիւններից, լոկ ապրելն էլ մեծ քաջութիւն էր համարում: Դանիէլ և Դաւիթ կաթողիկոսների խայտառակ վէճերը այդ տարին հասել էին ծայրահեղութեան: Ուժասպառ Դանիէլը հեծում էր Դաւթի ձեռքին և այնքան թոյլ էր ու լքեալ, որ Դաւիթը կարողացաւ դերժել նրա միրուքը: Նրանի խանը Դաւթի կողմն էր պահում և Դանիէլը ու նրա ջերմ պաշտպան Ներսէսը բանտարկուած էին Էջմիածնում: Ռուսաստանի Նիկիով առաջնորդը Էջմիածնի այդ օրհասական դրութեան

մասին յայտնելով Ալէքսանդր I կայսրին, աղերսում էր օգնութիւն անել Հայոց օրինաւոր կաթողիկոսին: Իշխան Յիցիանօվը դիտպան է ուղարկում Մամադ խանի մօտ, սպառնալիքներով պահանջում որ Դանիէլը կաթողիկոս դառնայ: Այդ միջոցին մէջ է ընկնում Ախալցխայի Շէրիֆ փաշայի խնդիրը: Երևանի խանը, վախելով ռուսներից և կամենալով նրանց միջոցով կարգադրել իր բարեկամ փաշայի խնդիրը, էջմիածնից բերել է սալիս Դանիէլին և Ներսէսին: Առաջինին հրամայում է նամակով խընդրել Յիցիանօվին որ փաշայի խնդիրը լուծէ ըստ իր ցանկութեան. բայց տանջուած կաթողիկոսը մերժում է այդ հրամանը, ասելով թէ մարմնաւոր գործերի մէջ խառնուելը թոյլ չի տալիս իր բարձր հոգեւորական աստիճանը: Բայց վերջ ի վերջոյ հաղիւ համաձայնում է գրել (տես «Փորձ» հանդէս 1877/78 թ. № I, եր. 233): Տարակոյս չը կայ, որ այսպիսի դրութեան մէջ գտնուող էջմիածինը չէր կարող այդքան թշուառութիւնների մէջ մտածել նուիրակութեան մասին, և Ներսէսը չի գնացել Շամախի, Նուխի, քարոզներ ասել, որովհետեւ Երևանի խանի պատգամաւորութեան հետ ղրկուած լինելով Թիֆլիս, նա այդտեղ քնաց մինչև 1803 թուի վերջերը, իր ամբողջ կարողութիւնը վասնելով իր սիրած Հայրապետին ազատելու թշուառ դրութիւնից: Տարուայ

վերջին (գեկտեմբերի 2-ին) նրան տեսնում ենք ռուսաց զօրքի հետ, որ պաշարել էր Փանձակը, ուր և քնաց մինչև 1804 թուի յունվարը: Եւ այսպէս ամբողջ 1803 թուականին Ներսէսը ոչ կարողութիւն և ոչ ժամանակ ունէր պատուիրակութիւն անելու. ուրեմն Աբրահամի սիրական Թորոսը (սրան որտեղից ճանաչեց խնածախցի տիտանապետը) Շամախի և Ղարաբաղ չի եղել:

«Պաղտնիք»-ի ասելով (եր. 261) պարսից զօրքը Փանձակի մօտ պատերազմել է և յաղթուել, այն ինչ պարսիկների մասին ոչինչ չի յիշում ականատես Ներսէսը, որ նկարագրել է Փանձակի զրաւումը («Փորձ», եր. 241): Այդ յաղթութեան զօրքը որպէս թէ յետոյ դնացել է Նրեանի մօտ խառնուել Աբբաս-Միրզայի բանակի հետ: Հեղինակի ասելով, Ֆաթալի-Շահը չի մասնակցել այդ արշաւանքին, այլ Թեհրանից տեղափոխուել է Թաւրիզ «պատերազմի մասին արագ արագ տեղեկութիւններ ստանալու համար» (եր. 260): Բայց իշխան Եգոր Խուբովը, որ ականատես է եղել այդ պատերազմին, ասում է թէ Շահը ինքն էր եկել Նրեան և այդտեղից, ռուսաց զօրքերը յետ քաշուելուց յետոյ, դնացել է Էջմիածին, ուր Ղաւթը յանձնել է նրան Ղանիէլ կաթողիկոսին, որին Շահը ուղարկել է Մարաղա քաղաքը (Описание достопамят. происшест. ер. 92—93): Այս իրողութիւնը հաստատում

է և Ներսէսը իր մի նամակի մէջ («Փորձ» եր. 247). անօրէնն Դաւիթ (Դաւիթ) վաճառեաց մի-
 ծաղին զտէրն մեր (Դանիէլ) Բապա-Թան Շահին
 պարսից կորուսանել մինչ իսպառ: Ահա այստեղ
 աշխարայ յայտնվում է, որ «Դաղտնիք»-ի հեղինակը
 ականատես, նա և ժամանակակից պատմիչ չէ, քա-
 նի որ Շահի Երեւան դալը չի յիշում, իսկ Դանիէլի
 կալանաւորելը ոչ թէ «չափազանց վշտացրել է
 բարեխնամ Շահին» (եր. 264), այլ կատարուել է
 նրա աչքի առաջ և նրա հրամանով: Հետեւաբար
 սուտ է Աբբաս-Միրզայի իր հօրը զրաժ նամակը
 Դանիէլ կաթողիկոսի և Առստամ-բէկի (Ռոստոմ-
 բէկի) մասին: Սուտ է և այն, թէ «Դանիէլ կաթո-
 ղիկոսը մեծ ընդունելութիւն, հիւրասիրութիւն և
 մեծարանք դտաւ Շահից»: Թաւրիզում, ինչպէս ե-
 րեւում է Ներսէսի նամակներից, Դանիէլը առժա-
 մանակ մնացել է Թաւրիզեցի Մահտեսի-Յովհան-
 նէսի տանը և չի բանտարկուել: ... Ըստ որոյ
 ճմլեալ և բարբարոս իշխանին, դարձոյց առ տէր
 զգթութիւն նորա, որով և տարեալ մինչ ի Թար-
 վէզ, թողացոյց զնա անդէն, ուր ահաւասիկ կայ
 ի տուն հայկազն իշխանի տեղւոյն Մահտեսի-Յով-
 հաննէս կոչեցելոյ» («Փորձ» եր. 247): «Սամս. Մէ-
 լիք» և «Դաղտնիք»-ի ասելով Դանիէլը միշտ Թաւ-
 րիզումն է մնացել և այնտեղից է վերադարձել
 Եջմիածին: Բայց այս հաստատ է, որ, ինչպէս և

Խուլբովն է ասում, ի վերջոյ նրան տեղափոխել են Մարաղա, ուր ծերունի կաթողիկոսին հովանի է եղել տեղային խանը: Նոյն ինքն այդ կաթողիկոսը զրուժ է. «Մինչ մէք էաք ի գերութեան յերկիրն Պարսից ի Մարաղայ քաղաքի» («Փորձ» երկր. տարի № II եր. 242): Պ. Բաթթիին կարող էր սխալուել այդպէս ասելով, որովհետեւ իր աչքով չի տեսել: Իսկ ինչո՞ւ այդ մի և նոյնը կրկնում է և «Դադտնիք»-ի հեղինակը, որին եթէ հաւատանք, իր հայրն է եղել կաթողիկոսին գերութիւնից ազատողը: Ինչո՞ւ նա էլ մի Խուբովի պէս համաձայն չէ ժամանակակից դժգոմէնտներին: Խօ կարծեմ բաւական է որ ինքը այդ գերին ասում է թէ, ևս Մարաղայումն եմ եղել.— Միայն մի պատասխան կայ. որովհետեւ «Դադտնիք» զրողը ժամանակակից չի եղել, չի տեսել ոչ այդ բոլոր անցքը, ոչ կաթողիկոսին, այլ լսել է պ. Բաթթիից և, իհարկէ, մի այնպիսի ահագին գործ, որպիսին է հայոց կաթողիկոսին գերութիւնից ազատելը, անվայել համարելով վերադրել մի Մահտեսի-Յովհաննէսի (ինչպէս զրաժ է խամա. Մէլիք. մէջ), իր փառաւոր և փայլուն հերոս Աբրահամ Բէկնազարեանցի քաջագործութիւններից մէկն է հռչակում: Բայց թող չը շտապէ «Դադտնիք» շինողը, այդ գործը Մահտեսի-Յովհաննէսինը չէ, Աբրահամինն էլ չէ և չի էլ կարող լինել, քանի որ նա չի էլ գիտում թէ

ուր էր կաթողիկոսը: Այդ մեծ գործը, որպէս տեսնուամ ենք եփրեմ արքեպիսկոպոսի մի կոնդակից («Փորձ» № I էր. 266), կատարել են Կոմս Գուդօւլիչը, Օսմանեան Իւսուֆ եպարքոսը և երևանի նոր խանը, որոնք միմեանցից տեղեկութիւն չունենալով, ինքնաբերաբար խնդրել են Շահից արձակել Դանիէլին: Շահը իր որդի Աբբաս-Միրզայի հետ դրագրութիւն է անուամ այս մասին և վերջապէս 1807 թուին (և ոչ թէ 1806-ին) կաթողիկոսը վերադառնում է Մարագայից (և ոչ թէ Քաւրիղից): Այստեղ պէտք է ասել, որ թէև Վենետիկի «Բաղմավէպ» ամսագրի 1847 թ. էր. 40—41 ասած է թէ Յովհաննէս աղան է աղատել Դանիէլին, բայց դա իհարկէ սխալ է, թէև տեղիք չունենք ուրանալու թէ նա չէր կարող մասնակցել այդ գործին: Պ. Նրիցեանի «Փորձ»-ի երկրորդ տարուայ դրքերում հրատարակած բաղմաթիւ նամակները արդէն դրականապէս հաստատում են ճշմարտութիւնը:

«Բաղտնիք»-ի այս յիշած ամենաերևելի սուտը տեսնելուց յետոյ, ինչ ասինք, ընթերցող, այն մարդկանց, որոնք յանդգնութիւն ունին այսպէս ըստ իրանց քմաց աղաւաղել մեր առանց այդ էլ խառն պատմութիւնը: Ամօթ...

Յետոյ պատմում է Ռոստոմ բէկի մահը: Ձենք հասկանում թէ ինչ հարկ կայ պատմական անուն-

ները աղճատեր, Ռոստոմի տեղ Առստամ, Բովչանի տեղ Առուշան գրելով Ռոստոմը որպէս թէ գլխատուել է (եր. 271). պ. Բաֆֆին ասում է թէ շատ չարչարելուց յետոյ նրան սպանեցին: Բայց Ոսկան Յովհաննիսեանը գրում է թէ Ռոստոմը «անողորմ դահիճների անհնարին չարչարանացն դիմանալով, ինքնակամ յօժարութեամբ անօթի քնաց ու այնպէս վախճանեց բանտումն (տես Հնոր Բնար Հայաստան տետ. Գ. եր. 111—112): Այդ մի և նոյնը կրկնուած է և «Բաղմավէպ»-ի վերոյիշեալ տետրակում: Պէտք է աւելացնել որ այդ յօդուածների հեղինակները անձամբ տեսել են քաջ Ռոստոմի դերեղմանը Թաւրիզում: Քաջի յօրինած սիրուն երգը մենք փորձեցինք համեմատել բոլոր տպագրութիւնների հետ, հրապուրուելով նրանից, որ «Բաղտնիք»-ի բարեկամներից մէկը հրապարակով ասել էր թէ «Բաղտնիք»-ում դրածը ամբողջն է և ոչ թէ կիսատը, ինչպէս միւս տեղերում: Բացի աննշան փոփոխութիւններից և մի քանի աւել բառերից ոչինչ չի պարունակում իր մէջ «Բաղտնիք»-ում գրածը:

Լէ. զուխը նկարագրում է պարսիկների Ղարաբաղ արշաւելը 1805 թուին Փիր-Ղուլի խանի առաջնորդութեամբ, Նահբուլաղ բերդում ոռւս զօրքի պաշտպանուիլը, Աբրահամի (նա էլ է եղել պարսկական զօրքի մէջ) խնածախցի հսկաների

Հետ տեսակցութիւնը, Զարբաղանի Հերոսութիւնը, Գարեգին (Կարեազին, դիտմամբ աղճատուած է) ղնդապետի մահը, Մելիք-Զումշուգի քաջութիւնը և այլն: Այդ բոլորը Ապրիսին զրել է Աբրահամը: Բայց նոյն այդ նամակի գոյութիւնը հերքում է ինքը «Գաղտնիք»-ը: 286 երեսում դրած է Մելիք-Զումշուգի նամակը աղա Մինաս Լազարեանին, դրած 1806 թուին: Նկարագրելով իր մասնակցութիւնը Կարեազինի զօրքի հետ, Մելիքն ասում է թէ Շահբուլաղի կռիւր և վերոգրեալ անցքերը (բացի Աբրահամի և Զարբաղանի քաջութիւններից) տեղի են ունեցել Յիցխանովի մահից յետոյ (եր. 284): Իսկ Յիցխանովին սպանել են, ինչպէս իմանում ենք 273 երեսից, 1806 թուականի փետրվար ամսում, որ բոլորովին ճիշտ է: Ուրեմն 1805 թուականին ոչ Աբրահամ է եղել Ղարաբաղում, ոչ Կարեազին. և պարսից զօրքը ոչ թէ Փիր-Ղուլի խանի առաջնորդութեամբ է արշաւել, այլ նոյն իսկ Աբրահամ-Միրզայի, այն էլ 1806 թուին:— Կեղծիք, ամենայն տեղ կեղծիք:

Հետևեալ երկու գլուխներում դրած են Մելիք-Զումշուգի և Մելիք-Աբովի նամակները Մինաս աղա Լազարեանիցին: Այդ նամակների օրինակները ուղարկել են իրանք մելիքները, որ Ապրիսը «Գաղտնիք»-ի մէջ զետեղէ: Իրանք արդէն մեզ յայտնի են. պ. Բաթթին թարգմանել է «Кавказская Старина»

ամսագրից: Ուշադրութիւնն ենք դարձնում միայն մի հանդամանքի վրայ: Պ. Բաֆֆիի թարգմանութեան մէջ մենք տեսնում ենք մի այսպիսինախագասութիւն. «Այդ առարկայի մասին թէև ես ինքս վշտացած եմ, բայց դարձեալ կասեմ, որ մենք՝ Խամսայի մեղքներս աւելի քան թէ վրայիք» և այլն: Այսպէս դրել է և պ. Նրիցեանը իր մի 10-դուածում («Փորձ» II տարի № 2, էր. 396): Բայց «Գաղտնիք»-ում «Խամսայի մեղքներ»-ի տեղ դրած է «Հարազատ մեղքներս» (էր. 286): Առհասարակ խիստ աչքի է ընկնում որ «Գաղտնիք»-ում ոչ մի տեղ չի յիշուած «Խամսայի» անունը և սա, մեր կարծիքով, նոյնպէս մի հաստատութիւն է, որ այդ հեղինակութիւնը անցեալ դարուց մնացած չէ: Որովհետև հինգ մեղքութիւնների երկիրը կոչուել է այդ ժամանակները և Խամսայի երկիր, Խամսայի կողմ, իսկ բնակիչները՝ խամսեցիք, ինչպէս զրում է Սիմէօն կաթողիկոսին Ղարաբաղի ժողովուրդը (տես «Արձագանք» 1886 թ. № 15 էր. 228) *): Մեզ զարմացնում է թէ ինչու «Գաղտնիք» զրոյք խորշել է այդ բառերից և ջնջել է Մելիք-Ջումշուդի նամակից, դնելով նրա տեղ իր հնարած «Հարազատ-մեղք» բառը:

Սուլին երկար ժամանակ լռելուց յետոյ մի նամակով յայտնում է թէ «ինքն կրկին հրաւի-

*) Տես նոյնպէս Սիմէօն կաթողիկ. «Զամբու» էր. 87 և 88:

բուած էր կայսերական զերդաստանից քարեղէնի պիտոյից համար^ս։ Երևի այդտեղ էլ խմանում է նա թէ Ղարաբաղի մելիքների խնդիրքները Մինաս աղա Լազարեանցը անդադար ներկայացնում է յղլխաւոր Մինիստրին^ս (?)։ Դրանով էլ վերջանում է Սուլիի պատգամաւորութիւնը։ Ահազին դժուարութիւն կայ հաւատալու, որ կայսերական վեհափառ զերդաստանի շրջանում Ղարաբաղի մելիքների հարցը, որ այդ ժամանակ առաջուանից շատ աննշան էր դառել, այնքան մեծ նշանակութիւն ունենար, որ այդչափ մանրամասն տեղեկութիւններ տային պարսիկ ակնավաճառին։ Հարկաւոր է մտաբերել, որ այն ժամանակները խաղաղութիւն չէր տիրում ամեն տեղ, որ Առևտրաստանի յետ ընկած մի փոքրիկ անկիւնի ժողովրդապետների խաղաղ յարաբերութիւնները այնքան մեծ ուշադրութիւն դրաւէին։ Նոյն այդ տարիներում Եւրոպայի մի ծայրից մինչև միւսը թնդում էր մեծ Նապոլէոնի անունը։ Քաղաքական անցքերը այնպիսի արագութեամբ յաջորդում էին միմեանց, որ Եւրոպայի արքունիքները հաղիւ ժամանակ ունէին հետեւել մեծ մարդու գործողութիւններին։

Մելիք-ձումշուղը այդ թւում նկարագրում է Ղարաբաղի դրութիւնը։ Մի մեծ նորութիւն չենք գտնում և այստեղ, նամակի առարկան մեզ յայտնի է շատ վաղուց (Խամս. Մէլիք^ս էր. 257—258,

291, 292—293): Բացառութիւնը միայն խնածախ-
ցի հսկաների նորանոր մեծագործութիւններն են:

Այդ նամակին պատասխանում է Աբրահամը:
Մեղքերն խրատելով ասում է որ թէև մեղքների
գործերը « ժամանակիս հոսանքի » առաջ զին չու-
նենան, բայց պատմութիւնը կը գնահատէ այդ ա-
մենը: « Քանի քանի անգամ ես խօսած եմ մեղքնե-
րին թէ օտար հարուստներից ողորմութիւն խընդ-
րեն յիմարութիւն է, զթութիւն հայցելն անխել-
քութիւն » և այլն (հր. 301): Այո՛, այդ իսկ խօս-
քերով Աբրահամը յիմար է և անխելք. և իհարկէ
մեղքները այդ խօսքերին զրօշի նշանակութիւն
չէին տալ: Այդ խօսքերն ասողին միթէ նրանք
չէին կարող պատասխանել թէ այդ այդպէս լինե-
լով հանդերձ, ինչո՞ւ գնացել ես Պարսկաստանի
բռնակալի ձեռքի տակը մտել, ստորացել ես պա-
լատականների առաջ, կամայ ակամայ հարկադրուած
ես ամենքի մօտ շողոքորթել: Ինչո՞ւ ինքդ Ղարա-
բաղում չես, ուր քո անյաղթելի բազուկը այն-
քան հրաշքների էր գործում: Բայց Ղարաբաղի
թշնամիներից մէկն էլ դու ես: Դո՞ւ չէիր որ Աղա-
Մամադ Շահի հետ դաշինքների կապեցիր, այնպիսի
գեղեցիկ դաշինքների, որոնց վրայ կարող են նա-
խանձուել աշխարհիս քաղաքագէտները. ո՞ւր մնացին
դրանք, ո՞ւր կորցրիր: Թագաւորների խօսքը պար-
տաւորեցուցի՞չ չէ ժառանգների համար: Ինչո՞ւ էլի

Իբրահիմ խանը տիրեց մեր սեփական երկրին. իսկ
մենք մեր դաշինքները երբ պէտք է հանենք, իրա-
ւունք պահանջենք: Իու պակաս թշնամի չես...

Բայց Բէկնաղարեանցը իրան որ յանցաւոր է
պատմութեան առաջ: Այո, յանցաւոր է իր չափա-
զանց թրքամոլութեամբ և սատախօսութեամբ: Տե-
սէք, ահա Աբբաս-Միրզան խօսում է նրա հետ այն
պատերազմների մասին, որ մղել են պարսիկները
Ղարաբաղում Աղա-Մամադ-Շահի ժամանակից:
«Մեր և ուստաց պատերազմների կենդրոն եղած
Ղարաբաղը աւերակ դարձաւ թէ նիւթապէս և
թէ բարդապէս: Ղարաբաղի հայն, որ այնքան դա-
ւաններ զոհ տուաւ մեր և ճըռ-Նանների պատե-
րազմներում... Ղարաբաղի հայն, որ այնչափ դե-
րիներ տուաւ մեզ իւր սիրասուն դաւաններից...»
(եր. 307): Եթէ Աբբաս-Միրզան չը խօսէր և ու-
րիշ մի պատմական յիշատակարան չը մնար, մենք
պիտի հաւատացած լինէինք, որ Ղարաբաղում այս-
պիսի թշուառութիւններ երբեք չեն եղել, որով-
հետեւ «երևելի պատմագէտ» Բէկնաղարեանցը ոչ
մի տեղ չի յիշել, որ մի հայ սպանուած լինէր,
մէկը զերի բնիած, կամ թէ Ղարաբաղը կոպէկի
վնաս անգամ կրած լինէր: Լնդհակառակը, նա մեզ
կերակրել է իր հսկանների հրաշքներով, նա մեզ
ներկայացրել է պարսից շահերին իրանց ղօրքերի
հետ մեղքների ձեռքին խաղալիկ դառած, մեր ա-

ռաջ զրել է այնպիսի գաշինքների, որոնք իսկ որ հաւատացնում էին թէ Ղարաբաղը, իբրեւ մի զօրիշ իշխանութիւն, երբէք սե. օր չի տեսել: Նւայժմ այս ինչեր ենք լսում Արքայ-Միրզայի բերանից: Ուրիշն սո՛ւտ էին այդ բոլորը, ինչ որ պատմել է Վրեհի պատմագէտը: Սոսկալի դատապարտութիւն, որ ինքն իր ճակատին է զրել Բէկնազարեանցը...

Այո՛, այդ quasi-մեծ հայրենասէրը մի դառն անհասկանալի զրութեան մէջ է մնացել: Իր հայրենասիրութիւնը նրանով է զլիաւորապէս արտայայտի, որ մինչև անգամ պարսից զօրքերի շարքում կռուել է իր արիւնակիցների դէմ: Արդէն դիտենք, որ Արքայ-Միրզան շատ չարացած էր հայերի վրայ, որոնք ուսւ զօրքերի հետ կռւում էին իր դէմ: Զմարիտ հայրենասիրութիւնը պիտի հարկադրէր նրան մեռնել և չը դանուել իր բոլոր հայրենակիցներին թշնամի զօրքի դրօշակի տակ:

Այդ բոլորը դեռ բաւական չէ, նա Շահի ներքինապետ է դառնում: Մեր օրինաց նկատմամբ, ասում է Շահը, ներքինապետութիւնն մեծ և պատուաւոր պաշտօն է: Նւ ազդի ու եկեղեցու այդ մեծադօր (!) պաշտպանը հանդիստ խղճով յարպեց մահմետական օրէնքը, ընդունելով նրա հիմնած մեծ պաշտօնը, որ էր Շահի անթիւ կանանց վրայ հսկելը... Դ՛նոյնպէս մեր օրէնքն արգելում է վրս-

տահիլ այդ պաշտօնն չներքինացած մարդոց. բայց որովհետև ժամանակն արդէն զձեզ ներքինացրած է, մենք այնպէս կը հռչակենք, որ մենք նախ զձեզ ներքինացնել առած և ապա ձեզ յանձնած ենք այս պաշտօնը՝ (եր. 309): Այդ խայտառակ, այդ անպատիւ անունն է ահա ընդունում վերջ ի վերջոյ խնածախցի հանճարեղ հռետորը... Ել ռրտեղի սղդասերն էր և որ Շահի սիրելին:

Ապրեալը հօրը յիշեցնում է իր առաջուայ մեծ մտքերը, յանդիմանում է նրան որ մի այդպիսի անարդ պաշտօն է ստանձնել: Հայրը պատասխանում է թէ ինքը այդ ծերութեամբը չի կարող այլ ևս հայրենեաց օգտակար լինել: Աւստի ընդունեց այդ պաշտօնը որ գէթ պարսկահայերին օգտակար լինի: «Նս կարող եմ շահ-աիկնանց և ներքինեաց միջոցաւ ազգեցութիւն ներգործել բարեխնամ Շահի վերայ և մեծ մեծ պաշտօնների հասցնել պարսկահայերից շատերը» (եր. 310): Շատ բնական են այս խօսքերը: Ինքը Աբրահամը խոստովանում է, որ օգնել ուրիշներին կարող է միայն այդ անարդ պաշտօնով. ուրեմն նա այնքան մեծ չէր, այնքան սիրելի չէր պարսից արքունիքին, որ առանց պաշտօնի կարողանար մի բան անել: Եթէ մի մեծ օգուտ առած լինէր Պարսկաստանին, եթէ Շահը իսկապէս այն չափով սիրելիս լինէր, եթէ Աբրահամ-Միրզան հայերի վրայ իր ունեցած սաստիկ

ատելութեան ժամանակն անգամ այնքան քաղցր եղած լինէր նրա հետ, վերջապէս եթէ այդ մարդու որդին եղած լինէր երևելի Աղա-Մամադ-Նազի սիրելի հոգեզաւակը, անտարակոյս նա և առանց պաշտօնի իր ծեր հասակում այնպիսի յարգելի անձնաւորութիւն կը լինէր, որ Նազը և նրա որդին կը լսէին նրա խնդիրքները առանց կանանց և ներքին ինքն երի բարեխօսութեան:

«Իմ վաղահաս ծերութեան պատճառը, ասում է նա իր որդուն, ոչ մօրդ մահն է, ... այլ Աարաբաղի հարազատ-մելիքութեան մահն, որն (մահը) ապրած էր մօտ չորս հարիւր տարի»...
Ինչպէ՞ս չէ: Խոստովանում ենք և հաւատում:

Աբրահամի նպատակները հեռզհեռէ իրադրծվում են. հայերը դառնում են փոխարքայ, դեսպան, դանձապետ, դաւառապետ, կնքապահ և այլն և այլն: Ուրեմն «Խամա. Մէլիք» մէջ շարած անունները, որոնք հռչակ են ունեցել Պարսկաստանում, բոլորը Աբրահամի «պրօսեփէ»ներն են, ինչպէս ասել է մի պարոն: Մենք արդէն տեսանք, որ մեր վերջին պատմութեան մէջ եղած շատ թէքիչ նշանաւոր դրծերը կախել են Աբրահամի շլինքից. այժմ այս նոր մեծագործութիւնների վրայ չենք զարմանում:

Մինչ այս մինչ այդ, Աարաբաղում խնածախցիք շարունակում են իրանց հրաշագործութիւն-

ներք, որոնց մասին այժմ էլ Մելիք-Վանին է գրում:
Երևում է որ մելիքներն էլ իմանում էին թէ Ապ-
րիսը «Գաղտնիք» է գրում: Ափսոս որ նրանք ի-
րանց հետ գերեզման են տարիլ այդ տեղեկու-
թիւնը և ոչ ոքին չեն ասել:

Սկսվում է Մաղաթովի պատմութիւնը: Խոր-
հուրդ ենք տալիս ընթերցողին կարգալիս աչքի ա-
ռաջ ունենալ Մաղաթովի կենսադրութիւնը և
«Խամս. Մելիք»: Հետաքրքիր փաստեր շատ երևան
կը գան: Իշխան Մաղաթովի պատմութիւնը «Գաղտ-
նիք»-ի մէջ սկսվում է պարսից դեսպան Արդիւլ-
Հասան խանի նամակով, որ պարունակում է իր
մէջ իշխանի մի քանի կենսագրական գծերը: Յետոյ
նկարագրվում է Գաղստանի գրութիւնը և ապա
Մելիք-Վանին շտապում է լրացնել իշխանի Ղարա-
բաղ գալու պատմութիւնը, հայերից զօրք հաւա-
քելը, խնածախցի հսկաներին շքանշաններ պար-
գելը: Այդ նամակի կեղծ և շինծու լինելը յայտ-
նելու համար մենք մտանադոյց կանհեք հետեւեալը.
244 երեսում Մելիք-Աղամի դրած նամակից իմա-
նում ենք, որ 1798 թուի սովի և ժանտախտի ժա-
մանակ մեռել է խնածախցի Պրախմազն: Իսկ այս-
տեղ (եր. 317) Մելիք-Վանին գրում է (1817 թուին)
թէ Մաղաթովը Պրախմազին շնորհեց արծաթեայ
խաչ:

Այդ կեղծ նամակին պատասխանում է Աբրա-

Համ Բէկնազարեանցը: Թէև չեղած նամակի չեղած պատասխան է սա, բայց մենք էլի ուշադրութեան կառնենք, մանաւանդ որ նրա նշանակութիւնը շատ բարձր են համարում Մակար վարդապետը և նրա բարեկամ Հայկունին: Այդ նամակով Աբրահամը յայտնում է թէ Ղարաբաղի հողերը կամ մելիքապատկան են, կամ վանքապատկան: «Ոչ աւագակապետ Զառչի-Փանահն Ղարաբաղ հող բերած է Պարսկաստանի խորքերից, ոչ Իբրահիմ ձըռ-Խանն Շիրազի բանտերից և ոչ կնեազ Մատթթոմն Ռուսիայից: Հողերն ամբողջապէս սեփականութիւն են հարազատ մելիքներին և ժողովուրդեան» (եր. 319): Ահա նամակի բուն միտքը. մնացեալն արդէն յայտնի պատմական անցքերի կրկնութիւնն է: Մի բան էլ թէ, աւել է, այդ այն է, որ հողերի մելիքներին և վանքերին պատկանելը յայտնի է եկեղեցիների արձանագրութիւններից (որ:) Մակար Հայր սուրբը Հիացած այդ նամակի տակ մի քանի զարմացական նշաններով բացականչում է. «ականատես (!!)

և սառուգապատում (!?) Բէկնազարեանցի այս նամակն որքան անհերքելի փաստեր է պարունակում իւր մէջ: Իսկ պ. Հայկունին կարծում է թէ այդ նամակը օգտակար կարող է լինել թերևս և՛ այժմ» (ն Մեղու « 1885 թ. № 66): Մեր կողմից ոչինչ չունենք ասելու. որովհետև չենք կարծում թէ կրկնեն և այնպիսի մարդիկ, որոնք առանց Պաղտ-

նիք՝ կարգալու, առանց ճերմելի պատմագէտ, Բէկնաղարեանցի այդ նոր Ամերիկա դանելը իմանալու՝ չիմանային թէ Նբրասկիմ խանը Նիրազի բանաւորից հող չի բերել Ղարաբաղ...

Գալիս է Գաղստանի նուաճման պատմութիւնը, Մադաթովի Ղարաբաղից զօրք հաւաքելը, նրա գործերը և այլն: Այդ բոլորը պատմում են Գաղստանի խաները իրանց նամակներում՝ ուղղած Աբբաս-Միրզային: Մենք մանրամասնաբար չենք քննել այդ նամակները, ուշիմ ընթերցող համեմատելով դրանց բովանդակութիւնը Մադաթովի կենսագրութեան հետ, կը տեսնէ որ «Գաղստանիք»-ը այստեղ էլ նոր բան չի ասում, ամեն ինչ վերցրել է այդ կենսագրութիւնից: Ընթերցողը կը նկատէ որ Գաղստանի տեղերի անունները Գաղստանի խաները արտասանում են ինչպէս ռուսները, ինչպէս Ճերմելի, Սունժա (եր. 324): Մի բան, որ կենսագրութեան մէջ չը կայ, խնածախցի տխտանների հրաշագործ գունդն է, որ ըստ «Գաղստանիք»-ի Գաղստանում էլ ցոյց է տալիս իրան:

Ուցմէյ խանը 1820 թուին գրում է թէ Մադաթովը կայծակի արագութեամբ Գաղստան մտաւ 10 հազար զօրքով, որից 4000 Ղարաբաղցի, Շաքիցի և Շամախեցի հայեր էին: Բայց Մադաթովի կենսագրութեան մէջ Ղարաբաղցի թէ հայ և թէ թուրք ձխաւորների թիւը 500 է դրած (տե՛ս Մա-

դաժնովի կենսադր. հայերէն թարգ. հր. 54): Թէ հայերը մի այնպիսի մեծ գործ չեն կատարել Դադըստանում, այդ բայի կենսադրից վկայում է և գեներալ Երմոլովը, որ 1819 թուի սեպտեմբերի 11-ին գրում է Մադաթովին. «ես չը մոռացայ յիշատակել և այն մտերմութիւնը, որ դուք գտել էք ձեր սատրապիսալ մուսուլմանների մէջ, որոնք այնքան քաջ պատերազմում են ձեր առաջնորդութեամբ (Жизнь кн. Магата. изд. 1837 г. հր. 193): Բայց Ուցմէյը որպէս թէ գրել է «հիանալի ուժի և սրտի տէր են Ղարաբաղցի հայերն... և ամեն պատերազմներում նախադարձակ լինում աներկիւղութեամբ և յաղթութիւնների գործում» (հր. 333): Ազգասիրութիւն չէ պատմութիւնը աղաւաղելը...

Յաջորդ (334) երեսի զիւին կարդում ենք. «Մադաթովն հեղհեղէ գրաւեց Տադասարանի, Պաշուի, Ակուշինայի, Զիրախի, Վահհէբուրդի, Խոզրեկի, Ղազի-Ղումուխի և այլն ամրութիւններն և դաւառները ու նահանգները (?), որոնց մէջ ամբարացած էին լինում առհասարակ ուխտապահ խաներն»: Վահհէբուրդ ամրութիւն կամ դաւառ Դադըստանում: Սա մի այնպիսի տարօրինակ բան է, որ ընթերցողը իսկոյն կանգ է առնում: Ռբտեղից ընկաւ գերմանական այս բերդը վայրենի մահմետական Դադըստանը: Հանելուկը պարզ լուծվում է,

ի նկատի առնելով հետեւեալը: Իշխան Մագաթովի կենսագիրը մի տեղ (եր. 67) ասում է. «Построивъ вагенбургъ въ оборонительномъ положеніи...»: Այդ կենսագրութեան հայ թարգմանիչը՝ պ. Հայկ Խաչատրեան պատէս է հայացրել այդ խօսքերը. «Կենազ Մագաթովը, Վահագնբուրդը պաշարողութեան մէջ թողլով» (եր. 60): Պ. թարգմանիչը զլիսատառով դնելով վագներուրդ (և ոչ թէ վահներուրդ) բառը, անշուշտ չի կասկածել անդամ թէ դա պատերազմական կառքերի և սայլերի խումբ է նշանակում և ահա դրանով դայթակղեցրել է «Գաղանիք»-ի խեղճ հեղինակին: Նրեւի համոզուած լինելով, որ Մագաթովը ինչ որ պաշարէր, պիտի անպատճառ դրաւէր, «Գաղանիք» շինողը միամտաբար բերդերի թւումն է դրել և այդ անունը, դուրս է եկել որ մի դադստանցի խան իր նամակով հռչակում է թէ՛ Գաղստանում Վահագնբուրդ բերդ կար Մագաթովի ժամանակ: Ողորմելի պատմագրութիւն...

Շատերը ասում էին և ասում են դրականութեան մէջ, թէ Մակար վարդապետը ոչինչ չահ չունէր իր ձեռքով յօրինած պատմութիւնը ուրիշ անունով հրատարակելու: Նթէ այդպէս ասողները փորձեն մտածել թէ եթէ չը լինէր Ապրիսը, ինչ կերպով կարող էր Մակար վարդապետը իր հեղինակած պատմութեան մէջ դնել մի դադստանցի

խանի նամակը Արբաս-Միրզային, կամ մի Սուլթի նամակները Շահի գիւանին, եթէ մտածեն, որ այդ բոլոր նամակները անկարելի է առանց մի Ասլիսի անուան հրատարակել իբրեւ մի անհերքելի զօկումէնտ, այն ժամանակ կը հասկանան որ վարդապետը իսկապէս մեծ շահ ունէր այդպէս անելու: Ափսոս միայն որ այնպիսի թափանձիկ քողով է ծածկել իր այդ արարքը, որ ահա այսպիսի սարսափելի հետքերը միանգամից իսկոյն են նկատվում:

1822 թուին Արեւան փախած Մէհտի-Ղուլի-Խանը զրել է Արբաս-Միրզային. «Ըստ ձեր բարձր հրամանին հարկ էր Ղարաբաղի հողերը դարձնել իմ խանութեան վերայ» (եր. 339): Եթէ Աբբաս Միրզայից ճշմարիտ մի այդպիսի կարգադրութիւն եղել է, կը նշանակէ որ նա հայերի ամենամեծ թշնամին էր, որովհետեւ նրա սիրելի բարեկամ «երեւելի պատմադէտ» կանանոցապետը հաստատում էր որ Ղարաբաղի բոլոր հողերը հայերին են պատկանում: Իզուր է ուրեմն «Ղազտնիք»-ը այնքան հայասէր ձեռնցնում Աբբաս-Միրզային: Սուտ էր ուրեմն թաղածառանդի ատելութիւնը դէպի Շուշիի խաների տոհմը: Մէհտի խանը նկարագրում է թէ ինչ միջոցներ է գործադրել հողերը թուրքերին սեփականացնելու համար: Բոլոր այդ միջոցները մեղ յայտնի են դեռ «Խամսայի Մէլիքութիւններից» (տես գլ. XLII):

Հետևեալ զլուխներում 1826 թուի պատե-
րազմի պատմութիւնն է զետեղած: Մենք չենք ու-
զում երկար խօսել այդ զլուխների մասին, որով-
հետև «Նաղա՛նիք»-ի մէջ նկարագրած գլխաւոր
անջքերը կրկնութիւն են Մագաթովի կենսագրու-
թիւնից, իսկ մանրամասնութիւնները այնքան ա-
ռատ են ներկայ ծերերի պատմութիւնների, նմա-
նապէս և դաւառական արխիվի դործերի մէջ, որ
կարելի է այդ պատերազմին վերաբերեալ մի ամ-
բողջ հատոր կազմել: Մի երկու խօսք կատենք
խնածախցիների մասին:

Յայտնի է, որ Մագաթովի կենսագիրը մեծ
գովեստներով է խօսում ընդհանրապէս բերդում
մնացած հայերի մասին, որոնք ոռոս զօրքին օդ-
նում էին ամեն կերպ: Բայց ոչ նա, ոչ էլ մինչև
այժմ կենդանի մնացած ականատեսները խնածախ-
ցի հսկաններից մէկի անունը չեն տալիս: «Նաղա-
նիք»-ը, սակայն, բերդի պաշտպանութեան գլխաւոր
գերը յանձնում է դրանց: Եւ դարմանալի՞ չէ արդեօք,
որ ամբողջ Ղարաբաղում երկու գիւղ միայն, Խա-
ծախ և Բալլուջա, ի սկզբանէ անտի տուել են
այնպիսի հերոսներ, մինչդեռ միւս դաւառացիք,
օրինակ վարանդեցի պարթևակազմ և արխախրոս
հայերը ոչինչ մի յիշատակութեան չեն արժանացել:
Կարգացէք հր. ՅՅՆ և զարմացէք, որ այդ «գիւ-
ցաղուն քաջեր»-ի անունները այնպէս շուտ կորել

հն մինչև իսկ ականատեսների յիշողութիւնից։ Այդտեղ հիշինակը ասում է թէ Ղարաբաղը ծնած է խաւաքի և գաղղիացի ռազմագէտներից աւելի հմտագոյն պատերազմագէտներ, ինչպէս Նէառուատէօլը և ընկ.... Դա կատարեալ յանդգնութիւն է։

Աբբաս Միրզայի Ղարաբաղից Պարսկաստան փախչելուց շատ չանցած մի պարսիկ զինուոր, որ նոյնպէս փախստական էր, պատմեց թագաժառանգին թէ հայերը լաւ ընդունեցին Մադաթովին, իսկ Միսկին Պուրջի (Բուրջի) անունով բանաստեղծը մի ոտանաւորով գովել է Մադաթովի յաղթութիւնը։ Այդ երգը, ինչ ասել կուզի, իր հօր միջոցով բերել է տալիս Ապրիսը և դնում է «Բաղտնիքի» մէջ։ Երգը թուրքերէն է և իսկոյն ցոյց է տալիս, որ Ղարաբաղցու արտագրութեամբ չի դրած գրքի մէջ, այլ մի մարդու, որ ծածկաստանի լեզուի ազդեցութեան տակ է եղիւ։ Այդ մարդը, ումի՞նչ է յայտնի, ինքը Մակար վարդապետն է. իր բոլոր աշխատութիւնների մէջ հայր սուրբը միշտ հետևել է սոսճիկ լեզուի կանոններին. և ինչպէս որ «Միրզա և Աննա» գրիկիս չի մտածել թէ Ղարաբաղցիք «Աէֆէրեան» չեն ասում, այլ Սափարեան, կամ «Սէնէմ»-ի տեղ Սանամ են ասում, այնպէս էլ Միսկին Բուրջիի երգը գնելիս նեղութիւն չի կրիլ հարցնել մէկից և իմանալ, որ զանձակեցին և դարաբաղըին երբէք չեն ասել «թէնէ» այլ «դանա»,

չին ասել յսէկիղ՝, այլ յսաքկիղ՝, յօվթալաբ՝
կասեն և ոչ թէ յտէօվթէլէբ՝. այսպէս և յթէփ-
մէ՝, յէրմէնլար՝ և այլն:

Այստեղ ի դէպ է ասել, որ բուն ժողովրդա-
կան տեսակէտից իշխան Մազաթովի անձնաւորու-
թիւնը և դործերը բոլորովին այն թիթե արժէքը
չունին, որ դուրս է բերած յԽամս. Մէլեք.՝ մէջ,
Հեաւաբար և յՊաղանիքում: Պ. Բաճիճին իբրև
Հեռաւոր ասորացի քննադատ, Մազաթովի դոր-
ծունէութիւնը բաւական ախուր է նկարագրում,
այն էլ համարեա լոկ հոգային խնդրի մէջ: Բայց
Մազաթովը միայն դա չէ: Այդ ժողովրդական Հե-
րոսը մի շատ զեղեցիկ յիշողութիւն է թողել
ժողովրդի մէջ թէ իր փայլուն յաղթութիւններով
և թէ վարչական ընդունակութիւններով. ժողովրդի
աչքում բաւական մեծ երեւոյւ համար բաւական
էր նրա հայ լինելը և այն նախանձելի բախտը,
որով նա ամենայն իրաւամբ հռչակուեցաւ իբրև
առաջին մարդ, որ կարողացել էր Ղարաբաղին
հանդիստ օր տալ և միանդամայն վերջ դնել այն
յուսահատ դրութեանը, որի մէջ տանջվում էր
ժողովուրդը տարիների ընթացքում: Ահա նրա ա-
մենամեծ ծառայութիւնը, որի առաջ, հաստատ
կարող ենք ասել, հոգային հարցը մոռացուած է:
Նոյն իսկ այդ հարցի կողմանէ, իշխանին դատա-
փետելը բաւական կանխահաս է, որովհետև դեռ

վերջնականապէս պարզուած չէ թէ Ղարաբաղի
խաները ի՞նչ իրաւունքով էին տիրում, արդեօք
հող իսկապէս չունէին, եթէ չունէին, ուրեմն էլ
ի՞նչ տեսակ իշխաններ էին: Բայց թողենք այս մի
այլ յարմար ժամանակի... Առ այժմ դեննք մի
հարց: Այդ հուժկու հերոսի ժամանակակիցները
կարո՞ղ էին արդեօք այնպիսի անաչառ քննադա-
տութեան տակ դնել Մադաթովի գործերը նոյն
իսկ հողային խնդրի վերաբերմամբ: Հաւատացած
ենք որ չէին կարող: Յերութիւնից աղատվողը
փրկանքի մասին ծանր ու բարակ սակարկութիւն-
ներ չի անի: Եւ բացի դրանից ժամանակակից
մարդը իր ժամանակի անսխալ քննադատը չէ, ա-
մեն մի ներկայի արժանի գնահատութիւնը ապա-
գայի ձեռին է: Այսպէս և Մադաթովի վերաբեր-
մամբ և այն ժողովրդական փիլիսոփաների վերա-
բերմամբ, որոնք ազատ գործում են ՝ Դադախլիքում:

Սէ, գլխով վերջանում է իսկական պատմու-
թիւնը և այնուհետև սկսվում է Աբրահամի և
Ապրիսի պատմութիւնը: Մենք տեսնեք թէ որքան
աղաւաղած, խառնած և աղճատած է առաջինը:
Իսկ երկրորդը մի անհատական մարդու մասնաւոր
պատմութիւն լինելով, որ ոչ ոքին չի յայտնի, որի
մասին մի ուրիշ յիշատակարան չը կայ, համեմա-
տութիւններով քննելու կարողութիւն չի տալիս:
Միայն առողջ դատողութիւնը և ենթադրութիւն-

ները երևան են հանում շատ անհիմն թանկեր: Օրինակ, Բաղդասար միաբայօլիտը յայանում է Արազամին թէ ինքը մտադիր է Ղարաբաղի անցկացնել վերաբերեալ բոլոր պատմական ձեռագիր յիշատակարանները տպագրել և խնդրում է ոգնել իրան: Արազամը, որ ծոցում ունի շատ յիշատակարաններ, ոչինչ չի ասում միաբայօլտին, բնդհակառակն պատուիրում է իր որդուն որ « Գաղանիք »-ի տպագրութիւնը յետաձգէ անորոշ ժամանակի:

Ինքը Արազամը մեռնում է բանաստեղծական հանդամանքների մէջ: Իր մօտ եկած խնածախցի հսկայ Փիլ-Առուշանին խնդրում է զինուորով իր զէնքերով տեսնում է այդպէս զինուորված, « հաւատամք » է ասում ու մեռնում: Ապրեսը բաց է անում հօր տուած ծրարը, որի մէջ ամենավտանգաւոր թղթեր կային կարած, բայց անգութ ճակատագիրը, որ կորցնել է տուել Մակար վարդապետի մօտ եղած բուն ձեռագիրը, այդտեղ էլ մի զարմանալի խաղ է խաղացել: Ապրեսը բաց է անում ծրարը, հանում է թղթերը, բայց ինչ զրութեան մէջ, քրտինքը թրջել լափել է թղթերը: Կորան: Ափսոս: Բայց Արազամը ինչո՞ւ չէր իր կենդանութեան ժամանակ զետեղել տալիս այդ թղթերը « Գաղանիքի » մէջ: Առաջ տեսնում էինք որ նա տեղն ու տեղը գրում է մասխաով իր ձեռը հասած բոլոր նամակները, ինչպէս Մակ-Քարի մօտ:

նոյնպէս տեսանք, որ Ղարաբաղից յաճախ նամակներ էր գրում որդուն, պատուիրելով գնել «Դաղտնիք»-ի մէջ: Ինչո՞ւ ուրիշն մինչև իր մահը ծոցում պահել էր այդ կարեւոր լռութիւնը, մանաւանդ որ «Դաղտնիք»-ը շոտ դաղտնի էր պահվում հօր և որդու մէջ և առանց այդ էլ բաւական վտանգաւոր բովանդակութիւն ունէր: Թող պատասխանէ Մակար Հայր սուրբը, բայց ոչ գիմելով ծառերի օգնութեանը, որոնք պատմութեան իսկութիւն չեն հաստատում:

«Դաղտնիք»-ի մասին Ապրիսը ոչինչ չի յայտնում և իր մտերիմ ընկերներին՝ Միրզա-Ուսուբին և Միրզա-Ֆարուխին: Ինչի՞ց է վախում, քանի որ նկարագրել է նրանց ազնիւ և դեղեցիկ բնաւորութիւնը, իրանց ամենամօտիկ յարաբերութիւնները: Նրեւի վախեցել է, որ եթէ նրանց յայտնէ, Մակար վարդապետը 1886 թուին չի կարող գեղեցկագոյն պատմութեան անունով գնել մեր առաջ մի մեծահատոր գիրք, որ դրուատում է չեղած հերոսներ, երևակայական պատերազմներ:

Ապրիսի Թաւրիզից դուրս գալը, մի քանի տասնեակ տարիների ծաճկահայաստանում թափառելը, Մակար Հայր սուրբի դռնով մտնելը, գիրքը նրան յանձնելը և դուրս գնալը խանդարուած երևակայութեան պտուղ լինելով, խօսքի առարկայ

չինք շինում, մանաւանդ որ մեր մամուլը այդ բո-
լորի մասին մի որոշ եզրակացութեան է հասել:

Դրքի վերջում դրած է Մէհտի խանի նամակը
Ափխազովին, թարգմանութիւնն ռուսերէնից: Ռու-
սերէնը ձեռքի տակ չունենալով, ըսում ենք և այդ
թարգմանութեան մասին:

Ահա վերջացաւ Քաղտնիք Ղարաբաղի»-ն:
Պարունակում է իր մէջ որ և է գաղտնիք:—Ո՛չ,
ամեն ինչ յայտնի է պատմութեանը: Իզուր է այս
խորհրդաւոր անունը...

Մի բոպէ Լեյթադրենք, թէ զա ճիշդ որ մի
ձեռագրից է թարգմանած: Մակար վարդապետը
Խնչպէս է վարուել այդ բնագրի հետ:—Ձրտեղ է,
պակասացնելով և աւելացնելով, կը պատասխա-
նենք մենք: Զը գիտենք թէ ինչպէս եղած պիտի
լինի թարգմանելու ժամանակ, բայց անցեալ տարի
պ. Հայկունու տեսած օրերից մինչև տպագրելը
մեծ փոփոխութիւններ են մտել դրքի մէջ:
Մենք յոյց կը տանք այդ փոփոխութիւնները, հա-
մեմատելով այժմեան «Քաղտնիք»-ը «Մեղու»-ի մէջ
տպած բովանդակութեան հետ:

«Մեղու»-ի № 63 (1885 թ.) կարդում ենք
թէ Թ. զլխում նկարագրած է Դանձակի «տիրիւլ»
համար Բուռնաշովի և հայ մելիքաց ու զօրաց
մղած պատերազմը: Տպագրած «Քաղտնիք»-ի այդ


գլխում չը կայ պատերազմը: Ժ. գլխում ծպտեալ
Պըլը-Պուղին իբրև Մելիք-Նահապար գաղտնի խոր-
հուրդ է կազմում Իբրահիմ խանի հետ, յետոյ դը-
նում է յայտնում Աբրահամին: Տպած օրինակում,
ինչպէս տեսանք, այդ բոլոր գործողութիւնը վերա-
գրած է Նէյթան-Թիւնուն: Ժ. գլխում դրած պի-
տի լինի «նրանց (մելիքների) գրած նամակը Աղա-
Մահմադ-Խանի»: Զը կայ: «Նկարագրում է Բէկնա-
ղարեանցի (և մելիքների) այնտեղ (Զրաբերդում)
կազմուած խորհրդի որոշմունքը Գանձասարի կա-
թողիկոսին (Սարգիս Կախկոպոսին) հանդիսաւոր
կերպով հէնց Գանձակի միջին օժկու համար»: Տպածում
ամենեւին չը կայ այսպիսի նկարագրու-
թիւն: Այդ «պուխը վերջանում է Իբրահիմ խանի
գաղտնի գործողութեանց նկարագրութեամբ» և
այլն: Տպած գլխի վերջում այդպիսի բան չը կայ:

Ժ. գլխում Բէկնաղարեանցը մի քանի լու-
տեսներով գիշերոյն մանում է բերդը: Տեսակցում
և խորհրդակցում է այնտեղ եղող հայ մելիքների
(Աբովի և Զումշուտի) հետ: Գործը կարգի ձգում
(«Մեղու» № 67): Այս էլ չը կայ տպածում:—Մանր
զանազանութիւնները թողում ենք:

Պարզ է ուրեմն, որ Մակար վարդապետը շատ
է խառնել իր «Գաղտնիք»-ը: Բայց արդեօք եղի՞լ
է բնագիր, որ կարողանար այդպէս խառնել:—Եղել
է: Բայց, ընթերցող, խոստովանք լինի մեր մէջ, այդ

Քնադիրը ոչ թէ Ասորեսի ձեռագիրն է, այլ...
 «Թամասայի Մէլիքութիւնները»: Չաղտնիքից՝ դուրս
 ձգեցէք Չամա. Մէլիք» բովանդակութիւնը, կը
 ստանաք մի խառնափնտոր և անշնորհք առաս-
 պիւն ինաճախցի հսկաների մասին:

19 սեպտեմբերի 1886 թ.



[3 n.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0059246

ЦЕНА h. p.

AT

16975